ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ԱՊՐԻԼ 2012

Լուսոնա

Նրա զարմանալի շնորհը, էջեր 10, 12

Ինչո՞ւ համար է սեմինարիան, էջեր 20, 46, 48

Ծնողներ, ժամանակ գտեք խոսելու ձեր երեխաների հետ, էջ 34

Երեխաներ, խոսեք ձեր ծնողների հետ, էջ 58

ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ՄԻՆԵՍՊՈԼԻՍԻ ՄԻՆԵՍՈՏԱ, ԱՄՆ) ՄՈՒԵՍՏ ԻՍՏՐՈՏՈՏԵ, ՊՈՏՏԵԼ ԴԱՆԱ ՍԱՔՄԻԼԱՏ ՖՈՏՈ, ԲԱՑՄԱՑՈՒՄՆ ԱՊՁԵԼԱՎՈՒՄ Է

Սուրբ Պետրոսի ուրացումը, Ջերիթ վան Հոնթորստ

«Մի աղախին տեսնելով նորան՝ լույսի
մոտ նստած, դիտեց նորա վերայ և ասեց. Սա էլ նորա հետ էր:
Բայց նա ուրացավ և ասեց. Ով կին, ես նորան չգիտեմ:
Եվ քիչ մի հետոյ ուրիշը տեսավ նորան և ասեց. Դու էլ նորանցից ես.
Պետրոսն էլ ասեց. Ով մարդ, չեմ:
Եվ . . . մեկ ուրիշը վիճում էր և ասում. Ճշմարիտ որ սա էլ նորա հետ էր . . .
Պետրոսն էլ ասեց. Մարդ, ես չգիտեմ, թե դու ինչ ես ասում. Եվ իսկույն . . . հավը խոսեց: . . .
Եվ Պետրոսը դուրս գնաց դառնապես լացավ» (Ղուկաս 22.56–60, 62):

Լիահոնա, Ապրիլ 2012



ՈՒՂԵՐՁՆԵՐ

4 **Առաջին Նախագահության Ուղերձ: Նա հարություն առավ՝ Մարգարեի վկայությունը**
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

7 **Այցելող Ուսուցիչների Ուղերձ: Սիրեք, հետևեք և ամրացրեք**

ԸՆՏՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

12 **Քավությունը և մահկանացու ճամփորդությունը**
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Ինչպես է Քավությունն ամրացնում մեզ, որպեսզի անենք լավը և լինենք լավը և ծառայենք՝ մեր ցանկությունից և կարողությունից վեր:

20 **Սեմինարիայի օրհնությունները**
Բրիթանի Բիթի
Աշխարհի երիտասարդները պատմում են, ինչպես է սեմինարիան օգնում իրենց գալ դեպի Քրիստոսը:

26 **Կոչում նորադարձի համար**
Հելենա Հաննոնեն

30 **Ծխի խորհուրդները գործի մեջ**
Լառեն Գանտ
Ովքե՞ր են մտնում ծխի խորհրդի կազմի մեջ և ինչ նրանք պետք է կատարեն:

ԲԱԺԻՆՆԵՐ

8 **Ապրիլի համաժողովի գրառումներ: Ավելին ստանալ գերագույն համաժողովից**
Մայքլ Բարբեր և Դեյվիդ Մարշ

10 **Մենք խոսում ենք Քրիստոսի մասին: Զարմանալի շնորհ**
Քրիսթեն Նիկոլ Քարդոն

34 **Մեր տները, մեր ընտանիքները: Ժամանակ տրամադրել խոսելուն և լսելուն**
Ռոզմարի Մ. Վիքսոմ

38 **Վերջին Օրերի Սրբերի ձայները**

74 **Եկեղեցու նորությունները**

79 **Մտքեր ընտանեկան երեկոյի համար**

80 **Մինչև նոր հանդիպում: Հույս Քավության համար**
Եպիսկոպոս Ռիչարդ Ս. Էդգլի

ԿԱՋՄԻ ՎՐԱ
Առջևում. *Մի դիպչիր ինձ,* Միներվա Թեյչերտ, տրամադրել է Բրիգամ Յանգ Համալսարանի Արվեստի թանգարանը: Ետևում. հատված *Նայեք իմ ձեռքերը* կտավից, Ջեֆ Վորդ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՉԱՓԱՀԱՍՆԵՐ



42 **Բոլորը գիտեն Բլեքին**
Ադամ Ս. Օլսոն
Բասկետբոլի հանդեպ Բլեքի սերը եղել է և քննություն, և օրհնություն:

Տեսեք, թե կարող եք գտնել այս համարում թաքնված Լիահոնան: Հուշում. ընտրեք ճիշտ էջը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

46 **Հարցեր և պատասխաններ**
«Ինչու ես պետք է գնամ սեմինարիա, եթե ես կարող եմ սովորել սուրբ գրությունները ինքնուրույն»:

48 **Ինչո՞ւ համար է սեմինարիան:**
Յոթ մարգարե խոսում են սեմինարիայի օրհնությունների մասին:

50 **Սեմինարիան էկվադորի ջունգլիներում:**
Ջոշուա Ջ. Փերքի
Ինչպես վերջերս մկրտված-ների նոր ճյուղում սեմինարիան երիտասարդներին լցրեց վկայությամբ, գիտելիքով և հավատքով:

52 **Ի՞նչ է գալիս սեմինարիայից հետո:**
Դեյվիդ Ա. Էդվարդս
Միա ինստիտուտի ձեր իրավերը:

53 **Տող առ տող: Բ Տիմոթեոս Գ.16–17**

54 **Մի խափանվեք**
Ադամ Ս. Օլսոն
Այժմյա մի փոքր խնամքը և նախապատրաստությունը կարող են ապագայում մեծ խնդիրներ կանխել:

57 **Պաստառ: Տարվել սուրբ գրություններով**

ԵՐԵԽԱՆԵՐ



58 **Խոսելու ժամանակը**
Հիլարի Վոթկինս Լեմոն
Ջոսին տխուր էր նրա համար, ինչ պատահել էր դպրոցում, սակայն խոսելով այդ մասին, նա իրեն ավելի լավ զգաց:

61 **Նա կոտրեց մահվան կապանքները**
Երեց Պատրիկ Քիրոն
Փրկիչը մահացավ և հարություն առավ, որպեսզի մենք կրկին կարողանանք ապրել մեր Երկնային Հոր և մեր ընտանիքների հետ:

62 **Տուն բերենք Երեխաների խմբի դասը: Հիսուս Քրիստոսը ինձ սովորեցնում է ընտրել ճիշտը**

64 **Երգ: Փորձում եմ լինել Հիսուսի նման**
Ջենիս Քափ Փերի

66 **Քույրեր՝ անունով և հավատքով**

68 **Հատուկ վկա: Ի՞նչ ես կարող են անել, որպեսզի հետևեմ ինձ համար Երկնային Հոր ծրագրին:**
Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

69 **Իմ Ավետարանի չափանիշները**

70 **Փոքր երեխաների համար**

81 **Մորմոնի Գրքի կերպարները**

ԱՊՐԻԼ 2012 ՀԱՏ. 13 Հ. 1
ԼԻԱՀՈՆԱ 10484 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ս. Մոնսոն, Հենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Տասներկու Առաքյալների Քվորում. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ջոզեֆ Բ. Վիրթլին, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քուենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն

Խմբագիր. Փոլ Բ. Փիփեր
Խորհրդատուներ. Ջեյթ Ռ. Էդվարդս, Քրիստոֆել Գոլդեն Կրտս., Փեր Գ. Մալմ

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Լ. Ֆրիշկնեխթ
Խմբագրական տնօրեն. Վինսենթ Ա. Վոն
Գրաֆիկայի տնօրեն. Ալլան Ռ. Լոյբորգ

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն
Գլխավոր խմբագրի օգնականներ. Ջենիֆեր Լ. Գրինվուդ, Աղամ Ս. Օլսոն
Համախմբագրեր. Սյուզան Բարեթ, Ռայան Քար
Խմբագրական կազմ. Բրիթանի Բիթլ, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Լառեն Պորտեր Գանտ, Քերի Կաստեն, Ջենիֆեր Մեդի, Լիա ՄակՔանահան, Մելիսա Մերիլ, Մայքլ Ռ. Մորիս, Սալի Ջ. Օդեկիրկ, Ջոշուա Ջ. Փերկի, Չադ Ե. Փարես, Յան Ֆինբորոու, Փոլ Վանդենբերգ, Մարիսա Ա. Վիդիսոն, Մելիսսա Զենտենո

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն
Արվեստի գծով տնօրեն. Սքոթ Վան Քեմփեն
Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս
Գլխավոր դիզայներներ. Ս. Քիմբալ Բոթ, Քոլին Հինքլի, Էրիկ Պ. Ջոնսեն, Սքոթ Մ. Մույ
Հրատարակչության կազմ. Քոլեթ Նեբեկեր Օն, Քոնին Բոթորփ Բրիջ, Հովարդ Գ. Բրաուն, Ջուլի Բարոնեթ, Բրայան Վ. Գիջի, Քեթլին Հովարդ, Դենիս Քըրբի, Ջինի Ջ. Նիլսոն, Գեյլ Թեյթ Ռաֆերթի
Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Քրեյգ Կ. Սեջվիկ
Բաշխման տնօրեն. Էվան Լարսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար կապվեք եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոնի կամ ժխի/ցյուղի ղեկավարի հետ:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liahona*, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թայերեն, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատվիերեն, լեհերեն, լիտվերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորերեն, հաիթերեն, հայերեն, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամորեն, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբեր է ըստ լեզուների:)

© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և նկարները կարելի է պատճենահանել առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար: Նկարները չի կարելի պատճենահանել, եթե սահմանափակումներ են նշված նկարի ներդիրում: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada:
April 2012 Vol. 13 No. 1. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address *must* be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send address changes to Salt Lake Distribution Center, Church Magazines, PO Box 26368, Salt Lake City, UT 84126-0368.

Ավելին՝ առցանց Liahona.lds.org

ՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս համարում կան հոդվածներ, որոնք ուսուցանում և վկայում են Փրկչի մասին: Ավելին սովորեք Նրա մասին **JesusChrist.lds.org** կայքում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս համարում կան հոդվածներ սեմինարիայի օրհնությունների մասին (տես էջեր 20–25 և 46–53): Ավելին սովորելու համար այցելեք՝ **seminary.lds.org:**

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Փորձում եմ լինել Հիսուսի նման» երգը լսելու համար (տես էջեր 64–65), այցելեք **liahona.lds.org:**

ԱՅՍ ՀԱՄԱՐԻ ԹԵՄԱՆԵՐԸ

Համարները ցույց են տալիս հոդվածի առաջին էջը:

Աղոթք, *41*
Գերագույն համաժողով, *8*
Եկեղեցու կոչումներ, *26, 30*
Երգ, *26, 64*
Ընտանիք, *34, 42, 58, 66*
Ինստիտուտ, *52*
Խորհրդներ, *30*
Հաղորդակցում, *34, 58*
Հարություն, *4, 61, 62, 70*
Հիսուս Քրիստոս, *4, 10, 12, 61, 64, 70*
Հնազանդություն, *54*
Հույս, *80*
Միսիոներական աշխատանք, *42*
Մորմոնի Գիրք, *38*
Նախապատրաստություն, *54*
Շնորհ, *10, 12*
Ոգեշնչում, *39, 40*
Չափանիշներ, *69*
Սեմինարիա, *20, 46, 48, 50*
Սուրբ գրությունների ուսումնասիրություն, *53, 57, 68*
Քավություն, *4, 12, 61, 62, 80*

ՁԵՐ ԼԵԶՎՈՎ

Լիահոնան և Եկեղեցու այլ նյութերը տարբեր լեզուներով մատչելի են **www.languages.lds.org** կայքում:

Նախագահ
Թոմաս Ս. Մոնսոն

Նա հարություն առավ

ՄԱՐԳԱՐԵԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Քրիստոնեա աշխարհի շեփորի կանչը» Նախագահը Թոմաս Ս. Մոնսոնը անվանել է մահացածներից Հիսուս Նազովրեցու հարությունը: «Հարության իրականությունը բոլորին անհրաժեշտ խաղաղություն է պարգևում» (տես Փիլիպպեցիս 4:7):[1]

Հետևյալ հատվածներում Նախագահ Մոնսոնը կիսվում է իր վկայությամբ և երախտագիտությամբ Փրկչի Հարության համար, և հայտարարում է, որ քանի որ Որդին հաղթել է մահը, Հոր բոլոր զավակները, ովքեր կգան երկիր, կրկին կապրեն:

Կյանք մահից հետո

«Ես համոզված եմ, որ մեզանից ոչ մեկը չի կարող լիարժեք ընկալել նրա կարևորությունը, ինչ Քրիստոսն արեց մեզ համար Գեթսեմանում, սակայն ես շնորհակալ եմ իմ կյանքի յուրաքանչյուր օրը Նրա քավող զոհաբերության համար:

Վերջին պահին Նա կարող է հրաժարվել: Սակայն Նա դա չարեց: Նա իջավ բոլոր բաներից ներքև, որպեսզի կարողանար փրկել բոլոր բաները: Դա անելով, Նա մեզ պարգևեց կյանք այս մահկանացու գոյությունից հետո: Նա փրկագնեց մեզ Ադամի Անկումից:

Իմ հոգու խորքից ես շնորհակալ եմ Նրան: Նա մեզ սովորեցրեց, ինչպես պետք է ապրել: Նա մեզ սովորեցրեց, ինչպես պետք է մահանալ: Նա ապահովեց մեր փրկությունը:[2]

Մահվան խավարը վերացնելը

«Որոշ պայմաններում՝ մեծ տառապանքների և հիվանդության ժամանակ, մահը գալիս է որպես որդորման հրեշտակ: Սակայն, հիմնականում, մենք մտածում ենք մահվան մասին որպես մարդկային երջանկության թշնամու:

Մահվան խավարը կարող է վերանալ միայն հայտնված ճշմարտության լույսի շնորհիվ: «Ես եմ հարությունը և կեանքը. Ինձ հավատացողը թեև մեռնի էլ, կապրի», - ասել է Վարդապետը:

Մահից հետո կյանքի այս հավաստիացումը, այո՝ սուրբ հաստատումը, մեծ հանգստություն է պարգևում, որը խոստացավ Փրկիչը Իր աշակերտներին. «Խաղաղություն եմ թողում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. Ոչ թե ինչպես աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. ձեր սիրտը չխռովի և չվախենա»:[3]

Նա այստեղ չէ

«Մեր Փրկիչը կրկին ապրեց: Մարդկային պատմության առավել փառահեղ, մխիթարող և հաստատող իրադարձությունը տեղի ունեցավ, երբ մահը հաղթվեց: Գեթսեմանի և Գողգոթի ցավը և տանջանքները սրբվեցին: Մարդկության փրկությունը ապահովված էր: Ադամի Անկման վարձը վճարված էր:

Զատկի այդ առավոտ դատարկ գերեզմանը Հորի հարցի պատասխանը եղավ. Իմ ձայնի ողջ զորությամբ ես հայտարարում եմ, որ մարդն թեև մեռնի էլ, կապրի: Մենք գիտենք, քանզի մենք ունենք հայտնությամբ տրված ճշմարտության լույսը: . . .

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, խոր վշտի մեր ժամին, մենք կարող ենք մեծ հանգստություն ստանալ հրեշտակի խոսքերից, որն Զատկի այդ առավոտ հռչակեց. «Նա այստեղ չէ, որովհետև հարություն առավ»:[4]

Բոլորը կրկին կապրեն

«Մենք ծիծաղում ենք, մենք լաց ենք լինում, մենք աշխատում ենք, մենք սիրում են, մենք ապրում ենք: Այնուհետև մենք մահանում ենք: . . .

Եվ այդպես էլ մահացած կմնայինք, եթե չլիներ մի Մարդ՝ Հիսուս Նազովրեցին և Նրա առաքելությունը: . . .

Իմ ողջ սրտով և հոգուս ողջ կորովով ես բարձրացնում եմ իմ վկայության ձայնը՝ որպես հատուկ վկա և

ԿԱՍԿԱԾՈՂ ԹԱՐԳՄԱՆԸ, ՔԱՂ ՀԵՏՆՐԻՍ ԲԼՈՆ



հայտարարում եմ, որ Աստված ապրում է: Հիսուսը Նրա Որդին է, մարմնի մեջ Հոր Միածինը: Նա մեր Քավիչն է, Նա մեր և Հոր միջև մեր Միջնորդն է: Նա էր, որ մահացավ խաչի վրա մեր մեղքերը քավելու համար: Նա դարձավ Հարության առաջին պտուղը: Որովհետև Նա մահացավ, մենք կրկին կապրենք»:[5]

Անձնական վկայություն

«Ես հայտարարում եմ իմ անձնական վկայությունն այն մասին, որ մահը հաղթվել է, գերեզմանի վրա հաղթանակ է տարվել: Թող որ խոսքերը սրբացվեն Նրա կողմից, ով դրանք իրական գիտելիք դարձրեց բոլորի համար: Հիշեք դրանք: Փայփայեք դրանք: Պատվեք դրանք: *Նա հարություն առավ*»:[6] ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Նա հարություն առավ», *Լիահոնա,* ապրիլ 2003, 7:
2. «Բաժանվելով», *Լիահոնա,* մայիս 2011, 114:
3. «Այժմ է ժամանակը», *Լիահոնա,* հունվար 2002, 68; տես նաև Հովհաննես 11.25–26; 14.27:
4. «Նա հարություն առավ», *Լիահոնա,* մայիս 2010, 89, 90; տես նաև Յոբ 14.14; Մատթեոս 28.6:
5. «Գիտեմ ապրում է Փրկիչն իմ», *Լիահոնա,* մայիս 2007, 24-25:
6. *Լիահոնա,* ապրիլ 2003, 7:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Նախագահ Մոնսոնի ուղերձից հատվածներով կիսվելուց հետո, նշեք այն վկայությունը, որը նա բերում է Զատկի իրական նշանակության մասին: Դուք կարող եք ընտանիքի անդամներին տալ հետևյալ հարցերը. «Ի՞նչ նշանակություն ունի ձեզ համար այն, որ կենդանի մարգարեն վկայում է այս ճշմարտությունների մասին այսօր: Ինչպե՞ս դուք կարող եք կիրառել դրանք ձեր կյանքում»: Կարող եք ավելացնել ձեր վկայությունը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Ես կրկին կտեսնեմ Նրան

Մորգան Վեբեք

Հայրիկն այնպես էր անում, որ մենք՝ երեխաներս, յուրաքանչյուրս մեզ հատուկ զգայինք: Նա սիրում էր մեզ և հեշտությամբ ներում: Նա անում էր, ինչ կարող էր, որպեսզի յուրաքանչյուրս իրեն երջանիկ զգար, և նա աշխատում էր, որ մեզ պարզ լիներ, որ նա մեզ համար լավագույնն էր ցանկանում: Ես նրան շատ էի սիրում:

Երբ ես վեցերորդ դասարանում էի, հայրս մահացավ ավտովթարից: Իմ ընտանիքը և ես ամբողջովին տարահատված էինք: Մեծ դատարկություն կար մեր ընտանիքում: Հայրիկն էր այն մարդը, որին ես դիմում էի, երբ սատարման կարիք ունեի, որի մոտ գնում էի, երբ խնդիրներ ունեի: Օգնություն փնտրելու փոխարեն, ես թույլ տվեցի, որ բարկությունը և ցավը մնային ինձ հետ: Ի վերջո, ես որոշեցի, որ դա Աստծո սխալն էր: Ես դադարեցի կարդալ իմ սուրբ գրությունները և ասել իմ աղոթքները: Ես գնում էի եկեղեցի միայն, որովհետև մայրիկն էր այդպես ցանկանում: Ես աշխատում էի հեռու մնալ իմ Երկնային Հորից:

Այնուհետև, մի օր առաջին անգամ ես գնացի Երիտասարդ Կանանց ճամբար: Ինձ դուր էր գալիս նոր ընկերների հանդիպելը, սակայն ես, մինույն է, չէի կարդում սուրբ գրությունները: Վերջին երեկոն էր և մենք վկայության ժողով էինք անցկացնում: Ես զգացի մի բան, որը չէի զգացել շատ երկար ժամանակ՝ Սուրբ Հոգին: Ես հիանում էր աղջիկներով, որոնք կանգնում էին և բերում իրենց վկայությունները, սակայն ես նստած էի, քանի որ կարծում էի, որ չունեմ վկայություն: Հանկարծ, ես զգացի, որ պետք է վեր կենամ: Ես բացեցի իմ բերանը, մտածելով, թե ինչ պետք է ասեմ: Եվ ես ասացի, որ ուրախ էի Երիտասարդ Կանանց ճամբարի համար: Ապա, անսպասելիորեն, ես ասացի, որ գիտեի, որ Հիսուս Քրիստոսը մահացել է ինձ համար և որ իմ Երկնային Հայրը սիրում է ինձ և որ Եկեղեցին ճշմարիտ է:

Ես լցվեցի աննկարագրելի խաղաղությամբ: Այդ փորձառությամբ ես կարող եմ ասել, որ գիտեմ, որ նորից կտեսնեմ հայրիկիս՝ Փրկչի Քավության և Հարության շնորհիվ:

ԵՐԵԽԱՆԵՐ

Նա ապրում է

Նախագահ Մոնսոնը ուսուցանում է, որ որովհետև Հիսուս Քրիստոսը մահացավ և հարություն առավ, մենք բոլորս կրկին կապրենք: Նայեք ստորև բերված նկարներին: Յուրաքանչյուր վանդակում մի համար գրեք, ցույց տալով այդ իրադարձությունների հերթականությունը:

Որովհետև Հիսուս Քրիստոսն ապրում է, ընտանիքները ընդմիշտ կարող են միասին լինել: Ստորև տրված վանդակում նկարեք ձեր ընտանիքին:

ՆԱՄՈՒՇԵՐԸ՝ ՍԹԻՎ ՔՐՈՒՔԻ ԿՈՂՄԻՑ

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում դուք այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և Սփոփող Միությունը դարձնել ձեր սեփական կյանքի ակտիվ մասը:

Սիրեք, հետևեք և ամրացրեք

Ինչպես Փրկիչը, այցելող ուսուցիչները ծառայում են մեկ առ մեկ (տես 3 Նեփի 11.15): Մենք գիտենք, որ հաջող այցելող ուսուցիչներ ենք, երբ մեր քույրերն ասում են. (1) իմ այցելող ուսուցիչն օգնում է ինձ հոգեպես աճել; (2) ես գիտեմ, որ իմ այցելող ուսուցիչը խորապես մտածում է իմ և իմ ընտանիքի մասին; և (3) եթե ես խնդիրներ ունենամ, ես գիտեմ, որ իմ այցելող ուսուցիչը չի սպասի մինչև իրեն հարցնեն, այլ կանցնի գործի:[1]

Ինչպե՞ս մենք կարող ենք որպես այցելող ուսուցիչներ սիրել, հետևել և ամրացնել քույրերին: Ստորև տրվում են ինը առաջարկություններ, որոնք գտնվում են *Իմ արքայության դուստրերը. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը* գրքի գլուխ 7-ում, որոնք կարող են օգնել այցելող ուսուցիչներին ծառայել իրենց քույրերին.

- մեն օր աղոթեք նրա և նրա ընտանիքի համար:
- Ոգեշնչում փնտրեք, որպեսզի ճանաչեք նրան և նրա ընտանիքին:
- Կանոնավոր այցելեք նրան, իմանալու համար, թե ինչ է նա անում, և սփոփելու և ամրացնելու նրան:
- Հաճախակի կապի մեջ եղեք՝ այցելությունների, հեռախոսազանգերի, նամակների, է-նամակների, տեքստային հաղորդագրությունների և բարության հասարակ գործերի միջոցով:
- Դիմավորեք նրան Եկեղեցու ժողովներին:
- Օգնեք նրան, երբ նա ծայրահեղ վիճակում է, հիվանդ է կամ որևէ այլ կարիք ունի:
- Ուսուցանեք նրան ավետարանը սուրբ գրություններից և Այցելող Ուսուցիչների ուղերձներից:
- Ոգեշնչեք նրան, լինելով լավ օրինակ:

- Տեղեկացրեք Սփոփող Միության ղեկավարին նրանց ծառայության և քրոջ հոգևոր և նյութական բարեկեցության մասին:

Սուրբ գրություններից

Ղուկաս 10.38–39; 3 Նեփի 11.23–26; 27.21

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Julie B. Beck, "What I Hope My Granddaughters (and Grandsons) Will Understand about Relief Society," *Liahona,* Nov. 2011, 113:
2. Տես *Իմ արքայության դուստրերը. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը* (2011), 112:
3. *Իմ արքայության դուստրերը,* 119-20
4. Brigham Young, "Remarks," *Deseret News,* Oct. 15, 1856, 252.
5. Տես *Իմ արքայության դուստրերը,* 36–37:

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ինչպե՞ս ես կարող եմ իմանալ, թե ինչի կարիք ունեն իմ քույրերը:

2. Ինչպե՞ս իմ քույրերը կիմանան, որ ես խորապես մտահոգված եմ իրենց համար:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Մեր պատմությունից

«Այցելող ուսուցումը դարձել է աշխարհով մեկ Վերջին Օրերի Սրբերի գործիքը՝ սիրելու, սնելու և ծառայելու համար՝ գործելու համաձայն այն կարեկցանքի, որն Աստված սերանել է մեր մեջ, ինչպես ուսուցանել է Ջոզեֆ Սմիթը»:[2]

Մի քույր, որը վերջերս այրի է դարձել, այսպես է ասում իր այցելող ուսուցիչների մասին. «Նրանք լսեցին ինձ: Նրանք մխիթարեցին ինձ: Նրանք լաց եղան ինձ հետ: Եվ նրանք գրկեցին ինձ: . . . [Նրանք] օգնեցին ինձ իմ խորին հուսահատության և ճնշվածության պահին՝ միայնակության իմ այդ առաջին ամիսների ընթացքում»:[3]

Նյութական հարցերով օգնելը նույնպես ծառայության ձև է: 1856թ. հոկտեմբերի գերագույն համաժողովին Նախագահ Բրիգամ Յանգը հայտարարեց, որ պիոներները մնացել են խորը ձյան մեջ՝ 435–595 կմ հեռու: Նա կոչ արեց Սոլթ Լեյք Սիթիում բոլոր Սրբերին փրկել նրանց և խստորեն հոգալ այն կարիքների մասին, որոնք մենք նյութական ենք կոչում:[4]

Լյուսի Մեզերվ Սմիթը գրում է, որ կանայք հանեցին իրենց տաք ներքնազգեստը և գուլպաները հենց թաբերնաքլում, լցրեցին դրանք սայլակների մեջ՝ սառչող պիոներներին ուղարկելու համար: Այնուհետև նրանք հավաքեցին անկողին և հագուստ նրանց համար, ովքեր ի վերջո կգային հետ իրենց սակավ իրերով: Երբ ձեռնասայլակները ժամանեցին, քաղաքում մի ամբողջ շենք լցված էր նրանց սպասող պաշարով:[5]

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

ՄԵԿ ԱՄ ՄԵԿ, ՎՈՂԵՐ ՈՒՆԻ, ՏՐՍՄՄՈՐԵԼ Է ԵՎԵՐԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԹԱՆԳԱՐՄԱՆԸ

Ապրիլի համաժողովի գրառումներ

«Ինչ որ ես՝ Տերս, ասել եմ, ես եմ ասել, . . . լինի դա իմ իսկ ձայնով, թե իմ ծառաների ձայնով՝ միևնույն է» (ՎԿՈՒ 1.38):

Ստանալ ավելին գերագույն համաժողովից

Մայքլ Բարբեր և Դեյվիդ Մարշ
Ուսումնական Ծրագրերի բաժին

Թեև մենք ասում ենք «ամեն» գերագույն համաժողովի վերջին նիստի ավարտին, հոգևոր սնուցումը չի ավարտվում դրանով: Այն կարող է շարունակվել, եթե մենք ուսումնասիրենք և կիրառենք այդ համաժողովի ուսմունքները: Տարիների ընթացքում մարգարեները մեզ խրախուսել են անել հենց դա: Օրինակ, 1946թ. Նախագահ Հարոլդ Բ. Լին (1899–1973) անդամներին կոչ արեց թույլ տալ, որպեսզի համաժողովների ելույթները լինեն իրենց առաջնորդները, երբ կքայլեն և կխոսեն հաջորդ վեց ամիսների ընթացքում: Նա բացատրեց. «Կան կարևոր հարցեր, որոնք ըստ Տիրոջ պետք է հայտնվեն այս ժողովրդին այս օրերին»:[1]

1988թ. Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը (1899–1994) կրկնել է այդ խորհուրդը, երբ ուսուցանել է. «Հաջորդ վեց ամիսների ընթացքում *Ensign*-ի համաժողովի համարը պետք է լինի ձեր սուրբ գրությունների կողքին և հաճախ օգտագործվի»:[2]

Փակելով 2008թ. գերագույն համաժողովը, Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը վերահաստատեց համաժողովի ելույթները ուսումնասիրելու կարևորությունը: Նա ասաց. «Թող որ մենք երկար հիշենք այն, ինչ լսեցինք այս գերագույն համաժողովի ժամանակ: Ուղերձները, որոնք հնչեցին, կտպագրվեն հաջորդ ամիս *Ensign* և *Լիահոնա* ամսագրերում: Ես կոչ եմ անում ձեզ ուսումնասիրել դրանք և խորհել այդ ուսմունքների շուրջ»:[3]

Համաժողովի ուղերձները ուսումնասիրելով և դրանց շուրջը խորհելով, ի՞նչ դուք կարող եք անել, որպեսզի դարձնեք դրանք իմաստալից ձեր կյանքում: Ահա մի քանի առաջարկություն, որոնք

կօգնեն ձեզ պատրաստվել, ստանալ և կիրառել ոգեշնչված խոսքերը.

Պատրաստվեք ստանալ ոգեշնչում: Անկախ նրանից, թե դիտում եք, լսում կամ կարդում համաժողովի ելույթները, դուք պետք է բացեք ձեր սիրտը և միտքը աստվածային ոգեշնչման համար: Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է, որ կարևոր չէ, թե որքան արդյունավետ է ուսուցանում խոսնակը, «ուղերձի բովանդակությունը և Սուրբ Հոգու վկայությունը թափանցում են սրտի մեջ միայն, երբ լսողը թույլ է տալիս դա»: Նա բացատրել է, որ ոգեշնչում ստանալը «պահանջում է հոգևոր, մտավոր և ֆիզիկական ներթափանցում, ոչ թե պարզապես պասսիվ ընդունում»:[4]

Հետևյալ մտքերը կօգնեն ձեզ պատրաստվել Հոգով ուսուցանվելուն.

1. Որոշակի ժամանակ հատկացրեք և ստեղծեք մի միջավայր, որտեղ ձեզ ոչինչ չի խանգարի, որպեսզի դուք ստանաք հոգևոր հուշումներ:
2. Փնտրեք աստվածային առաջնորդություն աղոթքի միջոցով:
3. Թվարկեք անձնական հարցերը կամ մտահոգությունները, որոնց համար դուք պատասխաններ եք փնտրում:

Հասկացեք ուղերձները: Կենդանի մարգարեները և առաքյալները ուսուցանում, բացատրում, հորդորում, նախազգուշացնում և վկայում են: Նրանց ելույթները ուշադիր ուսումնասիրելը կօգնի ձեզ ավելի լիարժեք հասկանալ նրանց ուղերձները: Ահա ուսումնասիրության մի քանի արդյունավետ եղանակ.

- *Հարցեր տվեք:* Օրինակ. Ի՞նչ է Տերը ցանկանում, որ ես սովորեմ այս ուղերձից: Ինչպե՞ս է այս ուղերձը օգնում ինձ ավելի խորը հասկանալ սուրբ գրության սկզբունքը կամ հատվածը: Ի՞նչ պատմություններ են օգտագործվում՝ ավետարանի սկզբունքները ցուցադրելու համար, և ի՞նչ եմ ես դրանցից սովորում:
- *Գրեք ելույթի կարևոր կետերը:* Ուշադրություն դարձրեք, թե որոնք են խոսնակի կարևոր կետերը: Ելույթը բաժանեք մասերի և գրեք ամփոփում, որը բացատրում է յուրաքանչյուր մասի հիմնական գաղափարը:
- *Գտեք ելույթի տարբեր տարրերը:* Գրառումներ կատարեք վարդապետությունների, սուրբ գրությունների, պատմությունների, նախազգուշացումների, ցանկերի, վկայությունների, գործի կոչ անող հրավերների և խորհրդին հնազանդվելու արդյունքում տրվող օրհնությունների մասին:
- *Ուսումնասիրեք ելույթը մեկից ավելի անգամ:* Եթե անհրաժեշտ է, ավելի շատ ուսումնասիրեք ավետարանի ճշմարտությունները, որպեսզի ընկալեք դրանց լիարժեք նշանակությունը և կարևորությունը: Ամեն անգամ ուսումնասիրելիս, գրի առեք այն նոր մտքերը, որոնք ձեզ մոտ առաջանում են:

Կիրառեք այն, ինչ սովորել եք: Եթե աղոթքով ուսումնասիրեք ելույթները, կտեսնեք, թե ինչպես կիրառել դրանք ձեր կյանքում: Դուք կարող եք իմանալ, ինչպես իմաստալից փոփոխություններ կատարել, տալով հետևյալ հարցերը. Ի՞նչ է Տերը ցանկանում, որ ես անեմ իմ սովորածի հետ: Ինչպե՞ս իմ սովորածը կարող է օգնել ինձ իմ ընտանիքում, աշխատանքում կամ Եկեղեցու կոչումներում: Գրի առեք այն տպավորությունները, որոնք ունեցել եք, որպեսզի չմոռանաք դրանք: Այդպես դուք ոգեշնչված կլինեք ապրելու ըստ ուսմունքների և կստանաք խոստացված օրհնությունները:

Գերագույն համաժողովը մի ժամանակ է, երբ Տերը ձեզ հայտնում է Իր Կամքը Իր ծառաների միջոցով: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը (1895–1985) ուսուցանել է. «Եկեղեցու ստանդարտ աշխատություններից բացի չկա որևէ այլ տեքստ կամ գիրք, որը պետք է ձեր գրադարանում կարևոր տեղ զբաղեցնի ոչ թե իր բանախոսական կատարելության կամ մատուցման շքեղության համար, այլ այն սկզբունքների՝ որոնք ցույց են տալիս դեպի հավերժական կյանք տանող ճանապարհը»:[5] ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Harold B. Lee, in Conference Report, Apr. 1946, 68.
2. Ezra Taft Benson, "Come unto Christ, and Be Perfected in Him," *Ensign,* May 1988, 84.
3. Thomas S. Monson, "Until We Meet Again," *Liahona,* Nov. 2008, 106.
4. David A. Bednar, "Seek Learning by Faith," *Liahona,* Sept. 2007, 17, 20.
5. Spencer W. Kimball, *In the World but Not of It,* Brigham Young University Speeches of the Year (May 14, 1968), 3.

ԳՐԻ ԱՌԵՔ ԵՎ ՄՏԱԾԵՔ

«Այն ամենից, ինչ մենք լսեցինք, կարող է լինել մի արտահայտություն կամ պարբերություն, որը կառանձնացվի և կգրավի մեր ուշադրությունը: Եթե դա տեղի է ունենում, ես հույս ունեմ, որ մենք գրի կառնեք և կխորհենք այդ մասին, մինչև որ կընմբռնենք դրա նշանակության խորությունը և կդարձնեք մեր կյանքի մասը»:

President Gordon B. Hinckley (1910–2008), "An Humble and a Contrite Heart," *Liahona,* Jan. 2001, 103.

Գերագույն համաժողովի ուղերձները կարդալու, դիտելու կամ լսելու համար այցելեք conference.lds.org:

ԶԱՐՄԱՆԱԼԻ շնորհ

Քրիսթեն Նիկոլ Քարդոն

Ես կախված եմ Հիսուս Քրիստոսի շնորհից ամեն օր:

«Եկեղեցու մեր ժողովներին, մենք հաճախ չենք խոսում շնորհի մասին, - ասել է Բրիգամ Յանգ Համալսարանի կրոնի իմ ուսուցիչը, - սակայն որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ մենք *հավատում ենք* շնորհին»:

Իսկապես, ես չեմ կարող հիշել Երիտասարդ Կանանց կամ Կիրակնօրյա Դպրոցի որևէ դաս շնորհի մասին, սակայն իմ մտքերը վերադառնում են դեպի ավագ դպրոցի մեր երգչախումբը, որը երգում էր «Զարմանալի շնորհ» երգը:

Զարմանալի շնորհ, (որքան քաղցր է հնչում)
Այն փրկեց ինձ նման թշվառին:
Մոլորված էի, սակայն գտել եմ ինձ կրկին,
Չէի տեսնում, այժմ տեսնում եմ տակավին:[1]

«Շնորհը Աստծո զորությունն է՝ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ», - բացատրում էր իմ ուսուցիչը: «Ես բաժանում եմ շնորհը չորս զորությունների՝ հարություն, փրկագնում, բուժում և ամրացում»: Նա այնուհետև բացատրում էր յուրաքանչյուր զորությունը, սակայն իմ միտքը կրկին վերադարձնում էր իմ հուշերին:

Նույն ավագ դպրոցի երգչախումբը մի անգամ ճանապարհորդեց Կալիֆոռնիա, ԱՄՆ, երաժշտական փառատոնում մրցելու: Ես հիվանդացա հենց գնալուց առաջ, իսկ այն, թե ինչպես էր ցավում իմ կոկորդը, նշանակում էր, որ ես չեմ կարողանա փառատոնին երգել իմ երգչախմբի հետ կամ շատ վատ կերգեմ, եթե կարողանամ: Ես խնդրեցի հորս քահանայության օրհնություն տալ ինձ և հաջորդ օրը անցկացրեցի ապաքինման համար աղոթքների մեջ:

Մի գուցե, այդ ժամանակ, երբ ամբողջովին առողջ կոկորդով փառատոնին երգում էի «Զարմանալը շնորհը», ամբողջովին չէի հասկանում, որ երգում էի հենց այդ զորության մասին, որը բուժեց ինձ միայն մեկ օր առաջ: Փրկչի Քավությունը օրհնեց ինձ այդ օրը, Նրա շնորհը իմ ապաքինման աղբյուրն էր:

«Եվ նա պիտի գնա առաջ՝ տանելով ցավեր և չարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի. և այս՝ որպեսզի խոսքը կարողանա իրագործվել, որն ասում է. նա վեր կառնի իր վրա իր ժողովրդի ցավերն ու հիվանդությունները»: (Ալմա 7.11):

Ավագ դպրոցից հետո, ինչպես շատերը, ես ծանրաբեռնված էի իմ քոլեջի

ՏԻՐՈՋ ՈՒԺԻ ՄԵՋ

«Հավատալով Տեր Հիսուս Քրիստոսին և հնազանդվելով Նրա ավետարանին, քայլ առ քայլ կատարելագործվելով մեր ճանապարհին, խնդրելով ամրություն, բարելավելով մեր մոտեցումները և ձգտումները, մենք հաջողությամբ կհայտնվենք Բարի Հովվի հոտում: Դա պահանջում է կարգապահություն, ուսուցում, աշխատանք և ուժ: Բայց, ինչպես ասել է Պողոս Առաքյալը. «Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով» (Փիլիպպեցիս 4.13)»:

President Howard W. Hunter (1907–95), "Developing Spirituality," *Ensign*, May 1979, 26.

ԱՄՓՈՓԵՑ՝ ԷԴՈՒԱՐԴ ԿՈՆԱՌ

դասերով և տնից հեռու և միաժամանակ հինգ հոգու հետ մեկ սենյակում ապրելու հետ կապված խնդիրներով:

Այդ ժամանակ էր, երբ ես սկսեցի հասկանալ Քրիստոսի շնորհի ամրացնող զորությունը: Ես օրեր շարունակ աշխատում և սովորում էի, սակայն մեծապես հենվում էի ամենօրյա աղոթքներին, որոնց միջոցով խնդրում էի Երկնային Հորը ունակություն տալ ինձ անհրաժեշտ հանձնարարությունները կատարելու համար: Ուսումնական տարվա ընթացքում, ի ուրախություն ինձ, ես հայտնաբերեցի, որ Քրիստոսի Քավության ամրացնող զորությամբ ես ոչ միայն ամեն ինչ լավ եմ անում, այլ որևէ դժվարություններ չեմ ունենում:

«Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով» (Փիլիպպեցիս 4.13):

Թեև Նրա շնորհի մյուս երկու զորությունները՝ հարությունը և փրկագնման ամբողջությունը դեռ առջևում են ինձ համար, ես, միևնույն է, ամեն օր կախված եմ Հիսուս Քրիստոսի Քավությունից, որը բուժել և ամրացրել է ինձ: Աշխատելով հնազանդվել Աստծո պատվիրաններին և ենթարկվել Նրա կամքին, ես երկնային օգնություն եմ ստանում, որը զերազանցում է իմ սեփական կարողությունները:

«Շնորհի միջոցով է, որ մենք փրկվում ենք՝ այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել» (2 Նեփի 25.23): ■

ՀՂՈՒՄ

1. John Newton, “Amazing Grace,” *Olney Hymns* (1779), no. 41.

ԻՆՉՊԵ՞Ս Է ՏԻՐՈՋ ՇՆՈՐՀԸ ՆԵՐԳՈՐԾՈՒՄ ՄԵՋ ՎՐԱ:

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, օգնում է պատասխանել այս հարցին այս համարի «Քավությունը և մահկանացու ճամփորդությունը» հոդվածում, էջ 12:

- «Տերը ցանկանում է՝ Իր Քավության և Սուրբ Հոգու զորության միջոցով, *ապրել* մեր մեջ՝ ոչ միայն մեզ առաջնորդելու, այլ նաև զորացնելու համար»:
- «Անհատական կամքը, անձնական վճռականությունը և ձգտումը, արդյունավետ պլանավորումը և նպատակների սահմանումը անհրաժեշտ են, սակայն բավարար չեն, որպեսզի մենք հանդիսավորությամբ ավարտենք այս մահկանացու ճամփորդությունը: Մենք պետք է կարողանանք ապավինել Սուրբ Մեսիայի արժեքներին, ողորմածությանը և շնորհին (տես 2 Նեփի 2.8)»:
- «Քավության զորությունը ամրացնում է մեզ անելու լավը և լինելու լավը և ծառայելու մեր անձնական ցանկությունից և բնական ունակությունից վեր»:

Ձեր օրագրում գրեք և ձեր ընտանիքի հետ կիսվեք այն ժամանակների մասին, երբ զգացել եք Տիրոջ շնորհի բուժող, օգնող կամ ամրացնող զորությունը:

Երեց
Դեյվիդ Ա. Բեդնար
Տասներկու
Առաքյալների
Քվորումից

Փրկչի ավետարանի գլխավոր նպատակը հակիրճ ձևով ամփոփել է Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը (1873-1970)։ «Ավետարանի նպատակն է . . . դարձնել վատ մարդկանց լավը, լավ մարդկանց ավելի լավը և փոխել մարդկային էությունը»։[1] Այսպիսով, մահկանացու ճամփորդության նպատակն է դեպի լավը և ավելի լավ զարգանալը և սրտի զորեղ փոփոխության փորձառություն ունենալը՝ մեր ընկած էությունների փոփոխության կայացումը (տես Մոսիա 5:2)։

Քավությունը

ԵՎ ՄԱՀԿԱՆԱՑՈՒ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Քավության հնարավորություն տվող զորությունը ամրացնում է մեզ անելու և լինելու ավելի լավը և ծառայելու մեր իսկ սեփական ցանկությունից և բնաւորությունից կարողությունից առավել։

Մորմոնի Գիրքը մեր ուսումնական ձեռնարկն է, մինչ մենք քայլում ենք վատից լավ և ավելի լավ ճանապարհով և ձգտում ենք, որ մեր սրտերը փոխվեն։ Բենիամին թագավորը սովորեցնում է մահկանացու ճանապարհի և Քավության դերի մասին՝ հաջողությամբ առաջ ընթանալով այդ ճանապարհով. «Քանզի բնական մարդն Աստծո մի թշնամի է, և եղել է Ադամի անկումից ի վեր և կլինի հավիտյանս հավիտենից, մինչև նա չենթարկվի Սուրբ Հոգու հորդորներին *և հանի բնական մարդուն ու դառնա սուրբ,* Տեր Քրիստոսի քավությամբ» (Մոսիա 3.19, ընդգծումներն ավելացված են)։

Ես ձեր ուշադրությունն եմ ուզում հրավիրել դեպի երկու արտահայտությունները։ Առաջինը՝ «հանի բնական մարդուն»։ Վատից լավը դառնալու ճանապարհը բնական տղամարդուն կամ կնոջը մեզանից յուրաքանչյուրի միջից հանելու գործընթացն է։ Մահկանացու վիճակում մենք բոլորս փորձվում ենք մարմնի կողմից։ Այն տարրերը, որոնցից ստեղծվել են մեր մարմինները, իրենց էությամբ ընկած են և հավիտյան ենթակա են մեղքին, ապականությանը և մահվան։ Բայց մենք կարող ենք զարգացնել մարմնի ցանկությունները և գայթակղությունները հաղթահարելու մեր ունակությունը «Քրիստոսի քավությամբ»։ Երբ մենք սխալներ ենք գործում, օրինազանցելով և մեղանչելով, մենք կարող ենք

ապաշխարել և դառնալ մաքուր Հիսուս Քրիստոսի Քավության փրկող զորության միջոցով:

Երկրորդը՝ «դառնա սուրբ»: Այս արտահայտությունը նկարագրում է շարունակությունը և կյանքի ճանապարհորդության երկրորդ կողմը՝ դարձնելու «լավ մարդուն ավելի լավը» կամ, այլ կերպ ասած, դառնալու սրբին ավելի նման: Ճանապարհորդության երկրորդ մասը, լավից ավելի լավին գնալու այս գործընթացը, մի թեմա է, որի մասին մենք չենք սովորում կամ սովորեցնում բավականաչափ հաճախ, ոչ էլ բավականաչափ հասկանում ենք:

Ես կասկածում եմ, որ շատ Եկեղեցու անդամներ ավելի շատ ծանոթ են Քավության զորության փրկող ու մաքրող էությանը, քան ամրացնող ու հնարավորություն տվող զորությանը: Մի բան է իմանալը, որ Հիսուս Քրիստոսը եկել է աշխարհ մեզ համար *մեռնելու*, որը Քրիստոսի վարդապետության էությունն ու հիմքն է: Բայց մենք նաև պետք է երախտապարտ լինենք, որ Տերը ցանկանում է Իր Քավությամբ և Սուրբ Հոգու զորությամբ *ապրել* մեր մեջ, ոչ միայն մեզ առաջնորդելով, այլ նաև մեզ հնարավորություններ ընձեռելով:

Մեզանից շատերը գիտեն, որ երբ մենք սխալ բաներ ենք անում, մենք օգնության կարիք ունենք մեղքի ազդեցությունները մեր կյանքում հաղթահարելու համար: Փրկիչը վճարել է գինը և հնարավոր է դարձրել մեզ համար դառնալու մաքուր Իր փրկող զորության միջոցով: Մեզանից շատերը պարզորոշ կերպով հասկանում են, որ Քավությունը մեղավորների համար է: Ես այնքան էլ վստահ չեմ, այնուամենայնիվ, որ մենք գիտենք և հասկանում ենք, որ Քավությունը նաև սրբերի համար է, լավ տղամարդկանց և կանանց համար, ովքեր հնազանդ են, արժանի ու բարեխիղճ և ովքեր ձգտում են դառնալ ավելի լավը և ծառայել ավելի հավատարմորեն: Մենք միգուցե սխալմամբ կարծենք, որ պետք է կատարենք լավից ավելի լավը դառնալու ճանապարհորդությունը և դառնանք սուրբ բոլորովին ինքնուրույն, իսկական վճռականության, կամքի ուժի, անձնական կարգապահության միջոցով և մեր, բնականաբար, սահմանափակ ունակություններով:

Փրկչի ավետարանը նրա համար չէ, որ մենք պարզապես մեր կյանքում վատից խուսափենք, այն նաև գլխավորապես լավը անելու և դառնալու մասին է: Եվ Քավությունը օգնություն է ապահովում մեզ՝ հաղթահարելու ու կանխելու վատը և անելու ու դառնալու լավը: Փրկչի կողմից օգնությունը հնարավոր է ստանալ մահկանացու ողջ ճանապարհորդության ընթացքում՝ վատից լավը և ավելի լավը դառնալու և մեր էությունը փոխելու համար:

Ես չեմ ենթադրում, որ Քավության փրկող և հնարավորություն տվող զորությունները իրարից բաժանելի և առանձին են: Ավելի ճիշտ, Քավության այս *երկու* կարևոր մասերը կապակցված են և լրացնում են իրար, երկուսն էլ պետք է գործեն կյանքի ճամփորդության բոլոր փուլերում: Եվ մեր բոլորի համար հավերժորեն կարևոր է հասկանալը, որ մահկանացու ճամփորդության այս երկու կարևոր տարրերն էլ՝ բնական մարդուն հանելն ու սուրբ դառնալը, վատը հաղթահարելն ու լավը դառնալը, իրականացվում են Քավության զորության շնորհիվ: Մեփական կամքի ուժը, անձնական վճռականությունը և մղումը, արդյունավետ ծրագրումն ու նպատակներ դնելը կարևոր են, բայց, ի վերջո, բավարար չեն մեզ համար այս մահկանացու ճամփորդությունը հաղթական ավարտելու համար: Իրոք, մենք պետք է մեր հույսը դնենք «Սուրբ Մեսիայի արժանիքների, ողորմության և շնորհի» վրա (2 Նեփի 2.8):

Շնորհը և հնարավորություն տվող Քավության զորությունը

Աստվածաշնչի բառարանում մենք սովորում ենք, որ *շնորհ* բառը հաճախ օգտագործվում է սուրբ գրություններում հնարավորություն տվող զորության իմաստով.

«[*Շնորհը*] բառ է, որ հաճախ է հանդիպում Նոր Կտակարանում, հատկապես Պողոսի գրվածքներում: Բառի հիմնական իմաստն է *աստվածային օգնություն կամ զորություն*, տրված Հիսուս Քրիստոսի լիառատ գթության և սիրո միջոցով:

Տեր Հիսուսի շնորհի միջոցով է, որը հնարավոր է դարձել Նրա քավող զոհաբերությամբ, որ մարդկությունը կբարձրացվի անմահություն, ամեն անձնավորություն ստանալով իր մարմինը գերեզմանից՝ հավիտենական կյանքի պայմաններում: *Նմանապես Տիրոջ շնորհի միջոցով է, որ անհատները* Հիսուս Քրիստոսի քավության հանդեպ հավատքի և իրենց մեղքերի ապաշխարության միջոցով *ստանում են ուժ և օգնություն՝ կատարելու լավ գործեր, որոնք նրանք այլապես չէին կարողանա կատարել, եթե ունենային միայն իրենց սեփական միջոցները: Այս շնորհը հնարավորության զորություն է*, որը տղամարդկանց և կանանց թույլ է տալիս ձեռք բերել հավերժական կյանք

և վեհացում՝ իրենց լավագույն ջանքերը գործադրելուց հետո»:[2]

Շնորհը աստվածայն աջակցություն կամ երկնային օգնություն է, որի կարիքը մեզանից յուրաքանչյուրը մեծապես ունի, որպեսզի որակավորվի սելեստիալ արքության համար: Այսպիսով, Քավության հնարավորություն տվող զորությունը ամրացնում է մեզ անելու և լինելու լավը, և ծառայելու մեր իսկ սեփական ցանկությունից և բնատուր կարողությունից առավել:

Նեփին չաղոթեց, որ իր պայմանները փոխվեին: Դրա փոխարեն նա աղոթեց ուժի համար, որ փոխեր իր պայմանները:

Իմ անձնական սուրբ գրությունների ուսումնասիրության ժամանակ ես հաճախ եմ խորհում «հնարավորություն տվող զորության» մասին, երբ հանդիպում եմ *շնորհ* բառին: Խորհեք, օրինակ, այս հատվածի շուրջ, որին մենք բոլորս ծանոթ ենք. «Մենք գիտենք, որ շնորհի միջոցով է, որ մենք փրկվում ենք՝ այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել» (2 Նեփի 25.23): Ես կարծում եմ, որ մենք կարող ենք շատ ավելին սովորել Քավության այս արժեքավոր գաղափարի վերաբերյալ, եթե ուսումնասիրենք «հնարավորություն տվող և ամրացնող զորությունը» ամեն անգամ, երբ մենք գտնում ենք *շնորհ* բառը սուրբ գրություններում:

Օրինակներ և հետևություններ

Մահկանացու ճամփորդությունն է՝ գնալ վատից լավը և ավելի լավը և հասնել մեր բուն էության փոփոխությանը: Մորմոնի Գիրքը լի է աշակերտների և մարգարեների օրինակներով, ովքերմ այդ ճամփորդությունը կատարելիս, գիտեին, հասկանում էին և փոխակերպվել էին Քավության հնարավորություն տվող զորությամբ: Որքան մենք ավելի լավ հասկանանք այս սուրբ զորությունը, ավետարանի մեր հեռանկարը այնքան կմեծանա և կհարստանա: Այսպիսի հեռանկարը կփոխի մեզ զգալի կերպով:

Նեփին օրինակ է հանդիսանում մեկի, ով գիտեր, հասկանում էր և հույսը դնում էր Փրկչի հնարավորություն տվող զորության վրա: Հիշենք, որ Լեքիի որդիները վերադարձան Երուսաղեմ Իսմայելին ու նրա գերդաստանին խնդրելու աջակցել իրենց գործում: Լամանն ու այլոք այդ խմբում, ովքեր ճամփորդում էին Նեփիի հետ՝ Երուսաղեմից վերադառնալով անապատ, ապստամբեցին, և Նեփին հորդորեց իր եղբայրներին հավատք ունենալ: Իրենց ճամփորդության հենց այդ պահին էր, որ Նեփիի եղբայրները կապեցին նրան պարաններով և ծրագրեցին նրա կործանումը: Խնդրում եմ, ուշադրություն դարձնել Նեփիի աղոթքին. «Ո՜վ Տեր, համաձայն իմ հավատքի, որը քո հանդեպ է, ազատիր ինձ իմ եղբայրների ձեռքից. այո, *տուր ինձ այնքան ուժ, որ կարողանամ կտրել այս կապերը*, որոնցով ես կապված եմ» (1 Նեփի 7.17, շեշտադրումն ավելացված է):

Դուք գիտե՞ք, թե ես ինչի համար կաղոթեի, եթե կապված լինեի իմ եղբայրների կողմից: «Խնդրում եմ, հանիր ինձ այս անելանելի վիճակից ՀԵՆՑ ՀԻՄԱ»: Հատկապես հետաքրքիր է ինձ համար, որ Նեփին չաղոթեց, որ իր իրավիճակը փոխվի: Այլ նա աղոթեց ուժի համար, որ կարողանա փոխել իր պայմանները: Եվ ես կարծում եմ, որ նա աղոթեց հենց այս ձևով, քանի որ նա գիտեր, հասկանում էր և ուներ

Քավության հնարավորություն տվող զորության փորձառությունը:

Ես չեմ կարծում, որ պարանները, որոնցով կապված էր Նեփին, ուղղակի հրաշքով ընկան նրա ձեռքերից ու դաստակներից: Ես կարծում եմ, որ նա օրհնվեց հաստատակամությամբ և անձնական ուժով իր բնատուր կարողությունից առավել, որ նա այնուհետև «Տիրոջ ուժով» (Մոսիա 9.17) աշխատեց և ոլորեց ու քաշքշեց պարանները, և ի վերջո բառիս բուն իմաստով նաև հնարավորություն ունեցավ քանդելու կապերը:

Այս տեսարանի հետևանքը մեզանից յուրաքանչյուրի համար պարզ է: Մինչ ես և դուք հասկանում և գործադրում ենք Քավության հնարավորություն տվող զորությունը մեր սեփական կյանքում, մենք կաղոթենք և կփնտրենք ուժ՝ փոխելու մեր պայմանները, և ոչ թե կաղոթենք, որ մեր պայմանները փոխվեն: Մենք կդառնանք գործակալներ, ովքեր ներգործում են, և ոչ թե՝ որոնց վրա ներգործում են (տես 2 Նեփի 2.14):

Խորհեք Մորմոնի Գրքի օրինակի շուրջ, երբ Ալման և նրա ժողովուրդը հալածվում էին Ամուղոնի կողմից: Տիրոջ ձայնը եկավ այս լավ ժողովրդին իրենց չարչարանքի մեջ և ասաց.

«Ես նաև կթեթևացնեմ բեռները, որոնք դրվել են ձեր ուսերին, որպեսզի դուք մինչև անգամ չզգաք դրանք ձեր մեջքին: . . .

Եվ արդ, եղավ այնպես, որ բեռները, որոնք դրվել էին Ալմայի ու նրա եղբայրների վրա, թեթևացան. այո, *Տերն ուժեղացրեց նրանց*, որ նրանք կարողանային իրենց բեռները հեշտությամբ տանել, և նրանք զվարթությամբ ու համբերությամբ հնազանդվեցին Տիրոջ ողջ կամքին (Մոսիա 24.14–15, շեշտադրումն ավելացված է):

Ի՞նչը փոխվեց այս տեսարանում: Բեռները չէ, որ փոխվեցին. հալածանքների հետ կապված խնդիրներն ու դժվարությունները անմիջապես չհեռացվեցին մարդկանցից: Սակայն Ալման ու նրա հետևորդները ամրացվեցին, և նրանց կարողության և ուժի մեծացումը դարձրեցին նրանց կրած բեռը ավելի թեթև: Այս լավ մարդիկ զորացվեցին Քավությամբ՝ *ներգործելով* որպես գործակալներ և *ազդեցություն ունենալով* իրենց պայմանների վրա: Եվ «Տիրոջ ուժով» Ալման ու նրա ժողովուրդը այնուհետև առաջնորդվեցին դեպի ապահովություն Զարահեմլայի երկրում:

Դուք արդարացիորեն կարող եք մտածել. «Ի՞նչն է Ալմայի և նրա ժողովրդի իրադրությունը դարձնում Քավության հնարավորություն տվող զորության օրինակ»: Պատասխանը գտնվում է Մոսիա 3.19 և Մոսիա 24.15–ում:

«Եվ հանի բնական մարդուն ու դառնա սուրբ, Տեր Քրիստոսի քավությամբ, և *դառնա ինչպես մի երեխա՝ ենթարկվող, հեզ, խոնարհ, համբերատար, սիրով լի, հոժար՝ ենթարկվելու բոլոր բաներին, որոնք Տերը* հարմար է տեսնում բերել նրա վրա, ճիշտ ինչպես երեխան է ենթարկվում իր հորը» (Մոսիա 3.19, շեշտադրումն ավելացված է):

Մինչ մենք առաջ ենք գնում, մահկանացու ճամփորդության ընթացքում վատից լավը և ավելի լավը դառնալով, մինչ մենք

Տիրոջ ձայնը եկավ Ալմային և նրա ժողովրդին իրենց տառապանքի մեջ և նշեց. «Ես նաև կթեթևացնեմ բեռները, որոնք դրվել են ձեր ուսերին, որպեսզի դուք մինչև անգամ չզգաք դրանք ձեր մեջքին»:

հանում ենք բնական տղամարդուն կամ կնոջը մեզանից յուրաքանչյուրի միջից, և մինչ մենք ձգտում ենք դառնալ սրբեր և փոխել հենց մեր էությունները, այդ ժամանակ, այս հատվածում մանրամասնորեն տրված հատկանիշները, կնկարագրեն այն անձնավորությանը, որին ձգտում ենք դուք և ես: Մենք կդառնանք ավելի նման երեխայի, ավելի ենթարկվող, ավելի համբերատար, և ավելի հոժար ենթարկվելու:

Այժմ համեմատեք այս առանձնահատկությունները Մոսիա 3.19-ում նրանց հետ, որոնք օգտագործված են Ալմային ու նրա ժողովրդին նկարագրելու համար. «Եվ նրանք *զվարթությամբ ու* համբերությամբ *հնազանդվեցին Տիրոջ ողջ կամքին»* (Մոսիա 24.15, շեշտադրումն ավելացված է):

Ես զուգահեռներ եմ տեսնում այս հատվածներում նկարագրված հատկանիշների միջև, որոնք ուշադրություն են գրավում և նշում, որ Ալմայի լավ ժողովուրդը դառնում էր ավելի լավը Տեր Քրիստոսի Քավության հնարավորություն տվող զորության միջոցով:

Հիշենք Ալմայի և Ամուղեկի պատմությունը, որը գտնվում է Ալմա 14-ում: Այստեղ շատ հավատարիմ Սրբեր մատնվել էին մահվան կրակի միջոցով, և Տիրոջ այս երկու ծառաները բանտարկվել ու ծեծվել էին: Խորհեք այս խնդրանքի շուրջ, որը մատուցվել էր Ալմայի կողմից, մինչ նա աղոթում էր բանտում. «Ո՜վ Տեր, *տուր մեզ ուժ* ըստ մեր հավատքի, որը Քրիստոսում է, մինչև իսկ ի ազատում» (Ալմա 14.26, շեշտադրումն ավելացված է):

Այստեղ կրկին տեսնում ենք Ալմայի հասկացողությունն ու վստահությունը Քավության հնարավորություն տվող զորության հետ կապված, որը արտահայտվում է նրա խնդրանքում: Եվ ուշադրություն դարձնենք այս աղոթքի վրա.

«Եվ նրանք [Ալման և Ամուղեկը] կտրեցին պարանները, որոնցով նրանք կապված էին, և երբ մարդիկ տեսան այս, նրանք սկսեցին փախչել, քանզի կործանման վախը եկել էր նրանց վրա: . . .

Եվ Ալման ու Ամուղեկը բանտից դուրս եկան, և նրանք վնասված չէին. քանզի *Տերը շնորհել էր նրանց զորություն* ըստ նրանց հավատքի, որը Քրիստոսում էր» (Ալմա 14.26, 28, շեշտադրումն ավելացված է):

Եվս մեկ անգամ հնարավորություն տվող զորությունը ակնհայտ է, երբ լավ մարդիկ պայքարում են չարի դեմ և ձգտում դառնալ նույնիսկ ավելի լավը և ծառայել ավելի արդյունավետ՝ «Տիրոջ ուժով»:

Մորմոնի Գրքից մեկ այլ օրինակ ուսուցողական է: Ալմա 31-ումԱլման գլխավորում է մի առաքելություն՝ ուղղելու ուրացած Զորամացիներին, ովքեր, իրենց Ռամեումփթոմը կառուցելուց հետո մատուցում էին սահմանված և հպարտ աղոթք:

Ուշադրություն դարձրեք Ալմայի անձնական աղոթքում ամրության համար խնդրանքին. «Ո՜վ Տեր, խնդրում եմ շնորհիր ինձ, *որ ես կարողանամ ուժ ունենալ,* որ ես կարողանամ համբերությամբ տանել այս չարչարանքները, որոնք պիտի գան ինձ վրա, այս ժողովրդի անօրինության պատճառով» (Ալմա 31.31, շեշտադրումն ավելացված է):

Ալման նաև աղոթում է, որ իր միսիոներ զուգընկերները ստանան նմանատիպ օրհնություն. «Շնորհիր նրանց, *որ նրանք կարողանան ուժ ունենալ,* որ նրանք կարողանան կրել իրենց չարչարանքները, որոնք պիտի գան նրանց վրա այս խողովրդի անօրինությունների պատճառով» (Ալմա 31.33, շեշտադրումն ավելացված է):

Ալման չէր աղոթում, որ իր չարչարանքները վերցվեին: Նա գիտեր, որ ինքը Տիրոջ գործակալն էր, և նա աղոթեց զորության համար, որ ներգործեր և ազդեր իր իրավիճակի վրա:

Այս օրինակի գլխավոր կետը գտնվում է Ալմա 31-ի վերջին հատվածում. «[Տերը] ուժ տվեց նրանց, որ նրանք չտանեին ոչ մի ձևի չարչարանքներ, *այլ, որ դրանք կուլ գնային Քրիստոսի ուրախության մեջ:* Արդ, դա եղավ Ալմայի աղոթքի համաձայն. և դա եղավ, որովհետև նա աղոթեց հավատքով» (հատված 38, շեշտադրումն ավելացված է):

Չարչարանքները չհեռացվեցին: Սակայն Ալման և նրա զուգընկերները դարձվեցին ուժեղ և օրհնվեցին Քավության հնարավորություն տվող զորության միջոցով, «որ նրանք չտանեին ոչ մի ձևի չարչարանքներ, այլ, որ դրանք կուլ գնային Քրիստոսի ուրախության մեջ»: Ինչ զարմանահրաշ օրհնություն: Եվ ինչ դաս, որ մեզանից յուրաքանչյուրը պետք է սովորի:

Հնարավորություն տվող զորության օրինակներ գտնվում են ոչ միայն սուրբ գրություններում: Դանիել Վ. Ջոնեսը ծնվել էր 1830թ. Միսսուրիում, և նա միացել էր Եկեղեցուն Կալիֆոռնիայում 1851թ.: 1856թ. նա մասնակցել էր ձեռնասայլակների խմբերին փրկելու ջանքերին, որ ծանր դրության մեջ էին գտնվում Վայոմինգում ուժեղ ձյունամրրիկի պատճառով: Երբ փրկարար ջոկատը գտավ տառապյալ Սրբերին, մատուցեց նրանց հնարավոր անհապաղ աջակցությունը և կատարեց

ՆԿԱՐԱԳՐՈՒՄԸ՝ ՋԵՖ ՎՈՐԴԻ

պատրաստություններ, որ հիվանդներին ու տկարներին տեղափոխեին Սոլթ Լեյք Սիթի, Դանիելն ու մի քանի այլ երիտասարդ տղամարդիկ առաջարկեցին մնալ ու պաշտպանել խմբի ունեցվածքը: Ուտելիքն ու պարենը, որ թողել էին Դանիելի ու նրա գործընկերների հետ, աղքատիկ էին ու արագ սպառվող: Դանիել Ջոնեսի անձնական օրագրի հետևյալ մեջբերումը նկարագրում է իրադարձությունները, որոնք հաջորդեցին այս դեպքերին.

«Ոռսի կենդանիները շուտով դարձան այնքան սակավաթիվ, որ մենք ոչինչ չէինք կարողանում որսալ: Մենք կերանք ամբողջ աղքատիկ միսը. այն ուտողը կարող էր սովածանալ: Ի վերջո, այդ բոլորը վերջացավ, ոչինչ այժմ չէր մնացել բացի կաշվից: Մենք դրանցով փորձարկում կատարեցինք: Շատ բաներ եփեցինք ու կերանք առանց որևէ համեմունքի և ամբողջ խումբը դրանից հիվանդացավ: . . .

Ամեն ինչ մռայլ էր թվում, քանի որ ոչինչ չէր մնացել, բացի աղքատիկ հում կաշիներից, որոնք հանվել էին սովամահ եղած անասունների վրայից: Մենք խնդրեցինք Տիրոջը հայտնել մեզ, թե ինչ անել: Եղբայրները չէին տրտնջում, այլ վստահում էին Աստծուն: . . . Վերջապես ես ներշնչվեցի, թե ինչպես պատրաստել այն և խմբին խորհուրդ տվեցի, թե ինչպես եփել այն. նրանք պետք է խանձեին և քերելով մաքրեին կաշին: Դրա նպատակն էր վերացնել և մաքրել վատ համը, որ եռացնելուց էր ստացել: Քերելուց, շատ ջրով մեկ ժամ եփելուց հետո, ջուրը թափել, որը հանել էր ամբողջ կպչուն մասսան, այնուհետև լվանալ և քերել կաշին ամբողջովին՝ լվանալով սառը ջրով, այնուհետև եփել մինչև դոնդողակ դառնալը և թողնել այն սառչի, և այնուհետև ուտել այն մի փոքր շաքարավազ ցանելով դրա վրա: Սա բավականաչափ մեծ դժվարություն էր, սակայն մեր հնարավորությունները խիստ սահմանափակ էին և սա սովամահ լինելուց ավելի լավ էր:

Մենք խնդրեցինք Տիրոջը օրհնել մեր ստամոքսները և դրանք *հարմարեցնել այս ուտելիքին:* . . . Այժմ ուտելու հնարավորություն ունենալը թվում է, թե կօգներ վայելել ճաշկերույթը: Մենք երեք օր ոչինչ չէինք կերել մինչև այս երկրորդ փորձը: Մենք վայելեցինք այս հոյակապ ուտելիքը մոտավորապես վեց շաբաթ»:[3]

Այդ պայմաններում ես հավանաբար կաղոթեի, որ ինչ-որ ուրիշ բան ունենայի ուտելու. «Երկնային Հայր, խնդրում եմ, ուղարկիր ինձ գոմեշ»: Հավանաբար իմ մտքով չէր անցնի աղոթել, որ իմ ստամոքսը ամրանար և հարմարվեր այն ուտելիքին, որը մենք ունեինք: Ի՞նչ գիտեր Դանիել Վ. Ջոնեսը: Նա գիտեր Հիսուս Քրիստոսի Քավության հնարավորություն տվող զորության մասին: Նա չաղոթեց, որ իր պայմանները փոխվեին: Նա աղոթեց, որ ինքը ուժեղանար, որ հարմարվեր իր պայմաններին: Ճիշտ ինչպես Ալման ու իր ժողովուրդը, Ամուղեկը և Նեփին զորացվեցին, Դանիել Վ. Ջոնեսը ունեցավ հոգևոր խորաթափանցություն իմանալու, թե ինչ խնդրի այդ աղոթքում:

Քրիստոսի Քավության հնարավորություն տվող զորությունը զորացնում է մեզ անելու բաներ, որոնք մենք երբեք չէինք կարող անել ինքնուրույն: Երբեմն ինձ հետաքրքիր է,թե մեր վերջին օրերի հեշտ աշխարհում, մեր միկրոալիքային վառարանի, բջջային հեռախոսների, օդորակիչներով մեքենաների և հարմարավետ տների մեր աշխարհում մենք երբևէ կսովորենք ընդունել մեր ամենօրյա կախվածությունը Քավության հնարավորություն տվող զորությունից:

Քույր Բեղնարը բացառիկ հավատարիմ և գիտակ կին է, և ես սովորել եմ կարևոր դասեր ամրացնող զորության վերաբերյալ նրա լուռ օրինակից: Ես դիտել եմ նրա հաստատակամությունը սաստիկ ու շարունակական առավոտյան հիվանդության ընթացքում, բառացիորեն հիվանդ ամբողջ օրը, ամեն օր, ութ ամիս շարունակ, իր երեք հղիություններից յուրաքանչյուրի ժամանակ: Միասին մենք աղոթել ենք, որ նա օրհնվի, բայց այդ խնդիրը երբեք չէր վերցվում: Դրա փոխարեն նա հնարավորություն ունեցավ ֆիզիկապես անելու այն, ինչ նա չէր կարող անել իր սեփական ուժերով: Տարիներ շարունակ ես նաև դիտել եմ, թե ինչպես է նա մեծարվել տանելով ծաղր և քամահրանք, որ եկել են աշխարհիկ հասարակության կողմից, երբ Վերջին Օրերի Սուրբ կինը ականջ է դնում մարգարեական խորհրդին և դարձնում է ընտանիքը և երեխաների համար հոգ տանելը իր ամենաբարձր առաջնահերթությունը: Ես շնորհակալություն եմ հայտնում և հարգանքի տուրք եմ մատուցում Սյուզանին, որ օգնեց ինձ սովորել այսպիսի անգնահատելի դասեր:

Փրկիչը գիտի և հասկանում է

Ալմայի 7-րդ գլխում մենք սովորում ենք, թե ինչպես և ինչու է Փրկիչը կարողանում ապահովել հնարավորություն տվող զորություն.

«Եվ նա պիտի գնա առաջ՝ տանելով *ցավեր* և *չարչարանքներ*, և *փորձություններ* ամեն

տեսակի. և դա՝ որպեսզի խոսքը կարողանա իրագործվել, որն ասում է. նա վեր կառնի իր վրա իր ժողովրդի *ցավերն* ու *հիվանդությունները*:

Եվ նա իր վրա վեր կառնի մահ, որ կարողանա արձակել մահվան կապանքները, որոնք կապում են իր ժողովրդին. և նա իր վրա վեր կառնի նրանց *թուլությունները,* որպեսզի նրա սիրտը լցվի ողորմությամբ, ըստ մարմնի, որպեսզի նա կարողանա իմանալ, ըստ մարմնի, ինչպես սատարել իր ժողովրդին՝ ըստ նրանց թուլությունների» (Ալմա 7.11–12, շեշտադրումն ավելացված են):

Չկա ֆիզիկական ցավ, հոգու տառապանք, հոգու ցավ, թուլություն կամ տկարություն, որ դուք և ես երբևէ կունենանք մեր մահկանացության ճամփորդության ընթացքում, որի փորձառությունը Փրկիչը առջինը ունեցած չլինի:

Փրկիչը տառապել է ոչ միայն մեր անօրինությունների համար, այլ նաև անհավասարության, անարդարության, ցավի, տառապանքի և էմոցիոնալ անհանգստության համար, որ շատ հաճախ անհանգստացնում են մեզ: Չկա ֆիզիկական ցավ, հոգու տառապանք, հոգու ցավ, թուլություն կամ տկարություն, որ դուք և ես երբևէ կունենանք մեր մահկանացու ճամփորդության ընթացքում, որի փորձառությունը Փրկիչը առաջինը ունեցած չլինի: Դուք և ես թուլության պահին կարող ենք գոչել. «Ոչ ոք չի հասկանում: Ոչ ոք չգիտի»: Ոչ մի մարդկային արարած հավանաբար չգիտի: Սակայն Աստծո Որդին կատարելապես գիտի և հասկանում է, քանզի Նա զգացել ու տարել է մեր բեռները նախքան մեր իսկ տանելը: Եվ քանի որ Նա վճարել է կատարյալ գինը և տարել է այդ բեռը, Նա ունի կատարյալ կարեկցանք և կարող է մեկնել մեզ Իր ողորմած ձեռքը մեր կյանքի բազմաթիվ իրադրություններում: Նա կարող է հասնել, դիպչել, պաշտպանել, բառացիորեն վազել դեպի մեզ և ամրացնել մեզ լինելու ավելին, քան մենք երբևէ կարող ենք լինել, և օգնել մեզ անելու այն, ինչը մենք երբեք չէինք կարողանա անել, եթե մեր հույսը դնեինք միայն մեր իսկ զորության վրա:

«Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ:

Ձեզ վրա առեք իմ լուծը և ինձանից սովորեցեք. որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք:

Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև» (Մատթեոս ԺԱ.28–30):

Ես հայտարարում եմ իմ վկայությունը և երախտագիտությունը Տեր Հիսուս Քրիստոսի անսահման ու հավերժական զոհաբերության համար: Ես գիտեմ, որ Փրկիչն ապրում է: Ես զգացել եմ և Նրա փրկող զորությունը, և Նրա հնարավորություն տվող զորությունը, և ես վկայում եմ, որ այս զորությունները իրական են և հասանելի մեզանից յուրաքանչյուրի համար: Իսկապես, «Տիրոջ ուժով» մենք կարող ենք անել և հաղթահարել բոլոր բաները, մինչ մենք առաջ ենք գնում մահկանացու մեր ճամփորդության մեջ: ■

Բրիգամ Յանգի Համալսարանում 2001թ. հոկտեմբերի 23-ի հոգևոր ժողովի ուղերձից: Անգլերենով ամբողջ ուղերձը տեսնելու համար այցելեք speeches.byu.edu:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Franklin D. Richards, in Conference Report, Oct. 1965, 136–37; see also David O. McKay, in Conference Report, Apr. 1954, 26:
2. Bible Dictionary, “Grace”; emphasis added.
3. Daniel W. Jones, *Forty Years among the Indians* (n.d.), 57–58.

Ամբողջ աշխարհով մեկ սեմինարիան ձեր նման երիտասարդներին ավելի է մոտեցնում Հիսուս Քրիստոսին:

ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ օրինությունները

Բրիթանի Բիթի
Եկեղեցու ամսագրեր

Դուք միայնակ չէք սեմինարիա հաճախելու ձեր որոշման մեջ: Աշխարհով մեկ հարյուր հազարավոր երիտասարդներ դարձնում են սեմինարիան իրենց կյանքի մի մասը, հասնելով իրենց դասարանները ավտոբուսով, մակույկով, հեծանվով կամ, նույնիսկ, համացանցով: Որոշ երիտասարդներ վաղ են արթնանում և ճամփորդում հեռավոր տարածություններ՝ դասերին ժամանակին հասնելու համար, ուրիշները իրենց ճամփորդությունը կատարում են երեկոյան, և կրկին ուրիշներն էլ սովորում են տանը՝ մի քանի օր շաբաթվա ընթացքում:

Սեմինարիային հաճախելը պահանջում է զոհաբերություն, սակայն աշխարհի տարբեր մասերում ապրող երիտասարդները գտնում են, որ սեմինարիային մասնակցելը արժե ցանկացած ջանք: Եվ նրանք, ովքեր մասնակցում են , ունեն ինչ-որ ընդհանուր բան. Սեմինարիայում ունեցած իրենց փորձառությունը ավելի է մոտեցնում նրանց Փրկչին և մեր Երկնային Հորը:

Ստանալ խոստացված օրհնությունները

Ինչու՞ է սեմինարիան այդքան կարևոր ձեզ համար: Պատճառներից ոմանք ներառում են այս խոստումները վերջին օրերի մարգարեների և առաքյալների կողմից.

- Այն «դառնում է աստվածատուր ամենադժվար պահին ժամանակակից Իսրայելի փրկության համար»: [1]
- Այն «կպատրաստի ձեզ ներկայացնելու վերականգնված ավետարանի ուղերձը նրանց, ում հետ դուք հնարավորություն կունենաք հանդիպելու»:[2]
- Այն օգնում է ձեզ «ձեռք բերել արժեքավոր հասկացողություն ճշմարտության մասին»:[3]
- Սեմինարիան «հրաշալի հնարավորություն է տալիս սովորելու վարդապետությունները, որոնք ձեզ կուրախացնեն: Դրանք հիանալի հնարավորություններ են տալիս շփվելու ձեզ նմանների հետ»:[4]
- «Ավետարանի վերաբերյալ ձեր գիտելիքը կաճի: Ձեր հավատքը կուժեղանա: Դուք ձեռք կբերեք հրաշալի կապեր և ընկերներ»:[5]
- «Այն տալիս է . . . հոգևոր հարստություն, բարոյական ամրություն՝ դիմադրելու չարին, որը շրջապատում է մեզ, ինչպես նաև մեծ առաջընթաց ավետարանը ուսումնասիրելու գործում»:[6]
- Այն «միսիային ամենալավ նախապատրաստություններից մեկն է»:[7]

Ճանապարհ գտնել հաճախելու համար

Սեմինարիային հաճախելը հաճախ նշանակում է, որ դուք պետք է թողնեք ինչ-որ մի այլ բան, որը դուք հաճույքով եք անում, որպեսզի ժամանակ գտնեք հաճախելու: Սակայն դա զոհաբերություն է, որ արժե կատարել: Ֆիլիպիններից Եղիա Բուգայոնգը կատարեց այդ որոշումը ավագ դպրոցի վերջին տարվա ընթացքում: Ավագ դպրոցի ընթացքում նա միշտ երկրորդն է եղել իր դասարանում: Նա վճռել էր առաջին տեղում դնել ավագ դպրոցի իր վերջին տարին և նույնիսկ չէր մտածում սեմինարիայի մասին, որին հաճախել էր տարիներ առաջ, որպեսզի հասներ իր նպատակին:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՏՐՍԱՆԴՐԵԼ Է ԵՎԱ-Ը, ԴԱՄՈՆԵՐԸ՝ ՍԵՌՈՒ ԳՈՒԵՅԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ՈՂՋ ԿՅԱՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

«Շատ տարիներ առաջ ես պատիվ ունեցա լինելու վաղ առավոտյան սեմինարիայի ուսուցիչ: Դասը տևում էր առավոտյան ժամը 6.30-ից մինչև 7.30-ը յուրաքանչյուր օր, բացի շաբաթ և կիրակի օրերից: Երկու տարի ես տեսնում էի, ինչպես են դեռ չարթնացած ուսանողները դժվար քայլերով դասարան մտնում՝ իրենց ուսուցչի առաջ դնելով իրենց արթնացնելու խնդիրը: Աղոթք և ոգեշնչող միտք ասելուց հետո ես տեսնում էի, թե ինչպես էին պայծառ մտքերը կենդանանում և խորանում սուրբ գրությունների նրանց գիտելիքները: Դասի ամենադժվար պահը ժամանակին զրույցն ավարտելն էր, որ ուղարկեի նրանց իրենց սովորական ավագ դպրոցների դասերին: Մինչ ուսումնական տարին առաջ էր գնում, ես տեսնում էի, թե ինչպես էր յուրաքանչյուր ուսանող ձեռք բերում ավելի մեծ վստահություն, մոտ ընկերներ և ավետարանի մասին աճող վկայություն:

Մի քանի տարի առաջ ես նպարեղենի խանութում էի, այստեղից ոչ հեռու մի քաղաքում, երբ լսեցի, թե ինչպես էր ինչ-որ մեկը կանչում իմ անունը: Ես շրջվեցի ողջունելու իմ սեմինարիայի ուսանողներից երկուսին: Նրանք այժմ ամուսին և կին էին: Նրանք ներկայացրեցին ինձ իրենց չորս սիրունիկ երեխաներին: Երբ մենք խոսում էինք, ես զարմացած էի սեմինարիայի համադասարանցիների քանակով, որոնց հետ նրանք այս բոլոր տարիների ընթացքում դեռևս կապի մեջ էին: Դա յուրահատուկ կապի վկայություն է, որը գոյություն է ունեցել այդ շատ վաղ առավոտյան անցկացվող սեմինարիայի դասերին:

Elder L. Tom Perry of the Quorum of the Twelve Apostles, "Receive Truth," *Ensign*, Nov. 1997, 62.

Հետո մի օր նրա մտքերը փոխվեցին: «Ես նայեցի իմ աշխատանքային սեղանին», - ասում է նա: «Ես տեսա նաև կողքի դրված գրքերի մի կույտ, իմ քառահատորը սեմինարիայի նոթատետրի և դասագրքի հետ միասին: Հոգուս խորքում ես հարցրեցի ինքս ինձ. «Ո՞րն է ամենակարևորը»»:

Եղիան տալիս է նրա հարցի պատասխանը Մատթեոսի Զ.33-ում. «Սակայն առաջ Աստուծոյ արքայութիւնը եւ նորա արդարութիւնը խնդրեցէք. եվ այդ ամենքը կտրուի ձեզ»: Նա որոշեց հավատարմորեն հաճախել սեմինարիա և այլ կերպ կառավարել ուսման համար իր ժամանակը: Տարվա վերջում նա հայտարարվեց լավագույնը և նույնիսկ համալսարանի կրթաթոշակ շահեց:

Սպենսեր Դուգլասը Ալաբամայից, ԱՄՆ, որոշեց հրաժարվել որոշ հասարակական միջոցառումներից, որպեսզի կարողանար ավելի շատ սովորել սեմինարիայում: Սեմինարիայի առաջին երկու տարիների ընթացքում նա արթնանում էր առավոտյան ժամը 4.00-ին, իսկ վերջին երկու տարիների ընթացքում՝ 5.00-ին, որ հասցներ մասնակցել: Նա ասում է. «Ես չէի կարողանում իմ ընկերների հետ մասնակցել շատ ուշ երեկոյան միջոցառումներին, քանի որ պետք է շուտ քնեի: Այլապես ես հնարավորություն չէի ունենա լիարժեք ձևով մասնակցելու և սովորելու հաջորդ առավոտյան»: Սպենսերի համար դա միայն դասարանում հայտնվելը չէր, դա նաև արթուն լինելու և սովորելու համար նախապատրաստված լինելն էր:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսը սովորեցրել է. «Միայն այն, որ ինչ-որ բան լավ է, բավականաչափ հիմք չէ այն անելու համար: Լավ բաների թիվը, որոնք մենք կարող ենք անել, շատ դեպքերում գերազանցում է այն մատչելի ժամանակին, որն անհրաժեշտ է՝ դրանք իրականացնելու համար: Որոշ բաներ ավելի լավն են, ոչ թե պարզապես լավը, և դրանց պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնենք մեր կյանքում»:[8] Սա կարևոր խորհուրդ է, որը պետք է հիշել, երբ որոշում ենք, թե ինչպես սեմինարիան առաջնահերթ դարձնել մեր օրակարգում:

Նախապատրաստվել միսիայի

Սեմինարիան նույնպես ծառայում է որպես մեծ նախապատրաստություն միսիոներական աշխատանքի համար, որը դուք կանեք որպես անդամ միսիոներ այսօր և որպես լիաժամկետ միսիոներ հետագայում: Պերուից Ֆրանկո Հուաման Քարինուգուին գիտի, որ իր սուրբ գրությունների ուսումնասիրությունը սեմինարիայում օգնում էր նրան նախապատրաստվել միսիային:

Նա ասում է, որ այդ նախապատրաստության համար արժե արթնանալ 4.00-ին, վարել մակույկ, երբ ամիսներ շարունակ անձրևները հեղեղում են տարածքը, և հետո անցնել ծանծաղուտով և հասնել դասին: Նա ասում է. «Ես ուզում եմ ավարտել սեմինարիան և սկսել ինստիտուտի դասերը, որպեսզի նախապատրաստված լինեմ միսիայի համար: Ես պատրաստվում եմ աճել Եկեղեցում»»: Սեմինարիան կարևոր է նրա համար, քանի որ նա սովորել է սուրբ գրությունների մասին և մտապահել կարևոր հատվածները, ինչը կօգնի նրան լինելու ավելի լավ միսիոներ:

Լինել օրհնված կյանքի բոլոր ոլորտներում

Մինչ աշխարհով մեկ երիտասարդները ջանում են հաճախել սեմինարիայի, նրանք ուժ են ստանում ոչ միայն սուրբ գրությունների ուսուցման մեջ: Անգլիայից Քեմերոն Լիսնին գտնում է, որ օրհնվել

է իր կյանքի բոլոր ոլորտներում: «Սեմինարիան օրհնում է ոչ միայն հոգևոր առումով, այլ նաև դպրոցի և կրթության հետ կապված հարցերում», - ասում է Քամերոնը:

Նա ասում է, որ «օրը վաղ սկսելը ուղեղը ճկուն է դարձնում: Իմ որոշ ընկերներ ասում էին, որ շատ զբաղված էին, որպեսզի այցելեին: Բայց դա նման չէ առավոտյան ժամը 6.00-ին մաթեմատիկա կրկնելուն, այնպես չէ՞»: Մինչ դուք սովորում եք, «Տերը կօրհնի ձեզ ձեր քննութունները հանձնելից, և եթե դուք գնում եք սեմինարիայի, Նա նույնիսկ ավելի շատ կօրհնի ձեզ», - ասում է Քեմերոնը:

Իհարկե, սեմինարիան օգնել է Քեմերոնին ամրացնել իր վկայությունը նույնպես: Նա ասում է. «Իմ վկայությունը սկսել է զարգանալ սեմինարիայի ծրագրից: Պատանեկության 14 տարեկանում ես իրոք դժվարություններ ունեի ավետարանի հետ կապված: Ես հաճույքով չէի գնում Եկեղեցի, և ես անում էի բաներ, որոնք չպետք է անեի: Ընդամենը մի քանի ամիսների ընթացքում ես կարող էի ամբողջապես հիասթափվել»: Սակայն երբ մի ընկեր հրավիրեց Քեմերոնին հաճախել սեմինարիա, նա որոշեց գնալ նրա հետ: Այնուհետև օրհնությունները իրոք սկսեցին գալ:

«Ես կրկին սկսեցի զգալ Հոգին», - ասում է Քեմերոնը: «Ես սկսեցի ավելի ուշադիր լինել Եկեղեցում և սկսեցի հաճախել կիրակնօրյա դպրոցի և քահանայության իմ դասերին: Դա ավելի հեշտ դարձավ, և ես սկսեցի ավելի երջանիկ զգալ ինձ: Ես վերջապես ավետարանի վերաբերյալ իմ սեփական վկայությունը ձեռք բերեցի»: Երկու ամիս սեմինարիային մասնակցելուց հետո Քեմերոնը հանդիպում ունեցավ իր եպիսկոպոսի հետ և ձեռնադրվեց որպես Ահարոնյան Քահանայության ուսուցիչ:

Քեմերոնը գիտի, որ սեմինարիան օգնում է իրեն ամուր կանգնել աշխարհի փորձությունների դեմ: «Սեմինարիայի ընթացքում - ասում է նա, - ես նկատեցի, որ ավելի հեշտ էի դիմակայում դժվարություններին, որոնք ներկայացնում էր աշխարհը: Բավականին դժվար է լինել երիտասարդ աշխարհում, որտեղ մենք ապրում ենք. մեղքը շրջապատում է մեզ բոլոր կողմերից: Ես վկայում եմ ձեզ, որ եթե դուք հաճախեք սեմինարիայի, դուք ուժ կգտնեք պաշտպանելու ձեզ դրանից: Սեմինարիան ստեղծում է հոգևոր վահան ձեզ պաշտպանելու համար: Շատ բազմազան դժվարություններ ու փորձություններ են հանդիպել իմ ճանապարհին, և սեմինարիան մեծապես օգնել է ինձ մնալ նեղ ու անձուկ ճանապարհին»:

Ամրացնել միմյանց

Սեմինարիան նաև ձեզ հնարավորություն է տալիս հավաքվել այլ պատանիների հետ, ովքեր կիսում են ձեր համոզմունքները: Ռուսաստանից Վիկա Չելյուշկովան ասում է. «Ես ոգեշնչված եմ միանման մտածելակերպ ունեցող մարդկանց կողմից, ովքեր պահում են միանման բարոյական չափանիշներ և ովքեր հավատում են Աստծուն, ինչպես ես»: Նա ավելացնում է, «Եթե ես որևէ հարց եմ ունենում, ես կարող եմ այն քննարկել իմ սեմինարիայի ուսուցչի և այլ աշակերտների հետ: Ես կարող եմ կիսել իմ մտքերը և իմ վկայությունը ուրիշների հետ՝ իմ և ուրիշների հավատքը ամրացնելու համար: Միասին կարդալով սուրբ գրությունները և խորհելով դրանց հոգևոր բովանդակության շուրջ, մենք ավելի ենք մոտենում Աստծուն և իրար»:

Ուկրաինայից Քսենիա Գոնչարովան տեսել է նմանատիպ արդյունքներ: Նա ասում է. «Երբ մենք կիսում ենք մեր փորձառությունները իրար հետ, մենք դառնում ենք ավելի ուժեղ և մենք ավելի լավ ենք հասկանում սուրբ գրությունները: Երբ մենք

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՔՐԻՍՏԻՆԱ ՍՄԻԹԻ ԿՈՐՄԻՑ

ՍԵՄԻՆԱՐԻԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԵՑ ՆԱԽԱԳԱՀ ՀԵՆՐԻ Բ. ԱՅՐԻՆԳԻ ԿՅԱՆՔԻ ՎՐԱ

Միլդրեդ Բենիոնը 1912թ. Գրանիտե Սեմինարիայի առաջին դասարանի ուսանողներից էր: Նա հետագայում պետք է դառնար Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգի մայրը:

Նա հասկացել էր սեմինարիայի կարևորությունը իր կյանքում և ցանկացել էր, որ իր երեխաները ունենային նույն օրհնությունները, որոնք նա ունեցել էր սեմինարիա հաճախելու արդյունքում, ուստի նրա ընտանիքը կարևոր որոշում կայացրեց. «Մենք տեղափոխվեցինք Յուտա բավականաչափ մեծ ֆինանսական զոհաբերությամբ, որպեսզի մեր որդիները կարողանային հաճախել Սեմինարիաներ և Ինստիտուտներ և ընկերներ գտնեին մեր իսկ ժողովրդի մեջ: Դա պետք է որ պատասխան լինի այդ բաների վերաբերյալ իմ զգացողական հարցերին» (մեջբերում, Ս. Քոլման, *Գրանիտե Սեմինարիայի պատմությունը,* 142):

Եկեղեցու կրթության կարևորությունը շարունակվեց Այրինգների ընտանիքում, մինչ Նախագահ Հենրի Բ. Այրինգիը 1971թ. դարձավ Եկեղեցուն պատկանող Ռիքսի Քոլեջի (այժմ ԲՅՀ,Այդահո) նախագահը և ծառայեց որպես Եկեղեցու կրթության հանձնակատար 1980թ.-ից մինչև 1985թ., և կրկին՝ 1992թ. մինչև 2005թ.:

դասերի ընթացքում խոսում ենք մեր կյանքի օրինակների մասին, ես տեսնում եմ, թե ինչպես է ավետարանը գործում իմ և ուրիշների կյանքում»:

Սկսենք ճանաչել Երկնային Հորը և Սուրբ Հոգուն

Վերջերս մի խումբ պատանիների հարցրեցին, թե ինչպես է սեմինարիան օրհնել իրենց: Նրանց պատասխանները բացահայտում են կարևոր մի հարց. սեմինարիան օգնում է նրանց ավելի մոտենալ Երկնային Հորը և Փրկչին: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը սովորեցրել է. «Բոլոր թեմաները, որոնք դուք սովորում եք սեմինարիայում, կարևոր են: Յուրաքանչյուր տարի, երբ դուք ձեր ուշադրությունը սևեռում եք սուրբ գրություններից մեկի վրա, առանցքում գտնվում է Տեր Հիսուս Քրիստոսն է»:[9]

Ահա, թե ինչ են մի շարք պատանիներ ասել այն մասին, թե ինչպես է սեմինարիան նրանց ավելի մոտեցրել Հիսուս Քրիստոսին:

- «Ես հասկացա, թե ինչ է Փրկիչը արել ինձ համար՝ կարդալով բազմաթիվ մարգարեների պատմությունները և գիտակցելով, թե որքան կարևոր եմ ես Նրա համար: Ես գիտակցում եմ, թե որքան է Նա սիրում ինձ, որ պատրաստ էր զոհվելու ինձ համար և տառապելու իմ ցավերի համար»:
- «Սեմինարիան իմ օրը սկսելու հրաշալի միջոց է: Անկախ նրանից, թե որքան հոգնած եմ, ես զգում եմ հոգին և զգում եմ ուժեղացած, ուստի երբ դժվար պահեր են գալիս իմ օրվա ընթացքում, ես առանց կասկածի գիտեմ, որ իմ Փրկիչը սիրում է ինձ, և ես ավելի վստահ կանգնում եմ ճշմարտության համար»:
- «Ես Եկեղեցում նորադարձ եմ: Ես սկսեցի մասնակցել սեմինարիային նույնիսկ նախքան իմ մկրտվելը: Առանց սեմինարիայի ես չգիտեմ, թե արդյոք ընդհանրապես կմկրտվեի: Առանց սեմինարիայի ես չէի ունենա Փրկչին իմ կյանքում հենց հիմա կամ չէի իմանա, որ իմ մեղքերը կարող են ներվել ինձ»: Իրականում Երկնային Հայրը կամ Հիսուս Քրիստոսը երբեք չէին եղել իմ կյանքում: Սեմինարիան օգնեց ինձ գտնել Նրանց և դարձնել Նրանց իմ կյանքի և իմ ապագա երեխաների կյանքի մասը հավերժորեն:
- «Ամեն օր սեմինարիայի գնալը օգնել է ինձ ավելի մոտենալ իմ Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսին, սովորելով Նրա ուսմունքների, իմ հանդեպ Նրա մեծ սիրո և այն մասին, թե ինչպես ես կարող եմ վերադառնալ ու ապրել Նրա հետ»:
- «Երբ ես սեմինարիայում եմ, ես ավելի խորը իմաստ եմ գտնում սուրբ գրություններում: Այն օգնում է ինձ ամեն առավոտ հիշել լինել Քրիստոսի նման իմ ամենօրյա գործերում»:
- «Սեմինարիան սովորեցրել է ինձ, ինչպես կարդալ իմ սուրբ գրությունները և ոչ միայն վայելել դրանք, այլ նաև կիրառել: Ես սովորեցի վարդապետություններ և սկզբունքներ, որոնք օգնեցին ամրացնել իմ վկայությունը սիրող Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին, որը ես կունենամ ինձ հետ իմ կյանքի ողջ ընթացքում»:

Բազմաթիվ օրհնությունները, որ գալիս են սեմինարիա հաճախելուց, օգնում են հասկանալ, թե ինչու են ամբողջ աշխարհով մեկ պատանիները դարձնում այն իրենց օրակարգի առաջնահերթ մասը: ■

ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Սիա պատկերը, թե ինչպես է սեմինարիան աճել տարիների ընթացքում:

1888. Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը կանխատեսում է Եկեղեցու կրթական խորհրդի կազմումը, որը պետք է ղեկավարեր Եկեղեցու կրթական աշխատանքը, ներառյալ դպրոցից հետո կրոնական դասերը:

1912. Ազատ ժամացանկով սեմինարիայի ցերեկային դասերի կազմակերպում, ներառելով 70 ուսանողներ, ովքեր թողնում են ավագ դպրոցի մեկ ժամը, որպեսզի հաճախեն սեմինարիայի: Դասերը ուսուցանվում են Գրանիտե ավագ դպրոցի դիմաց, Սոլթ Լեյք Սիթի, Յուտա, ԱՄՆ:

1925. Անդամագրված ուսանողների թիվը 10,000 է հասնում:

1948. Կազմակերպվել է Կանադայում՝ Միացյալ Նահանգներից դուրս առաջին երկրում:

1950. Ցերեկային սեմինարիայի դասերի կազմակերպում (նախկինում կոչվում էր «վաղ առավոտյան սեմինարիա») Կալիֆոռնիայում, որտեղ ուսանողները հանդիպում են Եկեղեցու ժողովատներում դպրոցից առաջ:

1958. Անդամագրված ուսանողների թիվը հասնում է 50,000-ի:

1958. Կազմակերպվել է Կենտրոնական Ամերիկայում, առաջինը՝ Մեքսիկայում:

1962. Կազմակերպվել է Եվրոպայում, առաջինը՝ Ֆինլանդիայում և Գերմանիայում:

1963. Կազմակերպվել է Ասիայում, առաջինը՝ Ճապոնիայում:

1965. Անդամագրված ուսանողների թիվը հասնում է 100,000-ի:

1967. Սկսում է գործել տնային ուսուցման սեմինարիան գյուղական համայնքներում, երբ ուսանողները պարապում են տանը շաբաթական չորս օր և հավաքվում են միասին շաբաթը մի օր:

1968. Կազմակերպվել է Ավստրալիայում:

1969. Կազմակերպվել է Հարավային Ամերիկայում, առաջինը՝ Բրազիլիայում:

1972. Կազմակերպվել է Աֆրիկայում, առաջինը՝ Հարավային Աֆրիկայում:

1983. Անդամագրված ուսանողների թիվը հասնում է 200,000-ի :

1991: Անդամագրված ուսանողի թիվը հասնում է 300,000-ի:

2012. Կազմակերպվել է 134 երկրներում և աշխարհի տարբեր տարածքներում, անդամագրված ուսանողների թիվը հասնելով 370,000-ի:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Boyd K. Packer, *Teach the Scriptures* (address to Church Educational System educators, Oct. 14, 1977), 3.
2. Լ. Թոմ Փերի, «Բարձրացրեք սանդղակը» *Լիահոնա,* նոյեմբեր 2007, 46:
3. Ռիչարդ Գ. Սքոթ, «Գիտակցիր քո ամբողջ ներուժը», *Լիահոնա,* նոյեմբեր 2003, 42:
4. Gordon B. Hinckley, “Stand True and Faithful,” *Ensign,* May 1996, 93.
5. Gordon B. Hinckley, “The Miracle Made Possible by Faith,” *Ensign,* May 1984, 47.
6. Gordon B. Hinckley, “The State of the Church,” *Ensign,* May 1991, 52.
7. Ezra Taft Benson, “Our Responsibility to Share the Gospel,” *Ensign,* May 1985, 7.
8. Դալլին Հ. Օուքս, «Լավ, ավելի լավ, ամենալավ» *Լիահոնա,* նոյեմբեր 2007, 104:
9. David A. Bednar, “Conclusion and Testimony,” *Welcome to Seminary 2010–2011,* seminary.lds.org/welcome.

ԱՅԳՈՒՄ. ՊՈՂՈՒՄՈՅԻ ՆԱԽՈՐԴ, ՅՈՒՏԱ, ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏՐՄԱՆԴՐԵԼ ԵՆ ՀՕՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՊԻՏԱԿՆԵՐԸ

ԿՈՉՈՒՄ ՆՈՐԱԴԱՐՁԻ ՀԱՄԱՐ

Էլեն Հաննոնեն

Իմ մկրտվելուց կարճ ժամանակ անց 10 տարեկան հասակում Լափենրանտայում՝ Ֆինլանդիա, ես ստացա Եկեղեցու իմ առաջին կոչումը: 1960թ. մեր փոքրիկ ճյուղը անհապաղ կարիք ուներ որևէ մեկի, որ նվագակցեր հաղորդության ժողովին երգվող օրհներգերի ժամանակ: Ինձ խնդրեցին կատարել այդ հանձնարարությունը:

Չնայած մայրս միշտ քաջալերել էր ինձ և եղբորս հետամուտ լինել արվեստին վերաբերող տաղանդներին, ես չգիտեի դաշնամուր նվագել, և մենք դաշնամուր չունեինք: Սակայն ես ուզում էի կատարել իմ ծառայությունը, ուստի մենք ծրագիր կազմեցինք:

Ընտանեկան երեկոյի ժամանակ մենք խոսեցինք այն մասին, թե ինչ նշանակություն ունի այս կոչումը մեր բոլորի համար: Ինչևիցե, քանի որ մայրս ամուրի էր և ուներ երկու պատանի երեխաներ, մենք

Ես նորադարձ էի և չունեի դաշնամուր նվագելու հմտություն: Բայց որքան շնորհակալ եմ ես իմ կյանք փոխող կոչման համար որպես ճյուղի նվագակցող:

ՆԱՄՈՍՅԱՆՆԵՐԻՆ: ՄԱՅՔ ՄԱՍԻՄ

գիտեինք, որ մեծ դժվարություն կլիներ մեզ համար դաշնամուր գնել և վճարել դասերի համար: Մենք որոշեցինք, որ բոլորս էլ կամենում էինք կատարել անհրաժեշտ զոհաբերությունները:

Առաջին զոհաբերությունը, որ իմ ընտանիքը կատարեց, ֆինանսական էր: Մենք որոշեցինք, որ գարունից մինչև աշուն մենք կարող էինք քշել մեր հեծանիվները ավտոբուսից օգտվելու փոխարեն: Իմ եղբայր Մարթին քաջ էր և հատկապես լավ սկսեց հեծանիվ վարելը նույնիսկ ձյան ու սառույցի ժամանակ: Ես դադարեցի ինձ համար հագուստ գնել և սովորեցի կարել: Մենք նաև սովորեցինք ապրել խնայողաբար: Մենք սկսեցինք այգի մշակել իմ տատիկի ու պապիկի տան մոտակայքում, որը քաղաքից դուրս էր, և ուտելիք պահածոյացրեցինք ձմեռվա համար: Մեր «արձակուրդները» դարձան մեր մայրիկի ուղևորությունները դեպի Շվեյցարիայի տաճար կամ պիկնիկները ու ճամբարները մեր տան մոտակայքում:

Երկրորդ զոհաբերությունը, որ մեր ընտանիքը կատարեց, կապված էր ժամանակի հետ: Մենք բաժանեցինք ամենօրյա գործերը և նոր ժամկետ նշանակեցինք մեր այլ միջոցառումների և տնային աշխատանքների համար, որպեսզի ես բավականաչափ ժամանակ ունենայի դաշնամուր պարապելու համար: Մեր զոհաբերությունների և ջանասեր աշխատանքի պատճառով մայրս հաճախ նշում էր, որ մենք ազատ ժամանակ չունեինք փորձանքի մեջ ընկնելու համար, ինչպես ուրիշները մեր տարիքում: Իրականում իմ կոչումը դարձավ ընտանեկան կոչում՝ իմ դաշնամուր նվագելուց նույնիսկ շատ ժամանակ առաջ:

Ես սկսեցի պարապել տեղական դպրոցի երաժշտության ուսուցչի մոտ: Ես պարապում էի, օգտագործելով թղթե ստեղնաշար և Եկեղեցու դաշնամուրը: Երբ իմ դաշնամուրի ուսուցիչը տեղափոխվեց, մենք գնեցինք նրա դաշնամուրը և ինձ ընդունեցին որպես տարածքում մեծ համբավ ունեցող դաշնամուրի ուսուցչի աշակերտ:

Ես ինքնուրույն սովորեցի հիմները և շատ փորձեր կատարեցի ճյուղի երաժշտական ղեկավարի հետ: Բոլորը ինձ քաջալերում էին, նույնիսկ եթե մի «սխալ» նոտա էի նվագում: Իմ ուսուցիչը սարսափած էր, երբ հետո իմացավ, որ ես նվագում էի մարդկանց առաջ առանց նախապես հիմնավոր սովորելու և մտապահելու հատվածները: Սակայն մեկ ձեռքով նվագելը ավելի լավ էր, քան ընդհանրապես երաժշտություն չունենալը:

Ես հեծանիվով գնում էի դասերի, և երբ եկավ ձմեռը, ես փորձեցի քայլել կամ դահուկավարել, եթե հնարավոր էր լինում: Կիրակի օրերին ես մենակ քայլում էի Եկեղեցի, որպեսզի ես կարողանայի մեկ ժամ շուտ գալ և ժամանակ ունենալ ժողովներից առաջ վարժվելու համար: Ես որոշեցի ավտոբուս նստել միայն այն ժամանակ, երբ ջերմաստիճանը իջնում էր -15°C-ից ներքև: Անձրևն ու ձյունը իրոք չէին անհանգստացնում ինձ: Ժամանակը արագ անցնում էր, մինչ ես քայլում էի, քանի որ ես ունեի բազմաթիվ գեղեցիկ հիմներ, որոնք ընկերակցում էին ինձ: Մինչ ես քայլում էի, ես պիոներների հետ անցնում էի հարթավայրերով (տես «Եկեք Սրբեր» *Հիմներ,* էջ 30), քայլում էի Սիոնում բարձր լեռան վրա (տես «Բարձր լեռան վրա», *Հիմներ,* համար 5), և կանգնում էի պատանիների հետ, ովքեր երբեք չեն վարանի (տես «Հավատքին հավատարիմ», *Հիմներ,* համար 254): Ես երբեք չէի կարողանա վարանել՝ ունենալով այդ աջակցությունը, չնայած, որ իմ ընտանիքը և ես միակ Վերջին Օրերի Սրբերն էինք արևելյան Ֆինլանդիայի մեր համայնքում, Ռուսաստանի սահմանների ստվերներում:

Տարիների ընթացքում ես սկսեցի ավելի լավ նվագել և կարող էի դարձնել երաժշտությունը ավելին, քան միայն ճիշտ նոտաներ նվագելը: Ես սովորեցի աղոթքով ընտրել երաժշտություն, որպեսզի Հոգին ներկա լիներ ժողովին: Եվ, ամենակարևորը, ավետարանի մասին իմ վկայությունը եկավ երաժշտության միջոցով: Ես կարող էի հեշտությամբ վերհիշել հիմների զգացողությունները, բառերը և ուղերձները, եթե ես երբևէ որևէ հարց ունենայի: Ես գիտեի, որ ավետարանի սկզբունքները և արարողությունները ճշմարիտ էին, սովորած լինելով դրանք տող առ տող, նոտա առ նոտա:

Ես հիշում եմ մի յուրահատուկ դեպք, երբ այդ սկզբունքների հանդեպ իմ հավատարմությունը փորձվեց: Ես 14 տարեկան էի: Ես սիրում էի լողալ և երազում էի լողալ Օլիմպիական խաղերի ժամանակ: Ես չէի

մրցում կիրակի օրերին, սակայն, այնուամենայնիվ, ես առաջընթաց ունեի: Ի վերջո, երբ Մեխիկո Սիթիի Օլիմպիական Խաղերը մոտեցան, մարզիչը հրավիրեց ինձ մասնակցել հատուկ պարապմունքների:

Պարապմունքները, ինչևիցե, ամեն կիրակի առավոտյան էին՝ կիրակնօրյա դպրոցի ժամանակ: Ես պատճառաբանում էի, որ կարող էի գնալ պարապմունքի և բաց թողնել կիրակնօրյա դպրոցի դասը, քանի որ կարող էի վերադառնալ Եկեղեցի երեկոյան հաղորդության ժողովի ժամին: Ես ավտոբուսի ճանապարհածախսի համար գումար էի խնայել և ծրագրել ամեն ինչ: Առաջին պարապմունքին նախորդող շաբաթ օրը ես ասացի մայրիկիս իմ ծրագրի մասին:

Ես տեսա նրա աչքերում տխրություն և հիասթափություն, սակայն նրա միակ պատասխանն էր, որ որոշումն իմն էր և որ ինձ սովորեցվել էր, թե որն է ճիշտը: Այդ գիշեր ես չէի կարողանում իմ ուղեղից հանել «Ընտրիր ճիշտը» երգի բառերը (*Հիմներ,* համար 239): Բառերը հնչում էին իմ գլխում փչացած ձայնապնակի նման:

Կիրակի առավոտյան ես մի ձեռքում բռնել էի լողի պայուսակը և մյուս ձեռքում երաժշտության պայուսակը, հուսալով, որ մայրս կկարծեր, թե ես գնում էի Եկեղեցի: Ես դուրս եկա և գնացի կանգառ: Այնպես պատահեց, որ կանգառը, որտեղից գնում էի լողասրահ, փողոցի իմ կողմում էր, իսկ ժողովատուն տանողը՝ հակառակ կողմում:

Մի ավտոբուսը կտաներ ինձ դեպի Եկեղեցու իմ կոչումը, մյուսը՝ համաշխարհային վարպետության լողորդի իմ մանկության երազանքները: Իմ նվագած հիմների բառերը շատ անգամներ տվել են ինձ իմ պատասխանը:

Մինչ ես սպասում էի, ես սկսեցի զայրանալ: Իմ ականջներում հնչում էր «Արե՞լ եմ որևէ լավ բան» (*Հիմներ,* համար 223) հիմնի երաժշտությունը, որը նախատեսված էր այդ օրվա կիրակնօրյա դպրոցի համար: Ես գիտեի փորձից, որ դժվար ռիթմով, բարդ բառերով և բարձր նոտաներով այս հիմնը կձախողվեր առանց լավ նվագակցության:

Մինչ ես խորհում էի, երևացին երկու ավտոբուսները: Լողասրահ տանող ավտոբուսը կանգնեց ինձ համար, կանգնեց նաև եկեղեցի տանող ավտոբուսի վարորդը և նայեց ինձ՝ շփոթված, որովհետև նա գիտեր, որ ես միշտ նստում էի իր ավտոբուսը: Մի քանի վայրկյան մեր բոլորի հայացքները սևեռվեցին իրար վրա: Ինչի՞ն էի ես սպասում: Ես ընտրել էի Տիրոջը (տես «Ո՞վ է Տիրոջ կողմում» *Հիմներ,* համար 260): Ես խոստացել էի գնալ այնտեղ, ուր Նա էր ուզում, որ ես գնայի (տես «Կգնամ ուր ուզես, Տեր» *Հիմներ,* համար 270): Պատվիրանները պահելու իմ որոշումը կայացվել էր վաղուց (տես «Պահիր պատվիրանները» *Հիմներ,* համար 303):

Մինչ իմ միտքն ու սիրտը պայքարի մեջ էին, մարմինս գործի անցավ: Ես խելահեղ արագությամբ սլացա դեպի դիմացի փողոցը և ձեռքով արեցի մյուս ավտոբուսի վարորդին: Ես վճարեցի ճանապարհածախսը և անցա Եկեղեցի գնացող ավտոբուսի վերջը, նայելով, ինչպես էին իմ լողալու երազանքները սլանում հակառակ ուղղությամբ:

Բոլորը մտածում էին, որ ես լաց էի լինում այդ օրը, որովհետև զգում էի Հոգին: Բայց իրականում ես լալիս էի, որովհետև իմ մանկության երազանքը հենց նոր խափանվել էր և որովհետև ես ամաչում էի, որ ես նույնիսկ ինձ թույլ էի տվել մտածել կիրակի օրը լողալու մասին: Բայց այդ կիրակի, ինչպես դրան նախորդող և հաջորդող կիրակիներին, ես կատարեցի իմ կոչումը:

Մինչ եկավ ժամանակը, երբ ես պատրաստ էի գնալ քոլեջ, ես սովորեցրել էի մի քանի ճյուղի անդամների ղեկավարել երաժշտությունը և դաշնամուր նվագել: Քոլեջում ես շարունակեցի դաշնամուր նվագել և երգեհոնի դասեր վերցրեցի: Ես կարծում էի, որ Լատինական Ամերիկա գնալու իմ հնարավորությունը ընդմիշտ կորցրել էի, երբ ես հրաժարվեցի լողալու մրցումներից, սակայն Բրիգամ Յանգ Համալսարանում մագիստրոսի կոչում ստանալուց հետո ես միսիա ծառայեցի Կոլումբիայում: Մինչ ես միսիայում էի, ես սովորեցնում էի դաշնամուր նվագել: Ես ուզում էի այս Սրբերին թողնել երաժշտության պարգևը: Կոլումբիայի երեխաներն ու պատանիները ուժեղ արևի տակ անցնում էին մղոններ, որպեսզի հնարավորություն ունենային սովորել դաշնամուր նվագել: Նրանք նույնպես սկսեցին մեկ ձեռքով նվագելուց մինչև որ աստիճանաբար սկսեցին նվագել երկու ձեռքով: Եվ նրանք ավելի շատ բան զոհաբերեցին, քան ես, ջանալով սովորել դաշնամուր նվագել:

Ավելի քան 50 տարի է անցել իմ մկրտությունից: Ես ճամփորդել եմ շատ հեռու Ֆինլանդիայի իմ տնից, բայց անկախ այն բանից, թե որտեղ եմ ես եղել, միշտ պետք է եղել մեկը, որ նվագի հիմները: Երաժշտության համընդհանուր լեզուն կառուցել է հասկացողության և սիրո կամուրջներ բազմաթիվ վայրերում:

Այսօր իմ ձեռքերը դանդաղ են շարժվում և հոդերը բորբոքված են: Շատ ավելի հմուտ երաժիշտներ գրավել են իմ տեղը: Մայրս հաճախ տխրում է, երբ հետ է նայում Եկեղեցում գտնվելու իմ վաղ տարիներին և իմ կատարած զոհաբերություններին, իմ քայլած մղոններին և բաներին, առանց որոնց ես դիմացել եմ: Նա վախենում է, որ ցուրտը նպաստել է իմ հոդերի բորբոքմանը: Այնուամենայնիվ, ես կրում եմ իմ դժվարությունները ուրախությամբ: Ես դուրս եմ թափել իմ ուրախություններն ու տխրությունները երաժշտության մեջ: Ես սովորել եմ ծիծաղել ու լացել իմ մատների միջոցով:

Կոլումբիայում իմ միսիայի ընթացքում ես սովորեցրել եմ դաշնամուր նվագել: Երեխաներն ու պատանիները ուժեղ արևի տակ քայլել են մղոններ, կատարելով մեծ զոհաբերություն, որ ձեռք բերեն երաժշտության պարգևը:

Իմ սիրտը երախտագիտությամբ երգում է, երբ ես մտածում եմ, որ Երկնային Հայրը և Նրա ղեկավարները այնքան մտահոգ են եղել, որ խնդրել են երիտասարդ աղջկան կատարելու այսպիսի դժվար առաջադրանք: Այդ կոչումը օգնեց ինձ ձեռք բերել ավետարանի ամուր հասկացողություն և թույլ տվեց ինձ օգնել ուրիշներին զգալ Հոգին երաժշտության միջոցով: Ես կենդանի ապացույց եմ, որ նորադարձները կոչման կարիք ունեն, նույնիսկ փոքրիկ աղջիկները՝ առանց դաշնամուր նվագելու հմտության: Իմ առաջին կոչման միջոցով ես բացահայտեցի, որ Աստծո հետ անհնարին ոչինչ չկա և որ Նա ծրագիր ու նպատակ ունի Իր երեխաներից յուրաքանչյուրի համար: Եվ երաժշտության միջոցով ես ձեռք բերեցի հաստատուն վկայություն Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի մասին: ■

Լառեն Գանթ
Եկեղեցու ամսագրեր

Վերջին Օրերի Սրբերը օգտագործում են ծխի և ճյուղի խորհուրդները կարիքավորների կյանքը օրհնելու համար:

Ծխի խոր

ԱՇԽԱՏԱՆՔԸ

2011թ. մայիսի 22-ին ճչացող ազդանշանային ձայնի տակ, վիթխարի պտտահողմը հարված հասցրեց Ջոփլինի սրտում, Միսուրի, ԱՄՆ, կործանելով տներ և կյանքեր: Ջոփլինի Առաջին Ծուխը մեծապես վնասվել էր պտտահողմից, բայց Եպիսկոպոս Քրիս Հոֆմանը և ծխի խորհուրդը անմիջապես սկսեցին հաշվել ծխի անդամներին:

«Մենք ունեինք արձագանքման պատրաստի ծրագիր, քանի որ նախօրոք խոսել էինք այդ պատրաստությունների մասին ծխի խորհրդի ժամանակ», - ասել է նա: «Մենք նաև մեր հույսը դրեցինք Հոգու վրա, որ իմանայինք՝ ինչ անել: Հոսանքի լարերը պոկված էին: Բջջային հեռախոսները չէին աշխատում: Մենք աղոթում և սպասում էինք պատասխանների, և դրանք գալիս էին. Դրանք միշտ գալիս էին: Որպես եպիսկոպոս ինձ զոհունակություն էր պատճառում, երբ լսում էի, ինչպես անդամներն ասում էին. «Ես սա եմ արել», և ոչ թե՝ «Ի՞նչ ես ուզում, որ ես անեմ»:

Ջոփլինի պատրաստվածությունը ցույց է տալիս միասնական ծխի խորհրդի զորությունը: «Ծխի խորհրդի ժողովը Եկեղեցու ամենակարևոր ժողովներից մեկն է, - գրել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը, - որովհետև քահանայության քվորումի և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները կարող են քվեարկել և ծրագրել եպիսկոպոսության հետ միասին: . . . Եկեղեցու բոլոր խորհուրդներից և հանձնախմբերից, ես կարծում եմ ծխի խորհուրդը կարող է ամենամեծ ազդեցությունն ունենալ մեր Հոր զավակներին օգնելիս»:[1]

Միավորված սիրով և հավատքով

Պուերտո Ֆրանցիսկո դե Օրելլանայում՝ Էկվադորի ջունգլիների հեռավոր գյուղում, անդամներն ունեն սիրո և հավատքի ամուր կապեր: Ամենամսյա ճյուղի

հուրդների

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Տասներկու Առաքյալներից Երեց Մ. Ռասսել Բալլարդը իր *Խորհրդակցելով մեր խորհուրդներում* գրքում տալիս է հետևյալ երեք խորհուրդները.

«Առաջինը, կենտրոնացեք հիմնական բաների վրա»: Հետևեք *Հեռնարկ 2. Սպասավորել Եկեղեցում*, գլուխ 4-ի հրահանգներին, որը կարելի է գտնել առցանց՝ LDS.org-ի Ծառայելով Եկեղեցում բաժնում:

«Երկրորդ, կենտրոնացեք մարդկանց, ոչ թե ծրագրերի վրա»: Հետևեք «նոր անդամների լիիրավ անդամ դառնալուն, քիչ ակտիվների ակտիվացմանը, երիտասարդներին մտահոգող հարցերին, ամեն անդամի տնտեսական վիճակին և միայնակ մայրերի և որբևայրիների կարիքներին»:

«Երրորդ, խորհրդականները խորհրդի և գաղափարներ փոխանակելու համար են, և ոչ միայն զեկույցների և դասածոսությունների: Ստեղծեք անկեղծությանը նպաստող մթնոլորտ, որտեղ ամեն անձ և խումբ կարևոր է և ցանկացած կարծիք արժեքավոր է»: Անհատները տարբեր տեսակետներ և անցյալ ունեն, ուստի յուրաքանչյուրը կարող է ավելացնել օգտակար հեռանկար անդամների կարիքները հասկանալու հարցում:

Տես Elder M. Russell Ballard of the Quorum of the Twelve Apostles, *Counseling with Our Councils* (1997), 106, 109, 112:

խորհուրդը արտացոլում է նրանց մտահոգությունը: Նրանք առաջինը կենտրոնանում են անհատների և ընտանիքների վրա, այնուհետև օգնության ծրագրերի վրա: Ոգեշնչումը հետևում է:

Շատ անդամներ աշխատանք գտնելու հետ կապված օգնության կարիք ունեն: Ճյուղի խորհուրդը գտնում է, որ անդամների դժվարությունները հաճախ կարող են լուծվել հենց տեղում: Երբ խորհուրդը քննարկում էր միայնակ մոր կարիքները, որը առողջական խնդիրներով փոքրիկ աղջիկ ուներ, Սփոփող Միության նախագահն ասաց, որ գիտեր մի աշխատանքի մասին, որը մայրը կարող էր անել և միևնույն ժամանակ մոտ լինել իր աղջկան:

Ճյուղի խորհուրդը նաև դիմում է Եկեղեցու միջոցներին, ինչպես օրինակ ՎՕՍ Զբաղվածության ծառայությունների կարիերայի հետ կապված տեղեկությանը: Նրանք[2] Նրանք կազմակերպեցին մի դասընթաց, որն

ՇԱՀՈՒՄ՝ ԼՈՒՍԱՆՆԱՎՈՐԸ՝ ՋՈՐՇՈՒՆ Ջ. ՓԵՐԳԻՆԻ ԿՈՂՄԻՑ

ուսուցանվեց ճյուղի անդամներից մեկի կողմից և օգնեց մեկ այլ անդամի գտնել ավելի լավ աշխատանք:

Ռամիռո Ռեյես ճյուղի նախագահության առաջին խորհրդականը, ասել է ճյուղի խորհրդի վերաբերյալ. «Մենք գործիքներ ենք Տիրոջ ձեռքում: Նա կհասնի Իր նպատակներին մեր գործերի միջոցով»:

Տաճար տանող ճանապարհը

Լիվերփուլում՝Նյու Յորք, ԱՄՆ, Երեխաների խմբի նախագահ Մելիսսա Ֆիսկը, հաճախելով ծխի խորհրդի ժողովին, ստացել էր խորաթափանցություն դրա զորության վերաբերյալ: Երբ նա ձեռքը տարել էր պայուսակը նոթատետրը հանելու համար, նա գտավ մի նկար, որտեղ Երեխաների խմբի 28 սաներ կանգնած էին Պալմիրա Նյու Յորք Տաճարի աստիճաններին էին: Բոլորը ծածկված էին իշամեղվի խայթոցներով: Մի պահ նկարը շեղեց նրա ուշադրությունը ժողովից և նա մի պահ վերադարձավ այն օրը, երբ ծխի Երեխաներ խումբը բառը այցելել էր Պալմիրա վայելելու տաճարային հողերի սուրբ զգացողությունը: Դժբախտաբար, երբ երեխաները պարզեցին իրենց ծածկոցները, նրանք պատահաբար քանդեցին իշամեղվի բույնը:

Յուրաքանչյուրի համար հոգ տանելուց հետո ղեկավարները հրավիրեցին երեխաներին դիպչել տաճարին: Երեխաները մերժեցին, որովհետև նրանք վախենում էին, որ այնտեղ կարող են լինել ավելի շատ իշամեղուներ: Ուստի, ծնողներն ու ուսուցիչները շարք կանգնեցին և ճանապարհ ստեղծեցին տաճարին մոտենալու համար: Սա քաջություն հաղորդեց երեխաներին:

Ո՞Վ Է ՆԵՐԳՐԱՎՎՈՒՄ ԾԽԻ ԿԱՄ ՃՅՈՒՂԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ:

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների հետևյալ ղեկավարները հաճախում են խորհուրդներին երկու պատճառով. (1) որպես ծխի խորհրդի անդամներ, ովքեր օգնում են եպիսկոպոսին լուծումներ գտնել ծխի կարիքների և մտահոգությունների հետ

Եպիսկոպոսություն
Եպիսկոպոսությունը պատասխանատու է ծխի բոլոր անդամների, կազմակերպությունների և միջոցառումների համար: Եպիսկոպոսը նախագահում է ծխի խորհրդին, սակայն նա կարող է ավելի լավ որոշումներ կայացնել, իր խորհրդականների և ծխի խորհրդի հետ հարցերը քննարկելուց հետո:

(Տես *Ձեռնարկ 2.Սպասավորել Եկեղեցում,* 4.1; 4.2:)

Ծխի գործավար
«Ծխի գործավարը ծխի խորհրդի ժողովի ժամանակ գրի է առնում հանձնարարվող աշխատանքներն ու կայացրած որոշումները: . . . Նա նաև տալիս է վիճակագրական տվյալների վերաբերյալ տեղեկություններ Եկեղեցու հաշվառման համակարգչային ծրագրերից»:

(*Ձեռնարկ 2,* 4.6.4:)

Գործադիր քարտուղար
«Գործադիր քարտուղարը նախապատրաստում է ծխի խորհրդի ժողովների օրակարգերը:. . . Եպիսկոպոսը նաև կարող է խնդրել նրան օգնել հետևել ծխի խորհրդի անդամների կողմից հանձնարարությունների կատամանը:. . . [Նա] կարող է նաև ապահովել ծխի խորհրդի և քահանայության գործադիր հանձնախմբի միջև շարունակելի կապը»:

(*Ձեռնարկ 2,* 4.6.5:)

Մելքիսեդեկյան Քահանայության ղեկավարներ
Բարձրագույն քահանայության խմբի ղեկավարը և երեցների քվորումի նախագահը պատասխանատու են այն տղամարդկանց հոգևոր և նյութական բարօրության համար, ում նրանք նախագահում են: Եպիսկոպոսը կարող է քվորումի և խմբի ղեկավարներին վերավստահել որոշ աշխատանքներ, որոնք նա կատարում է ընտանիքների հետ:

(Տես *Ձեռնարկ 2,* 7:)

Ծխի միսիայի ղեկավար
Ծխի միսիայի ղեկավարը համաձայնեցնում է ծխի միսիոներական աշխատանքը: Նա աշխատում է լիաժամկետ և ծխի միսիոներների հետ: Եպիսկոպոսը կարող է նրան խնդրել վարել միսիոներական աշխատանքի հետ կապված զրույցները ծխի խորհրդի ժողովների ժամանակ:

(Տես *Ձեռնարկ 2,* 5.1.3:)

Երբ Մելիսսան վերադարձրեց իր ուշադրությունը դեպի ծխի խորհրդի ժողովը, նա մտածեց. «Եթե միայն ամեն մեկը, տաճարի ճանապարհով առաջ գնալիս, կարողանար շրջապատված լինել այսպիսի սիրող ընկերներով և ղեկավարներով»:

Նրա մտքերը ընդհատվեցին, երբ նա լսեց Սփոփող Միության նախագահի դիտողությունը կարիքի մեջ գտնվող մի քրոջ մասին. «Նա Եկեղեցում չէր անցած կիրակի: Ես կստուգեմ, որ նրա այցելող ուսուցիչները տեղեկացնեն նրան սպասվող տաճարային ուղևորության մասին»:

«Այժմ դժվար պահ է նրանց համար», - ավելացրեց երեցների քվորումի նախագահը: «Ես կճշտեմ նրանց տնային ուսուցիչներից և կտեսնեմ, թե կա որևէ բան, որ մենք կարող ենք անել:»:

«Երիտասարդ կանայք կարող են օգնել, երեխաներին նայելով», - ասաց Երիտասարդ Կանանց նախագահը:

Երբ Մելիսսան նայեց ծխի խորհրդի անդամների դեմքերին, նա տեսավ անկեղծ հոգատարություն և մտահոգություն: Ժպիտ հայտնվեց նրա դեմքին. «Տերը պատրաստել է ճանապարհներ, որպեսզի Իր զավակները պաշտպանված և սիրված լինեն, - մտածեց նա, - Ծխի Խորհուրդը»:

Ճիշտ ինչպես Ջոփլինում, Պուերտո Ֆրանցիսկո դե Օրելաննայում և Լիվերփուլում, Եկեղեցու ղեկավարները աշխարհով մեկ շարունակում են բացահայտել ծխի և ճյուղի խորհուրդների օրհնությունները: Այդ ճանապարհին նրանց կնվաճեն այդ խորհուրդների արտասովոր զորությունը, որն օգնում է Տիրոջը օրհնել Իր զավակներին և իրականացնել Իր աշխատանքը: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. M. Russell Ballard, *Counseling with Our Councils: Learning to Minister Together in the Church and in the Family* (1997), 102.
2. *The Career Workshop Participant's Workbook* (item no. 35163) is available through store.lds.org, Distribution Services, or Church employment resource centers.

կապված, և (2) որպես իրենց կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նրանք միասին աշխատում են սիրով ծառայելու և ամրացնելու անհատներին և ընտանիքներին ծխում կամ ճյուղում: (Ծխերին և եպիսկոպոսությանը կատարված հղումները վերաբերում են նաև ճյուղերին և ճյուղի նախագահություններին):

Սփոփող Միության Նախագահ

Սփոփող Միության նախագահը ներկայացնում է ծխի 18 տարեկանից բարձր կանանց: Նա անում է այն ամենը, ինչ կարող է, որպեսզի օգնի կանանց զարգացնել իրենց հավատքը և անձնական արդարակեցությունը, ամրացնել ընտանիքները և տները, և օգնել կարիքավորներին:

(Տես *Զեռնարկ 2*.9:)

Երիտասարդ Տղամարդկանց Նախագահ

Երիտասարդ Տղամարդկանց նախագահը ձգտում է ամրացնել ծխի 12-ից 18 տարեկան երիտասարդ տղամարդկանց: Իր խորհրդականների աջակցությամբ, նա օգնում է Ահարոնյան Քահանայության նախագահությանը (եպիսկոպոսությանը) և վերահսկում սքաուտների ծրագիրը, որտեղ որ այն գործում է:

(Տես *Զեռնարկ 2*, 8.3.4:)

Երիտասարդ Կանանց Նախագահ

Երիտասարդ Կանանց նախագահը փնտրում է ամրացնել 12-ից 18 տարեկան երիտասարդ կանանց: Նա պատասխանատու է «օգնելու յուրաքանչյուր երիտասարդ կնոջ արժանի լինել կապելու և պահելու սուրբ ուխտերը և ստանալու տաճարային արարողությունները»:

(*Զեռնարկ 2*, 10.1.1:)

Երեխաների Խմբի Նախագահ

Երեխաների Խմբի նախագահը ներկայացնում է ծխի 18 ամսականից մինչև 11 տարեկան երեխաներին: Նրա կարծիքը օգտակար կլինեն, երբ ծխի խորհուրդը խորհում է ինչ-որ հարցի շուրջ, որը կապված է ծխի երեխաների հետ:

(Տես *Զեռնարկ 2*, 11:)

Կիրակնօրյա դպրոցի նախագահ

Կիրակնօրյա դպրոցի նախագահը պատասխանատու է ավետարանի ամբողջ ուսուցման համար Կիրակնօրյա դպրոցի ընթացքում: «Նա գալիս է ծխի խորհրդի ժողովներին պատրաստ առաջարկելու եղանակներ, որոնցով անդամները կարող են բարելավել իրենց ուսումնասիրությունն ու ուսուցումը եկեղեցում և տներում»:

(*Զեռնարկ 2*, 12.2.2:)

Ձեր կոչումներում ավելի շատ հաջողության հասնելու համար այցելեք Ղեկավարների Ուսուցման Գրադարան, որը մատչելի է մի քանի լեզուներով leadershiplibrary.lds.org կայք-էջում:

Ռոզմարի Մ. Վիքսոմ
Երեխաների Խմբի
Գերագույն Նախագահ

Ժամանակ տրամադրել խոսելուն և լսելուն

Այսօր ավելի լավ շփվելու կանխամտածված մեր ջանքերը կօրհնեն մեր ընտանիքները հավերժորեն:

Կատարյալ աշխարհում յուրաքանչյուր երեխա դպրոցից կվերադառնար տուն և նրան կողջունեին նոր թխված շոկոլադե խմորեղենով, մի մեծ բաժակ սառը կաթով և մայրը պատրաստ կլիներ ժամանակ տրամադրել խոսելու և լսելու իր երեխայի անցկացրած օրվա մասին: Մենք չենք ապրում կատարյալ աշխարհում, ուստի դուք կարող եք շրջանցել խմորեղենն ու կաթը, եթե ցանկանում եք, բայց մի շրջանցեք «ժամանակը՝ խոսելու և լսելու համար»:

Քսանինը տարի առաջ Առաջին Նախագահության Երկրորդ ԽորհրդականՆախագահ Ջեյմս Ի. Ֆաուստը (1920-2007) դժգոհեց, որ ընտանիքները շատ քիչ ժամանակ են անցկացնում միասին: Մտածեք այդ մասին: 29 տարի առաջ գերագույն համաժողովի ժամանակ նա ասաց. «Այսօրվա ընտանիքների հիմնական խնդիրներից մեկն այն է, որ մենք ավելի ու ավելի քիչ ժամանակ ենք անցկացնում միասին: . . . Միասին անցկացրած ժամանակը թանկարժեք ժամանակ է, որի կարիքն ունենք խոսելու, լսելու, խրախուսելու և ցուցադրելու համար, թե ինչպես պետք է արվի ամեն-ինչ»:[1]

Երբ մենք ժամանակ ենք անցկացնում իրար հետ և խոսում ենք մեր երեխաների հետ, մենք սկսում ենք ճանաչել նրանց և նրանք սկսում են ճանաչել մեզ: Մեզ համար կարևոր բաները, մեր սրտի իրական զգացմունքները կդառնան յուրաքանչյուր երեխայի հետ մեր զրույցների մասը:

Ո՞րն է ձեր սրտից բխող առաջին կարևոր ուղերձը, որը դուք կուզենայիք կիսել ձեր երեխայի հետ:

Մարգարե Մովսեսը սովորեցնում է մեզ Երկրորդ Օրինաց գրքում.

«Սիրիր քո Եհովայ Աստուծուն բոլոր սրտովդ, բոլոր հոգիովդ եւ բոլոր զօրութիւնովդ:

Եվ այս խոսքերը, որ ես այսօր քեզ պատուիրեցի, քո սրտի մեջ լինեն:

Եվ կրկնիր նորանք քո որդկանցը, *խօսիր* նորանց վերայ քո տան մեջ նստած ժամանակդ եւ ճանապարհի գնացած ժամանակդ, եւ պառկելիս եւ վեր կենալիս» (Երկրորդ Օրինաց Զ.5-7, ընդգծումներն ավելացված են):

Եվ կարող եմ ես ավելացնել ևս մեկը. «Եվ երբ դու ուտում ես ճաշի սեղանի շուրջ միասին»:

Եթե մենք ցանկանում ենք,որ մեր ընտանիքները հավերժ միասին լինեն, մենք այդ գործընթացը պետք է սկսենք այսօր: Մեր երեխաների հետ խոսելու համար ժամանակ տրամադրելը ներդրում է մեր հավերժական ընտանիքի համար, մինչ մենք միասին քայլում ենք դեպի հավերժական կյանք տանող ճանապարհով:

Իլլիանոյսից՝ ԱՄՆ, մի մայր կիսվել է, թե ինչպես է նա ժամանակ գտել իր երեխաների հետ խոսելու համար:

«Երբ մեր երեխաները փոքր էին, ես սովորություն ձեռք բերեցի դիտել մի քանի սիրած հեռուստատեսային ծրագրեր: . . . Ցավոք, ծրագրերը սկսվում էին հենց երեխաների քնելու ժամին:

. . . Հանկարծ ես հասկացա, որս իմ ծրագրերը դրել էի իմ ցուցակի սկզբում, իսկ երեխաներին շատ ավելի հեռվում: Որոշ

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՋՈՆԳ ՎԻՔՄՈՐ ԿՈՂՄԻՑ © BUSATH PHOTOGRAPHY, ԱԿՈՒՅԶԱՐԴՈՒՄԸ՝ ԲՐՈՒՆԻ ՍԼԵՅՏԻ

ժամանակ ես փորձեցի կարդալ նրանց համար քնելուց առաջ՝հեռուստացույցը միացրած, բայց գիտեի իմ սրտում, որ դա լավագույն տարբերակը չէր: Մինչ ես խորհում էի օրերի ու շաբաթների մասին, որոնք կորցրել էի իմ հեռուստատեսային սովորության պատճառով, սկսեցի մեղավոր զգալ և որոշեցի փոխվել: Որոշ ժամանակ պահանջվեց, որպեսզի համոզեի ինքս ինձ, որ ես իրոք կարող էի անջատել հեռուստացույցը:

«Հեռուստացույցը անջատած պահելուց մոտ երկու շաբաթ անց ես զգացի, որ ծանրությունը ինչ-որ կերպ պակասել էր: Ես հասկացա, որ ավելի լավ էի ինձ զգում, նույնիսկ ինչ-որ ձևով ավելի մաքուր, և ես գիտեի, որ ես կատարել էի ճիշտ ընտրություն»:[2]

Քնելու ժամը կատարյալ ժամանակ է խոսելու համար:

Հելամանը ասել է դեռահաս զինվորների մասին. «Նրանք կրկնեցին ինձ իրենց մայրերի խոսքերն՝ ասելով. Մենք չենք կասկածում, մեր մայրերը գիտեին դա» (Ալմա 56.48):

«Իրենց մայրերի խոսքերն» էին , որ սովորեցրել էին նրանց: Իրենց երեխաների հետ խոսելով, այդ մայրերը ուսուցանեցին Աստծո խոսքը:

Պահպանել անձնական հաղորդակցումը

Շատ բարիքներ գալիս են խոսելուց, և հակառակորդը տեղյակ է ասված բառերի զորության մասին: Նա կցանկանար պակասեցնել հոգին, որ գալիս է մեր տուն, մինչ մենք խոսում, լսում, քաջալերում ենք միմյանց և միասին տարբեր բաներ անում:

Սատանան զուր փորձեց կանխել Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնումը մեր տնտեսությունում, փորձելով ընդհատել խիստ կարևոր զրույցը Ջոզեֆ Սմիթի և Հայր Աստծո ու Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջև:

Ջոզեֆն ասաց. «Անմիջապես, ինձ հափշտակեց մի ինչ-որ ուժ, որն ամբողջովին հաղթահարեց ինձ, և այնպիսի մի ապշելի ազդեցություն ունեցավ ինձ վրա, որ լեզուս կարծես կապվեց, այնպես որ ես չէի կարողանում խոսել» (Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.15):

Հակառակորդը շատ կուզեր կապել մեր լեզուն, որևէ կերպ խանգարեր մեզ բարձրաձայն արտահայտել մեր սրտի զգացմունքները դեմ առ դեմ: Նա մեծ հաճույք է ստանում սառը վերաբերմունքից և ուշադրությունը շեղող բաներից, նա հաճույք է ստանում աղմուկից, նա հաճույք է ստանում անտարբեր զրույցներից, ցանկացած բանից, որ կզրկեր մեզ ջերմ ձայնից և անձնական զգացմունքներից, որ գալիս են դեմ առ դեմ խոսելուց:

Լսել մեր երեխաների սրտերը

Լսելը նույնքան կարևոր է, որքան խոսելը: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ասել է. «Եթե մենք սիրով լսենք, մենք կարիք չենք ունենա մտածելու, թե ինչ ասենք: Այն կտրվի մեզ . . . Հոգով»:[3]

Երբ մենք լսում ենք, մենք տեսնում ենք նրանց սրտերը, ովքեր մեր շուրջն են: Երկնային Հայրը ծրագիր ունի Իր զավակներից յուրաքանչյուրի համար: Պատկերացրեք, եթե մենք կարողանայինք մի ակնթարթ տեսնել մեր երեխաների անհատական ծրագրերը: Ի՞նչ կլիներ, եթե մենք կարողանայինք իմանալ, թե ինչպես ավելացնել նրանց հոգևոր պարգևները: Ի՞նչ կլիներ, եթե մենք կարողանայինք իմանալ, թե ինչպես օգնել երեխային հասնել իր ներուժին: Ի՞նչ կլիներ, եթե մենք կարողանայինք իմանալ, թե ինչպես օգնել յուրաքանչյուր երեխային անցում կատարել մանկական հավատքից դեպի վկայության:

Ինչպե՞ս մենք կարող ենք իմանալ:

Մենք կարող ենք սկսել իմանալ լսելով:

Մի Վերջին Օրերի Սուրբ հայր ասել է. «Ես ավելի մեծ բարիք եմ գործում, երբ լսում եմ իմ երեխաներին, քան երբ ես եմ ինչ-որ բան ասում նրանց: . . . Ես աստիճանաբար սովորել եմ, որ իմ երեխաները չեն ուզում իմ պատրաստի, կյանքի ընթացքում ապացուցված և իմաստուն պատասխանները: . . . Նրանց համար իրենց հարցերը տալու և իրենց խնդիրների մասին խոսելու հնարավորությունը ավելի կարևոր է, քան իմ պատասխանները ստանալը: Սովորաբար, երբ նրանք ասում են այն ամենը, ինչ ուզում էին ասել, եթե ես լսում եմ բավականաչափ երկար ու լավ, նրանց իրականում պետք չեն իմ պատասխանները: Նրանք արդեն իսկ գտել են իրենց պատասխանը»:[4]

Ժամանակ է պահանջվում, որպեսզի կարողանանք կենտրոնանալ այն բաների վրա, որոնք մեծ նշանակություն ունեն: Խոսելը, լսելը և խրախուսելը արագ չեն տրվում: Դրանք չեն կարող հապճեպ արվել կամ պլանավորվել. դրանք տեղի են ունենում ժամանակի ընթացքում: Դրանք տեղի են ունենում, երբ մենք *անում* ենք բաներ միասին՝աշխատում ենք միասին, ստեղծում ենք միասին և խաղում ենք միասին: Դրանք պատահում են, երբ մենք անջատում ենք զանգվածային լրատվամիջոցները, ցած ենք դնում ուշադրություն շեղող աշխարհիկ բաները և կենտրոնանում ենք իրար վրա:

Դա անելը դժվար է: Երբ մենք կանգ ենք առնում և ամեն ինչ անջատում ենք, մենք պետք է պատրաստ լինենք նրան, ինչ կկատարվի: Սկզբում լռությունը կարող է հեղձուցիչ լինել. ինչ-որ բանից զրկվելը շփոթեցնող զգացողություն կարող է առաջացնել: Եղեք համբերատար, սպասեք ընդամենը մի քանի վայրկյան, և հետո վայելեք: Ձեր ամբողջ ուշադրությունը սևեռեք

ձեզ շրջապատողների վրա, հարցնելով իրենց մասին և հետո սկսեք լսել: Ծնողներ, խոսեք ձեր երեխային հետաքրքրող հարցի շուրջ: Ծիծաղեք անցյալի վրա և երազեք ապագայի վերաբերյալ: Ջնչին խոսակցությունը կարող է նույնիսկ բացել իմաստալից զրույց:

Առաջնահերթությունը տալ մեր հավերժական նպատակին

Անցած գարուն, մինչ ես այցելում էի երիտասարդ կանանց դասարան, ուսուցիչը խնդրեց դասարանին գրել մեր 10 առաջնահերթությունները: Ես արագ սկսեցի գրել: Ես պետք է խոստովանեմ, իմ առաջին միտքը սկսվում էր՝ «Համար 1. Մաքրել խոհանոցի մատիտների դարակը»: Երբ մեր ցուցակները լրացված էին, Երիտասարդ Կանանց ղեկավարը խնդրեց մեզ կիսվել մեր գրածով: Էբբին, ով նոր էր դարձել 12 տարեկան, նստած էր իմ կողքին: Սա Էբբիի ցանկն է.

1. Գնալ քոլեջ:
2. Դառնալ ինտերիերի դիզայներ:
3. Գնալ միսիայի Հնդկաստան:
4. Ամուսնանալ տաճարում վերադարձած միսիոների հետ:
5. Ունենալ հինգ երեխա և տուն:
6. Ուղարկել իմ երեխաներին միսիա և քոլեջ:
7. Դառնալ «խմորեղեն տվող» տատիկ:
8. Երես տալ թոռնիկներին:
9. Ավելի շատ բան սովորել ավետարանի մասին և վայելել կյանքը:
10. Վերադառնալ ապրելու Երկնային Հոր հետ:

Ես ասում եմ. «Շնորհակալություն, Էբբի: Դու սովորեցրեցիր ինձ մեր բոլորի համար Երկնային Հոր ծրագրի մասին պատկերացում ունենալ: Երբ դուք գիտեք, որ քայլում եք ճանապարհով, չնայած ինչքան էլ շրջանցիկ ճանապարհներ հայտնվեն, դուք ապահով կլինեք: Երբ ձեր ճանապարհը կենտրոնացած է գերագույն նպատակի վրա, որը վեհացումն ու Երկնային Հոր մոտ վերադառնալն է, դուք կհասնեք այնտեղ»:

Որտե՞ղ էր Էբբին գտել հավերժական նպատակի այս հասկացողությունը: Այն սկսվում է մեր տներում: Այն սկսվում է մեր ընտանիքներում: Ես հարցրեցի նրան. «Ի՞նչ եք դուք անում ձեր ընտանիքում այսպիսի առաջնահերթություններ ստեղծելու համար»:

Սա եղավ նրա պատասխանը. «Բացի սուրբ գրությունները կարդալուց, մենք ուսումնասիրում ենք *Քարոզիր Իմ Ավետարանը*»: Հետո նա ավելացրեց. «Մենք շատ ենք խոսում ընտանեկան երեկոների ժամանակ, միասին ընթրելիս և մեքենայում»:

Նեփիին գրել է. «Մենք խոսում ենք Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով, մենք քարոզում ենք Քրիստոսի մասին»: Ինչու՞: «Որ մեր զավակները կարողանան իմանալ, թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար» (2 Նեփի 25.26):

Խոսելը, լսելը, իրար քաջալերելը և որպես ընտանիք միասին ինչ-որ բան անելը մեզ ավելի կմոտեցնի մեր Փրկչին, ով սիրում է մեզ: Այսօր՝ հենց այս օրը, ավելի լավ շփվելու մեր կանխամտածված ջանքերը կօրհնեն մեր ընտանիքներին հավերժորեն: Ես վկայում եմ, որ երբ մենք խոսում ենք Քրիստոսի մասին, մենք նաև հրճվում ենք Քրիստոսով և Քավության պարգևով: Մեր երեխաները կկարողանան իմանալ, «թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար»: ■

Սոլթ Լեյք Սիթիի ցցի համաժողովի հեռարձակման ելույթից՝ տրված 2010թ. հոկտեմբերի 24-ին:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. James E. Faust, “Enriching Family Life,” *Ensign,* May 1983, 41.
2. Susan Heaton, “Talk Time Instead of TV Time,” *Ensign,* Oct. 1998, 73.
3. Jeffrey R. Holland, “Witnesses unto Me,” *Liahona,* July 2001, 16.
4. George D. Durrant, “Pointers for Parents: Take Time to Talk,” *Ensign,* Apr. 1973, 24.

ՀԱՊԱԼԱՍՆ ՈՒ ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ

Մի քանի տարի առաջ մեր ընտանիքը տեղափոխվեց մարդաշատ ու ծանրաբեռնված մեծ քաղաքից մի հանգիստ, փոքրիկ գյուղից դուրս գտնվող մի փոքրիկ գյուղական կալվածք: Մոտակայքում կար հապալասի լքված մի ֆերմա, և տիրոջ ընկերների միջոցով մենք թույլտվություն ստացանք հավաքել այնքան հապալաս, որքան կցանկանայինք:

Այդ ամառ ամեն շաբաթ մի քանի առավոտ մենք զամբյուղներով ու պայուսակներով լցվում էինք մեքենայի մեջ և անց էինք կացնում սքանչելի և համեղ մի ժամ՝ հավաքելով հապալաս: Մի առավոտ մեր կրտսեր տղան՝ Հայրումը, կարծես ցանկություն չուներ մեզ միանալու: Նա վստահ էր, որ մենք հավաքել էինք ողջ հապալասը և որ կրկին գնալը ժամանակի կորուստ կլիներ: Որքան զարմացած էր նա՝ գտնելով այնքան հապալաս, որքան միշտ: Կային փնջեր այն տեղերում, որտեղ նա նայել էր, և ջրալի հապալասներ կային ճյուղերի վրա, որտեղ նա վստահ էր, որ նայել էր ավելի շուտ:

Այդ նույն ժամանակ ծխի երիտասարդների ղեկավարները կոչ արեցին մեր պատանիներին կարդալ ամբողջ Մորմոնի Գիրքը մինչև այդ օգոստոսին դպրոցների սկսվելը: Մեր երեխաները կոչը բերեցին տուն, և մեր ընտանիքը պարտավորվեց միանալ նրանց իրենց ջանքերում:

Մորմոնի Գիրքը դեռ նոր էինք ավարտել, երբ ստացանք 2005թ. Օգոստոսի մեր *Լիահոնան*, որում Նախագահ Գորդոն Բ. Հինքլին (1910-2008) կոչ էր անում մինչև տարվա վերջ կարդալ ամբողջ Մորմոնի Գիրքը: Հայրումը և նրա եղբայր Ջոզեֆը ուրախությամբ եզրակացրին, որ մենք արդեն

Հայրումը վստահ էր, որ մենք հավաքել էինք ամբողջ հապալասը և որ հապալասի ֆերմա կրկին գնալը ժամանակի կորուստ կլիներ:

հնազանդվել էինք մարգարեին: Այնուհետև նրանց մեծ եղբայրն ու քույրը՝ Սեթն ու Բեթանին, հիշեցրեցին նրանց, որ Նախագահ Հինքլին խնդրել էր մեզ կարդալ այն նորից, անկախ նրանից, թե քանի անգամ էինք մենք արդեն այն կարդացել:

«Բայց ինչո՞ւ», - հարցրեցին տղաները: «Մենք կարդացել ենք ամեն բառ, և էլ ի՞նչ կա այնտեղ սովորելու բացի նրանից, ինչը մենք արդեն կարդացել ենք»:

Մի քանի րոպե լռությունից հետո ինչ-որ մեկը հիշատակեց հապալասը: «Հիշո՞ւմ եք, երբ մենք մտածում էինք, որ մենք հավաքել էինք ողջ հապալասը: Սակայն երբ մենք վերադառնում էինք, այնտեղ միշտ հապալաս էինք գտնում: Անկախ նրանից, թե քանի անգամ մենք գնացինք, անկախ նրանից, թե որքան հաճախակի գնացինք, այնտեղ միշտ հապալաս կար»:

Մենք արագ հասկացանք կապը: Ինչպես մեր մոտակայքի ֆերման և դրա համեղ հապալասի առատ բերքը, Մորմոնի Գիրքը հոգևոր սննդի մշտական աղբյուր է նոր ճշմարտություններով, որոնք պետք է բացահայտել: Ուստի, մենք սկսեցինք ևս մեկ անգամ կարդալ Մորմոնի Գիրքը:

Երբ ես ընդունեցի մարգարեի կոչը, ես կարդացի բաներ Մորմոնի Գրքում, որոնք շատ անգամներ կարդացել էի նախկինում, բայց ես տեսա դրանք այլ կերպ կամ հասկացա դրանք, կարծես, դրանք վերաբերվում էին նոր պայմաններին կամ խնդիրներին: Ես գիտեմ, որ ամեն անգամ, երբ մենք անկեղծորեն կարդում ենք Մորմոնի Գիրքը, մենք կարող ենք ստանալ նոր խորաթափանցություն և ավելի մոտենալ Փրկչին: ■

Սուելլեն Ս. Վեյլեր, Ջորջիա, ԱՄՆ

ԵՍ ՉԳԱՑԻ, ՈՐ ՊԻՏԻ ԳԱՄ

Բուենոս Այրեսում՝ Արգենտինա, իմ մկրտությունից երկուս ու կես տարի անց երեցներից մեկի բառերը, ով ուսուցանել էր ինձ, շարունակում էին հնչել իմ ականջներում. «Ես գիտեմ՝ դու միսիոներ ես»: Ես միշտ հիշեցի զորեղ պատասխանը, որն ունեցա, երբ աղոթեցի իմանալու համար, թե արդյոք այն զգացումը, որ մխրճվել էր իմ սրտում, իրոք ճիշտ էր: 20 տարեկանում ես գիտեի, որ պետք է պատրաստվեի միսիայի:

Բայց ինչպե՞ս ես կարող էի միսիոներ լինել: Ես ոչնչով նման չէի հրեշտակային երիտասարդ տղամարդկանց, ովքեր ուսուցանել էին ինձ ավետարանը: Եվ ինչպե՞ս ես կարող էի թողնել իմ աշխատանքը: Որտե՞ղ ես կապրեի տուն գալուց հետո: Շատ դժվար էր գտնել այն տեղը, որն ես արդեն ունեի, չնայած որ այն ընդամենը մի փոքրիկ սենյակ էր ինչ-որ մեկի տան հետևում:

Մի երեկո տուն վերադառնալիս, այս զգացմունքներն ու կասկածները կրկին զբաղեցրեցին իմ միտքը: Երբ ես հասա տուն, փորձեցի որոշում կայացնել: Ես որոշեցի ծնկի իջնել և աղոթել օգնության համար: Երբ արեցի դա, ուժեղ զգացում ունեցա, որ ես պետք է գնայի տեսնելու Լեանդրոյին, իմ մի ընկերոջ, ով մեծ ուժ է եղել ինձ համար տխուր պահերին:

Սակայն կեսգիշերին նրան արթնացնելու միտքը ստիպեց ինձ դիմադրել այդ առաջին մղմանը: Ես գիտեի, որ նա վաղ արթնանում էր աշխատանքի գնալու համար, և ես չէի համարձակվի թակել նրա դուռը այդ ժամին: Ես պայքարում էի այդ մտքի դեմ, բայց շարունակում էի զգալ գնալու ու նրան տեսնելու անհրաժեշտությունը: Բայց և այնպես ես ընտրեցի անտեսել այն:

Դրա փոխարեն ես որոշեցի քայլել մեր թաղամասի շուրջը մի քիչ թարմ օդ շնչելու համար: Սակայն,

Երբ ներս մտա, տեսա Լեանդրոյին՝ նստած իմ սենյակում: Հոգին իջավ ինձ վրա, և իմ մոտ այնպիսի զգացողություն էր, կարծես շնչահեղձ էի լինում:

հիշելով, ո բաց էի թողել իմ դուռը, սկսեցի քայլել դեպի տուն: Երբ ներս մտա, տեսա Լեանդրոյին՝ նստած իմ սենյակում: Հոգին իջավ ինձ վրա, և իմ մոտ այնպիսի զգացողություն էր, կարծես շնչահեղձ էի լինում: Զգացմունքներից խեղդվող ձայնով ես հարցրեցի նրան. «Ի՞նչ ես անում այստեղ»:

«Ես չգիտեմ», - ասաց նա: «Ես պարզապես զգացի, որ պետք է գայի քեզ տեսնելու»:

Ես ասացի նրան կասկածների մասին, որոնք ունեի միսիայի վերաբերյալ: Նա բերեց իր վկայությունը և քաջալերեց ինձ: Հետո նա օգնեց ինձ լրացնել իմ միսիայի թղթերը, որոնք ես տարա իմ ծխի նախագահի մոտ հաջորդ առավոտ: Երկու ամիս անց ես ստացա իմ կանչը Արգենտինա Մալթա Միսիա:

Ես գիտեմ, որ իմ ընկերը Աստծո ձեռքում մի գործիք էր այդ գիշեր և իմ ողջ սրտով ես գիտեմ, որ Երկնային Հայրը լսում և պատասխանում է աղոթքներին, որոնք ասվել են մաքուր սրտով և անկեղծ միտումով: ■

Ալդո Ֆաբիո Մորակկա, Նևադա, ԱՄՆ

ԱՎԵՏԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ 6, ՀԱՄԱՐՈՒՄՈՎՈՒՄ

ԵՍ ՄԱՀԱՆՈՒՄ ԵՄ

Որպես հետ-վիրաբուժական ապաքինման բաժանմունքի քույր մի օր ես զանգ ստացա Բիլ անունով մի հիվանդի վերաբերյալ, ով հենց նոր էր վիրահատության ենթարկվել: Նա պետք է գնար ծանր հիվանդների խնամքի բաժանմունք, սակայն իմ խնամքին էր հանձնվել, քանի որ այդ բաժանմունքում տեղ չկար:

Շուտով հիվանդը ժամանեց իր ընտանիքի հետ միասին: Ես հանգստացա, երբ տեսա, որ նա արթուն, կողմնորոշվում էր և ակնհայտ շոկի մեջ չէր:

Նրա վերաբերյալ կարևոր նշումներ անելուց և նրան ու իր ընտանիքին նրա սենյակի հետ ծանոթացնելուց հետո ես դուրս եկա միջանցք, որ նշում կատարեի նրա թերթիկի վրա: Հենց նոր էր իմ գրիչը դիպչել թղթին, ես լսեցի մի ձայն, որն ասաց. «Հետ գնա նրա սենյակ»: Ես դադարեցրեցի գրելը և հետ նայեցի: Ոչ ոք չկար այնտեղ: Ես մտածեցի, որ ինձ թվացել էր դա, երբ շուտով լսեցի այն երկրորդ անգամ՝ միայն թե ավելի բարձր:

Ես հետ վազեցի Բիլի սենյակ ու տեսա, որ նրա պարանոցը կրկնակի չափով մեծացել էր և նա դժվարանում էր շնչել: Մտածելով, որ նրա զարկերակը բացվել էր, ես կիրառեցի ուղղակի սեղմում նրա պարանոցի վրա իմ աջ ձեռքով, մինչ օգտագործում էի իմ ձախ ձեռքը նրա բժշկին կանչելու համար: Վիրաբույժն ասաց, որ խումբ կուղարկի որքան հնարավոր է արագ Բիլին տեղափոխելու համար: «Եվ չշարժես քո ձեռքը», - ասաց նա:

Մինչ ես շարունակում էի սեղմել, Բիլի անկողնու կողքին նկատեցի Եկեղեցու ծանոթ գրքերից: «Դուք Եկեղեցու անդա՞մ եք», - հարցրեցի ես:



Վիրաբույժն ասաց, որ նա խումբ կուղարկի որքան հնարավոր է արագ Բիլին տեղափոխելու համար: «Եվ չշարժես քո ձեռքը», - ասաց նա:

Նա փորձեց գլխով նշան անել և հետո ասաց ինձ, որ ինքը Անտլանտա Ջորջիա տաճարի ծիսային աշխատող էր: Նա այնուհետև արտասվեց ու ասաց. «Ես մահանում եմ»:

Ես ասացի նրան, որ նա չի մահանում՝ անդրդվելիորեն հայտարարելով. «Ես ամուսնանում են Ատլանտա տաճարում հաջորդ ամիս և դուք պետք է լինեք այնտեղ»: Այնուհետև վիրաբուժական խումբը ժամանեց և սրընթաց տարավ Բիլին:

Հաջորդ ամսվա ընթացքում իմ հարսանեկան ծրագրերով տարված լինելով, ես գրեթե բոլորովին մոռացել էի Բիլի մասին, որը, ինչպես պարզվեց, դեղի նկատմամբ ռեակցիա էր ունեցել: Բայց երբ հարսանիքիս օրը տաճարի աշխատողն ինձ ուղեկցեց կնքման սենյակ, ես տեսա մի ծանոթ դեմք՝ Բիլի կնոջը՝ Ջորջիային: Երբ ես ասացի նրան, որ ես ամուսնանում էի, նա գնաց Բիլին գտնելու: Ծեսը սկսվելուց առաջ դուռը բացվեց և նա ներս մտավ: Մի քանի շաբաթվա գլխացավից, սրտխառնուքից և ուժասպառությունից հետո Բիլը բավականաչափ լավ էր զգացել այդ օրը տաճար գալու համար՝ առանց գիտակցելու, որ դա իմ հարսանիքի օրն էր:

Երկու տարի անց իմ ամուսինն ու ես կանչվեցինք որպես ծեսերի աշխատողներ Նաշվիլ Թենեսի տաճար: Երբ մենք հասանք տաճար ձեռնադրվելու համար, մի ջենտելմեն դուռը բացեց ինձ համար և ասաց. «Բարի գալուստ Նաշվիլլ տաճար»: Դա Եղբայր Բիլն էր:

Մենք միասին ծառայեցինք երեք տարի: Բիլն ասել էր բոլորին, որ ես փրկել էի նրա կյանքը, սակայն ես գիտեի, որ Տերն էր փրկել նրան: Այդ ընթացքում Նա սովորեցրեց ինձ Հոգու հուշումներին ուշադրություն դարձնելու կարևորությունը: ■

Ռամոնա Ռոս, Թեննեսի, ԱՄՆ

ՄԻԳՈՒՑԵ ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԱՂՈԹԵՆՔ

1975թ. գարնանը իմ ընտանիքն ու ես ապրում էինք Արևմտյան Գերմանիայի Ռեյնլանդ-Ֆալզի գյուղական սքանչելի ու կանաչ վայրում: Մի անձրևոտ կիրակի եկեղեցուց տուն վերադառնալիս մենք կանգ առանք, տեսնելով անտառի եզրին թաց -ճանապարհի պատճառով շրջված մի մեքենա: Անտառում արդեն մութ էր ծառերի խիտ սաղարթի և մոտալուտ գիշերի պատճառով:

Վթարի ենթարկված մեքենային նայելուց հետո, մենք վերադարձանք մեր մեքենայի մոտ և տեսանք, որ այն խրվել էր ցեխի մեջ: Ես չէի կարողանում հետ քշել, բայց կարող էի առաջ քշել դեպի անտառ: Մենք վերջերս քշել էինք անտառի միջով և տեսել էինք, որ անտառի շատ ճանապարհներ փոխկապակցված էին և ի վերջո մեզ դուրս կբերեին այնտեղից, ուստի ես որոշեցի առաջ շարժվել դեպի մութ անտառ:

Ես շատ արագ հասկացա, որ սխալ որոշում էի կայացրել: Նեղ, խոնավ ճանապարհը ծածկված էր ցեխի խորը շերտերով և շարունակում էր ավելի ու ավելի առաջնորդել դեպի մութ անտառ: Ես փորձում էի պահել արագությունը՝ վախենալով, որ եթե մենք կանգնեինք, մենք կհայտնվեինք անելանելի վիճակում: Ես տեսա մի բարձր տարածք հենց մեզանից վերև, որ բավականաչափ ամուր էր թվում մեքենան պահելու համար: Ես ուզում էի մեքենան դուրս հանել ցեխի միջից, որ ժամանակ ունենայի մտածելու: Մեքենան վեր սլացավ և դուրս եկավ ցեխի միջից:

Ես անջատեցի շարժիչը և դուրս եկա մեքենայից: Մեքենայի ցոլարձակ լամպերն անջատած ես ոչինչ չկարողացա տեսնել: Ես կրկին միացրեցի լամպերը, վերցրեցի մեր լապտերը և մեքենայի շուրջը զննելուց հետո, որոշեցի, որ իմ լավագույն հնարավորությունն էր հետ-հետ քշել դեպի անտառ և արագ սլացքով անցնել մեր անցած ճանապարհով:

Ես, որքան հնարավոր էր, հետ քշելով գնացի դեպի անտառ, շարժիչի արագությունը մի փոքր ավելացրեցի, հետ սլացա դեպի ճանապարհը և խրվեցի խորը ցեխի մեջ: Այժմ մենք իրոք փորձանքի մեջ էինք: Մեքենայից դուրս կատարյալ մթություն և լռություն էր տիրում: Մեքենայի ներսում իմ կինն ու ես նստած էինք երեք սարսափահար երեխաների հետ:

Ես խնդրեցի իմ կնոջը որևէ խորհուրդ տալ ինձ: Մի բոպե անց նա ասաց. «Միգուցե մենք պիտի աղոթենք»: Երեխաները գրեթե անմիջապես հանգստացան: Ես ասացի օգնության խոնարհ, սակայն խիստ փափագող աղոթք: Մինչ ես աղոթում էի, մի միտք ուղղակիորեն ծագեց իմ գլխում. «Հագցրու անիվների շղթաները»:

Կանգնելով 25 սմ ցեխի մեջ իր կիրակնօրյա զգեստով, իմ սիրելի կինը պահել էր լապտերը, մինչ ես մաքրում էի հետևի անիվները իմ մերկ ձեռքերով և հագցնում էի շղթաները: Հավատքով և վստահությամբ մենք կրկին աղոթեցինք և միացրեցինք շարժիչը: Դանդաղորեն մենք քշեցինք ցեխի միջով և վերջապես հետ վերադարձանք հիմնական ճանապարհին:

Ցեխից և մթից ազատված և ուրախ՝ ես գրեթե մոռացա, թե ով էր օգնել մեզ դուրս գալ անտառից: Մեր հինգ տարեկան դուստրը հիշեցրեց ինձ, ասելով. «Հայրիկ, Երկնային Հայրը իրոք պատասխանում է աղոթքներին, այնպես չէ՞»: ■

Սքոթ Էդգար, Յուտա, ԱՄՆ

Ես կրկին միացրեցի լամպերը, վերցրեցի մեր լապտերը և մեքենայի շուրջը զիտելուց հետո որոշեցի, որ իմ լավագույն հնարավորությունն էր հետ-հետ քշել դեպի անտառ և արագ սլացքով անցնել մեր անցած ճանապարհը:

Բոլորը ճանաչում են Բլեքին

Ադամ Ս. Օլսոն
Եկեղեցու ամսագրեր

Հոնուրա «Բլեք» Բոնեթի համար բասկետբոլը ամեն ինչ էր: 15 տարեկանում Բլեքը բարձրացող աստղ էր Ֆրանսիական Պոլինեզիաներում, լավագույն խաղացողներից մեկը, ով խաղում էր երկրի չափահասների առաջին խմբի լավագույն թիմերից մեկում: Չնայած նրա մականունը անգլերեն *black* բառի սխալ գրելաձևն էր, ոչ մի սխալմունք չկար նրա տաղանդի հետ կապված:

Բայց նա ուզում էր ավելին: Նա ուզում էր որպես պրոֆեսիոնալ խաղալ Եվրոպայում: Եվ ամեն ինչից առավել նա ցանկանում էր հաղթել և արժանանալ ոսկե մեդալին Հարավային Խաղաղ Օվկիանոսյան Խաղերում:

Միակ խոչընդոտը, որ, թվում էր, թե կանգնած է նրա ճանապարհին, Եկեղեցին էր:

Հոնուրա «Բլեքը» և Միրանդա Բոնեթը երկար ժամանակ Թահիթիում ներգրավված են եղել բասկետբոլում:

Մի մարդ միսիայում

Չնայած, որ թիմը, որի կազմում խաղում էր Բլեքը այդ ժամանակ, հովանավորվում էր Եկեղեցու կողմից, Բլեքը քիչ էր հետաքրքրված Եկեղեցով կամ մարգարեի կոչով, որ յուրաքանչյուր արժանի և հնարավորություն ունեցող երիտասարդ տղամարդ ծառայի միսիայում:

Նա արդեն ասել էր իր եպիսկոպոսին, որ չէր գնալու միսիա: Նա չէր պատկերացնում, թե ինչպես կարող էր պրոֆեսիոնալ խաղացող դառնալ, եթե երկու տարի չխաղար:

Նույնիսկ ավելին, ամեն չորս տարին մեկ անցկացվող Հարավ Խաղաղ Օվկիանոսյան Խաղերը տեղի կունենային իր միսիայի ժամանակ, իսկ Թահիթիի Բասկետբոլի Ֆեդերացիան հետաքրքրված էր, որ նա խաղար ազգային թիմում: Նա վերջապես հնարավորություն կունենար վերջ դնելու այն բառերին, որոնք ասում էր նրա հայրը ամեն անգամ, երբ Բլեքը սկսում էր շատ բարձր մտածել իր մասին. «Բոլորը գիտեն Բլեքին, սակայն նա չունի ոսկի»:

Բլեքի հայրը՝ Ջին-Բափթիստը, բարյացակամությամբ էր ասում այդ բառերը: Սակայն դրանք խենթացնում էին Բլեքին: Դրանք հիշեցնում էին, որ չնայած որ բասկետբոլի երկրպագուները Թահիթիով մեկ գիտեին նրա մասին, նա խաղերից մեդալ չուներ: Նրա հայրը ոսկե մեդալ էր շահել տղամարդկանց թիմում Հարավ Խաղաղ Օվկիանոսյան առաջին Խաղերի ժամանակ:

Բլեքը իր միսիան էր համարում այս բառերին վերջ դնելը: Նա ժամանակ չուներ ոչ մի այլ միսիայի համար:

Մտքի փոփոխություն, սրտի փոփոխություն

Անկախ միսիայի վերաբերյալ իր զգացումներից, Բլեքը շարունակում էր

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ԱԴԱՄ Ս. ՕԼՍՈՆԻ ԿՈՂՄԻՑ, ԵԹԵ ԱՅԼ ԲԱՆ ՉԵՎԱՄԾ Չէ

Բլեքի սերը բասկետբոլի հանդեպ եղել է և փորձություն, և օրհնություն:

«Երջանկությունը գալիս է այնպես ապրելուց, ինչպես Տերն է ուզում, որ ապրենք»:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն, «Պատրաստությունը բերում է օրհնություններ», *Լիահոնա*, Մայիս 2010, 67:

մասնակցել Եկեղեցու միջոցառումներին: Եկեղեցու պարերի ժամանակ, երբ նա 16 տարեկան էր, Բլեքը բավականաչափ քաջություն ունեցավ խնդրելու Միրանդա Մարիթերագիին պարել իր հետ: Միրանդան նույնպես լավ բասկետբոլ խաղացող էր, որ երազանքներ ուներ ձեռք բերելու իր սեփական ոսկե մեդալը: Նրա հայրը նույնպես այդ առաջին մեդալը շահող թիմում էր:

Նրա խնդրելուց վայրկյաններ անց երգն ավարտվեց: Ուստի, նրանք պարեցին հաջորդ երգի ընթացքում, որը եղավ երեկոյի վերջին երգը: Այդ պահին Բլեքը չէր ուզում, որ պարն ավարտվեր:

Բլեքը ընդհանրապես չէր ծրագրում ամուսնանալ տաճարում կամ նույնիսկ անդամի հետ ամուսնանալ: Սակայն ամեն ինչ սկսվեց փոխվել, երբ նա սկսեց ավելի լավ ճանաչել Միրանդային հաջորդ երկու տարիների ընթացքում: Մի օր նրա տանը մի բան, որ նա պատրաստել էր Երիտասարդ Կանանց ժամին, գրավեց իր ուշադրությունը: Այնտեղ գրված էր. «Ես կամուսնանամ տաճարում»:

Բլեքի հետաքրքրությունը Միրանդայի հանդեպ և Միրանդայի հաստատուն պարտավորությունը տաճարային ամուսնության վերաբերյալ բավական էին, որ նա վերանայեր իր ծրագրերը: Նա որոշեց սկսել լրջորեն վերաբերվել Եկեղեցուն: Նրա որոշումները տարան գործողությունների, որոնք հնարավորություն տվեցին Սուրբ Հոգուն աշխատել իր կյանքում:

Որոշումը

Այդ որոշումներից մեկը եղավ պատրաստվելը 18 տարեկանում հայրապետական օրհնություն ստանալուն: Երբ հայրապետը նշեց օրհնության մեջ, որ Բլեքը միսիա կծառայեր և կամուսնանար տաճարում, նա զգաց Հոգին: «Ես գիտեի, որ դա այն էր, ինչ Աստված ուզում էր, որ ես անեի», - ասում է նա:

Չնայած, որ ազգային թիմը, թվում էր, մեդալի հնարավորություն ուներ, Բլեքը իր ընտանիքի աջակցությամբ որոշեց, որ առաջին տեղում նա կդներ այն, ինչ Աստված ուզում էր, հետո միայն այն, ինչն ինքն էր ուզում: Որոշումը հեշտ չէր: Խաղալու ճնշումը ուժեղ էր: Եվ նա արագ հասկացավ, որ Աստծո կամքին հնազանդվելու իր վճիռը կփորձվի ավելի քան մեկ անգամ:

Որպես միսիոներ Թահիթիում ծառայելուց մեկ տարի անց բասկետբոլի Ֆեդերացիան հարցրեց, եթե նա կարող էր վերադառնալ թիմ ընդամենը մեկ ամսով՝ խաղերին մասնակցելու համար:

Բլեքի միսիայի նախագահը, անհանգստանալով Բլեքի այն մասին, թե ինչ հետևանք կարող է դա ունենալ վերադառնալու և ծառայելու Բլեքի կարողության վրա, ներշնչված զգաց ասելու նրան. «Դու կարող ես գնալ, եթե ուզում ես, սակայն դու չես կարող վերադառնալ»:

Բլեքը ուզում էր այդ մեդալը, բայց նա այլևս այն չէր ցանկանում ամեն ինչից առավել: Նրա միսիան ապշեցուցիչ էր եղել: Նա չէր ուզում հրաժարվել իր վերջին տարուց, նույնիսկ բասկետբոլի համար:

Բլեքը մնաց:

Թիմը ոսկի շահեց:

Տարբեր պայմաններ, նույն որոշում

Իր միսիան պատվով ավարտելուց հետո Բլեքը ամուսնացավ Միրանդայի հետ Փափիթ Թահիթի Տաճարում և նրանք ընտանիք կազմեցին: Նա նաև վերսկսեց խաղալ ազգային թիմում:

Միրանդան խաղում էր կանանց ազգային թիմում և ինքն էլ էր պատրաստվում Հարավ Խաղաղ Օվկիանոսյան Խաղերին:

Ինչևիցե, մինչ խաղերը մոտենում էին, զույգը սկսեց ուժգնորեն զգալ, որ պետք է ունենային երկրորդ երեխան:

Մեկ տարուց պակաս էր մնացել խաղերին, և հեշտ կլիներ հետաձգել մյուս հղիությունը բավականաչափ ժամանակով, որպեսզի Միրանդան խաղար: Կանանց թիմը հաղթելու լավ հնարավորություն ուներ:

Սակայն զույգը սովորել էր իր փորձից, որ իրենց կամքը Աստծուն հնազանդեցնելը ավելի մեծ օրհնություններ էր բերում, քան ցանկացած բան, որ նրանք կարող էին հուսալ՝ իրենց սեփական ցանկություններին հետևելով: Խորը մտածելուց և աղոթքից

ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ԼՈՍԱՆՋԱՐԸ: ԹԱՍՄԱՆ ՌՈՒԹԵՐՖՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ © IRI

Բլեքի և Միրանդայի համար սպորտում իրենց հաջողությունը երկրորդական տեղ է գրավել իրենց ընտանիքի հաջողության համեմատ:

հետո նրանք որոշեցին դնել իրենց ընտանիքը առաջին տեղում:

1999-ին, երբ Միրանդան ութ ամսական հղի էր, կանաց թիմը ոսկի շահեց:

Բոլորը ճանաչում են Բլեքին

Բլեքը և Միրանդան հնարավորություն ունեցան խաղալ բասկեդբոլ Ֆրանսիական Պոլինեզիաների ամենաբարձր մակարդակներում վերջին տասնամյակի ընթացքում հաղթելով ազգային լիգայի առաջնություններում, շահելով մրցախաղային բաժակներ և խաղալով ազգային թիմում համար 2003 և 2007թթ. խաղերում:

2011թ.խաղերին նրանք երկուսն էլ մասնակցեցին, միայն այս անգամ Բլեքը՝ որպես տղամարդկանց խմբի մարզիչ: Մինչ Միրանդան և կանանց թիմը շահեցին ոսկե մեդալ, տղամարդկանց թիմը շահեց բրոնզե մեդալ, կրկին չհասնելով Բլեքի ոսկու երազանքին:

Բլեքը երբեմն խորհում է, թե ինչ կլիներ իր կյանքում, եթե նա աներ այն, ինչ ինքն էր ուզում անել Աստծո ցանկությունը կատարելու փոխարեն:

«Ես հավանաբար կունենայի ոսկե մեդալ», - ասում է նա: «Միգուցե ես կխաղայի որպես պրոֆեսիոնալ, միգուցե՝ ոչ»:

Սակայն զույգը չի զղջում կատարած որոշումների համար: Նրանք վստահ չեն, թե ինչպես նրանք կարող էին ավելի երջանիկ լինել:

«Ես ամուսնացել եմ տաճարում», - ասում է Բլեքը: «Ես ունեմ հրաշալի կին, չորս գեղեցիկ երեխա և ես շարունակում եմ մնալ Եկեղեցում: Միայն բասկետբոլը չէր կարող ինձ տալ դրանցից որևէ մեկը: Դրանք օրհնություններ են, որոնք եկել են Տիրոջը առաջին տեղում դնելու արդյունքում»:

Տիրոջը առաջին տեղում դնելը վերջ չդրեց նրա հոր կատակներին, սակայն հաղորդեց այդ բառերին նոր նշանակություն: Մի քանի տարի առաջ, երբ ֆեդերացիան առաջարկեց լիգայի խաղերը կիրակի օրը անցկացնել, մարզական ակումբի նախագահը այն պաշտոնական քննարկման դրեց: Ինչ-որ մեկը հարցրեց, «Դուք հարցրել ե՞ք Բլեքին»:

Առաջարկը մերժվեց:

Քանի որ Բլեքը Տիրոջը դրել էր առաջին տեղում, ոչ միայն բոլորը գիտեին Բլեքին, նրանք գիտեին, թե ինչին էր նա հավատում: ■

Հարցեր և պատասխաններ

«Ինչու ես պետք է գնամ սեմինարիա, եթե ես կարող եմ սովորել սուրբ գրությունները ինքնուրույն»:

Դուք կունենաք ձեր կյանքի մնացած մասը սուրբ գրությունները ինքնուրույն ուսումնասիրելու համար, ուստի, եթե դուք ունեք սեմինարիայի հնարավորություն, օգտվեք առիթից ուսումնասիրելու սուրբ գրությունները հրաշալի ուսուցիչների և ընկերների հետ:

Լավ ուսուցչի առաջնորդությամբ սովորելն ու ուսումնասիրելը օգնում է ձեզ ձեռք բերել նոր խորաթափանցություն սուրբ գրությունների մասին, որը դուք կարող է իրականում չհասկանաք: Ուսուցիչը կարող է նաև կիսվել մարգարեների և Եկեղեցու այլ ղեկավարների ուսմունքներով, որ տալիս են ձեզ սուրբ գրությունների ավելի լավ հասկացողություն:

Նաև հաճախ ավելի հաճելի է սովորել դասարանի հետ: Դուք հնարավորություն կունենաք խոսել նրա վերաբերյալ, ինչ սովորել եք կարդալու ընթացքում: Ձեր դասարանցիները կարող է փոձառություններ ունենան, որոնց շնորհիվ որոշ սուրբ գրությունների հատվածներ դարձել են իրենց սիրված հատվածները: Նրանց փորձառությունների մասին լսելը կարող է սուրբ գրությունները կենդանացնել ձեզ համար: Եվ քանի որ դուք ուսումնասիրում եք սուրբ գրությունները ուրիշների հետ, դուք կարող եք վայելել այս խոստացված օրհնությունը. «Որտեղ երկուսը կամ երեքն իմ անունով ժողովված լինեն, . . . այնտեղ ես նրանց մեջ կլինեմ» (ՎԵՌՈՒ 6.32):

Սեմինարիան նաև ձեր ուման պրոցեսին կառուցվածք է տալիս: Դուք կարդում եք որոշակի արագությամբ, ինչն օգնում է ձեզ ավարտել սուրբ գրության յուրաանչյուր գիրքը: Դուք հնարավորություն ունեք քննարկելու և անգիր սովորելու սուրբ գրությունների հմտության հատվածները: Դուք կարող եք վստահ լինել, որ կյանքի այս փուլում դուք ավելի շատ բան կստանաք սուրբ գրություններից սեմինարիա հաճախելով, քան որևէ այլ ճանապարհով:

Նոր ընկերներ, նոր մտքեր

Սեմինարիայում դուք հանդիպում եք նոր ընկերների, և դուք մտերմանում եք իրար հետ՝ դառնալով ինչպես մի ընտանիք: Դուք սովորում եք շատ նոր բաներ, որոնք դուք չէիք իմանա ինքնուրույն: Դա զվարճալի է և շատ հոգևոր: Դուք համոզվում եք, որ ձեր օրը ճիշտ եք սկսել: Եթե դուք չեք մասնակցել, սկսեք հիմա, և այն կփոխի ձեր կյանքը:

Կատարինա Բ., 16 տարեկան, Կալիֆորնիա, ԱՄՆ

Երջանկություն

Սեմինարիայով է սկսվում իմ օրը: Այն դարձնում է ինձ ավելի երջանիկ անձնավորություն և ավելի հոժարակամ՝ քննարկելու ավետարանը ուրիշ մարդկանց հետ: Մենք ավելի խորն ենք ուսումնասիրում սուրբ գրությունները, ուստի ես ավելի լավ եմ դրանք հասկանում:

Մադի Ս., 15 տարեկան, Կոլորադո, ԱՄՆ

Կատարյալ համակցություն

Սեմինարիան երջանկացնող փորձառություն է: Երբեմն միայնակ սովորելը բավական չէ: Անձնական ուսումնասիրությունն ու սեմինարիան կատարյալ համակցություն են: Ուսուցիչները հրաշալի են, և, եթե դուք որևէ հարց ունեք, ձեր ուսուցիչները և դասարանցիները կարող են օգնել ձեզ պատասխանել դրանց:

Դոուսոն Դ., 15 տարեկան, Այդահո, ԱՄՆ

Ավելի խոր հասկացողություն

Երբ ես ինքնուրույն եմ ուսումնասիրում սուրբ գրությունները, դա այդքան էլ զվարճալի չի լինում, որքան ուրիշների հետ սովորելը: Սրան զումարած, մենք կարող ենք հետաքրքիր մտքեր սովորել ուրիշներից, երբ ուսումնասիրում ենք սուրբ գրությունները միասին: Սեմինարիայի միջոցով ես սովորել եմ շատ հետաքրքիր պատմություններ, և ես ավելին գիտեմ սուրբ գրությունների պատմության մասին, ինչն ուսուցումը դարձնում է շատ ավելի հետաքրքիր: Ես ուրախ եմ, որ ես որոշեցի միանալ սեմինարիային:

Ռեբեկա Մ., 16 տարեկան, Շլեսվիգ-Հոլշթեյն, Գերմանիա

Պատասխանները Եկեղեցու վարդապետության մասին հարցարարություններ չեն, այլ միտված են օգնելու և խորհուրդ տալու:

Ավելի ամուր վկայություն

Առաջինը, Տերն ասում է, որ որտեղ երկուսը կամ երեքն Իր անունով ժողովված լինեն, Նա կլինի նրանց հետ (տես Մատթեոս ԺԸ.20, ՎԱՈՒ 6.32)։ Նրա Հոգին զգալը կարող է օգնել մեզ խորհել, թե ինչ է Նա արել մեզ համար։ Երկրորդը, երբ ուսումնասիրում ենք սուրբ գրությունները ուրիշների հետ, մենք կարող ենք ավելի լավ հասկանալ, թե ինչ է գրված։ Մինչ լսում ենք իրար, մենք կարող ենք լսել մի բան, որ մենք ինքներս չէինք նկատել, և նույնը կարող է պատահել ուրիշների հետ, երբ մենք կիսում ենք մեր գիտելիքները։ Երրորդը, երբ ես գնում եմ սեմինարիա, իմ վկայությունն ամրանում է։ Սեմինարիան մեր վկայությունները կիսելու և ուրիշ մարդկանց վկայությունները լսելու հնարավորություն է։ Այն օգնում է մեզ մնալ ճիշտ ճանապարհի վրա։

Դմիտրի Գ., 16 տարեկան, Դնեպրոպետրովսկ, Ուկրաինա

Սովորել ուրիշներից

Սեմինարիա հաճախելը անհրաժեշտություն է ինձ համար։ Ոչ միայն իմ նվիրված ուսուցիչն է սովորեցնում և բացատրում սուրբ գրություններում պարունակվող ճշմարտությունները, այլ նաև ես եմ շատ բան սովորում մեր դասարանական քննարկումներից։ Մեր աշակերտները կիսվում են իրենց փորձառություններով իրենց սովորածի վերաբերյալ և օգնում են ինձ ձեռք բերել ավելի շատ գիտելիք ավետարանի, Փրկչի և Նրա Քավության վերաբերյալ։ Բավական չէ միայնակ ուսումնասիրելը, քանզի ես գտել եմ իմ խնդիրների որոշ պատասխանները դասարանային քննարկումների ժամանակ։ Ես կարող եմ վկայել, որ սեմինարիան արժեքավոր մաս է կազմում Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցու վերաբերյալ իմ վկայությունը սնուցելու հարցում։

Դենզել J., 15 տարեկան, Արևմտյան Սամոա

Լույս և ճշմարտություն

Երբ ես հաճախում եմ սեմինարիա, ես փնտրում եմ լույս և ճշմարտություն և հագնում եմ Աստծո ողջ սպառազինությունը (տես ՎԱՈՒ 27.15-18)։ Այդ սպառազինությունը օգնում է ինձ ճանաչել Նրա ձայնը բոլոր ժամանակներում և բոլոր տեղերում։ Ամենօրյա սուրբ գրությունների ուսումնասիրությունը ամրացնում է իմ հավատքը և իմ վկայությունը և օգնում է ինձ ուժեղ լինել իմ փորձության ժամին։ Սեմինարիա հաճախելը լավագույն ճանապարհներից մեկն է լույս ու ճշմարտություն գտնելու և սուրբ գրությունները ուսումնասիրելու ու խորհելու համար։

Նոհեմի Մ., 17 տարեկան, Պուեբլա, Մեքսիկա

Երեք պատճառներ

Առաջինը, քանի որ ես ուզում եմ ծառայել միսիայում, ես հաճախում եմ սեմինարիա։ Միսիոներները պետք է առավոտյան շուտ արթնանան և ուսումնասիրեն ավետարանը։ Սեմինարիա հաճախելը օգնում է ինձ ձևավորել շուտ արթնանալու լավ սովորություն։ Երկրորդը, առավոտյան մեր ուղեղները թարմ են, ուստի մենք կարող ենք կենտրոնանալ մեր սովորելու և ուսումնասիրելու վրա։ Իմաստուն է օգտագործել օրվա մեր լավագույն ժամերը Աստծո մասին սովորելու վրա։ Երրորդը, եթե ես ինքնուրույն ուսումնասիրեմ, ես կարող է այնքան խորը հասկացողություն չունենամ, որքան իմ ուսուցիչն ունի։ Նրա առաջնորդությամբ և ուսուցմամբ ես կարող եմ սովորել շատ ավելին, քան ես անում եմ ինքնուրույն։

Հ. Չեն Յուան, 16 տարեկան, Տայ-չանգ, Թայվան

ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ես գիտեմ, թե ինչ զորություն է գալիս սեմինարիայի և ինստիտուտի ծրագրերից։ Դրանք հարստացրել են իմ կյանքը, և ես գիտեմ, որ այն նույնը կանի ձեզ համար։ Այն պաշտպանության վահան կստեղծի ձեր շուրջը, ազատելով ձեզ աշխարհի փորձություններից և դժվարություններից։ Մեծ օրհնություն կա ավետարանի վերաբերյալ գիտելիք ունենալու մեջ։ Եվ ես չգիտեմ, թե կա արդյոք ավելի լավ տեղ Եկեղեցու երիտասարդների համար, որտեղ նրանք կարող են ձեռք բերել որոշակի ու հատուկ գիտելիք սուրբ բաների վերաբերյալ, քան ինստիտուտի և սեմինարիայի ծրագրերը»։

Elder L. Tom Perry of the Quorum of the Twelve Apostles, "Receive Truth," *Ensign,* Nov. 1997, 61–62.

ՀԱՋՈՐԴ ՀԱՐՑԸ

«Ինչպե՞ս ես բացատրեմ իմ ընկերոջը, թե ինչու է վատ մաքրաբարոյության օրենքը խախտելը»։

Ներկայացրեք ձեր պատասխանը մինչև 2012թ. մայիսի 15-ը՝ liahona.lds.org,է-փոստով՝ liahona@ldschurch.org, կամ փոստով՝

Liahona, Questions & Answers 5/12
50 E. North Temple St., Rm.2420
Salt Lake City, UT 84150-0024, USA

Պատասխանները կրճատվել կամ պարզեցվել։

Հետևյալ տեղեկությունը և թույլտվությունը պետք է ներառված լինի ձեր է-փոստի կամ նամակի մեջ. (1) լրիվ անունը, (2) ծննդյան թիվը, (3) ծուխը կամ ճյուղը, (4) ցիցը կամ շրջանը, (5) ձեր գրավոր թույլտվությունը, և, եթե դուք 18 տարեկանից ցածր եք, ձեր ծնողի գրավոր թույլտվությունը (է-փոստը ընդունելի է) ձեր պատասխանը և լուսանկարը տպագրելու համար։

ԻՆՉՈ՞Ւ համար է սեմինարիան



ՄԱՍՆԱԿՑԵՔ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻՆ

Սեմինարիան կօգնի ձեզ հասկանալ Հիսուս Քրիստոսի Քավությունը և ուսմունքները և ապավինել դրանց: Դուք կզգաք Տիրոջ Հոգին, սովորելով սիրել սուրբ գրությունները: Դուք կպատրաստվեք տաճարին և միսիոներական ծառայությանը:

Երիտասարդներ, ես խնդրում եմ ձեզ մասնակցել սեմիարիային: Ամեն օր ուսումնասիրեք սուրբ գրությունները: Ուշադրությամբ լսեք ձեր ուսուցիչներին: Աղոթքով կիրառեք ձեր սովորածը»:

President Thomas S. Monson, "Participate in Seminary," seminary.lds.org.

Ի՞նչն է, ձեր կարծիքով, ամենակարևոր բանը, որ ուսանողը կարող է ձեռք բերել սեմինարիայում և ինստիտուտում: Երբ սեմինարիայի ուսանողների մի խումբ տվեց Եկեղեցու Կրթական Համակարգի Հանձնակատար՝ Յոթանասունական Երեց Փոլ Վ. Ջոնսոնին այս նույն հարցը, նա պատասխանեց, որ ամենակարևոր բանը, որ դու կարող ես ձեռք բերել, «իսկական վկայությունն է, որ Հիսուսը Քրիստոսն է: Հասկանալը, որ *իսկական* գիտելիքը հոգևոր գիտելիք է: Դա այն է, ինչ գալիս է Սուրբ Հոգուց մեր հոգիներին անհատապես: Դա է ամենահզոր ճշմարտությունը, ամենահզոր բանը, որ կարող է դուրս գալ սեմինարիայից ու ինստիտուտից: Այն չի փոխում միայն այն, ինչ դուք գիտեք, այն փոխում է այն, թե ով եք դուք, և այն փոխում է այն, թե դուք ոնց եք նայում աշխարհին: Եվ այդ տեսակի բարձրագույն կրթությունը օգնում է դարձնել ձեր մյուս կրթությունը լիարժեք» ("A Higher Education," *New Era,* Apr. 2009, 15):

Երեց Ջոնսոնը բազմաթիվ Գերագույն Իշխանավորներից մեկն է, ով խոսել է հրաշալի օրհնությունների մասին, որ գալիս են սեմինարիա և ինստիտուտ հաճախելուց: Ուստի, եթե դուք խորհում եք, թե ինչու պետք է գնաք սեմինարիա, ահա ավելի լավ պատճառներ մարգարեների և առաքյալների կողմից:

ԴՆԵԼ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

«Սեմինարիայի ծրագրերը կօգնեն ձեզ որպես երիտասարդ տղամարդ կամ կին կյանքում դնել երջանկության կամ հաջողության հիմքը»:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթ, «Հիմա է միսիա ծառայելու ժամանակը», *Լիահոնա,* մայիս 2006, 88:

ՍՈՎՈՐԵՔ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ես կցանկանայի, որ ամեն տղա ու աղջիկ կարողանար գնալ սեմինարիա, քանի որ այնտեղ են նրանք սովորում ավետարանի շատ ճշմարտություններ: Սեմինարիայում է, որ նրանցից շատերը հաստատում են իրենց սկզբունքները իրենց մտքում այն մասին, թե ինչ են նրանք անելու, և նրանք գնում են միսիայի»:

President Spencer W. Kimball (1895–1985), "President Kimball Speaks Out on Being a Missionary," *New Era*, May 1981, 49.

ԲԱՑԱՀԱՅՏԵՔ ԵՐԵՔ ԲԱՆԵՐ, ՈՐ ՍԵՄԻՆԱՐԻԱՆ ԿԱՐՈՂ Է ԱՆԵԼ

«Երեք հզոր բաներ կան, որ սեմինարիան կարող է անել: Առաջինը, այն միացնում է երիտասարդ մարդկանց, ովքեր կիսում են նույն արժեքները: Երիտասարդները սիրում են լինել ուրիշների հետ, ովքեր կիսում են իրենց հավատքը և սիրում են սուրբ գրությունները: Երկրորդ, այն միացնում է երիտասարդներին ուսուցչի հետ, ով վկայություն ունի, և նրանք կարող են զգալ դրա կրակը, երբ այն ծնվում է: Երրորդ, սեմինարիան երիտասարդ մարդկանց մոտեցնում է սուրբ գրություններին:»:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ, Առաջին Խորհրդական Առաջին Նախագահությունում, «Զրույց սուրբ գրությունների ուսուցման վերաբերյալ» *Լիահոնա*, հուլիս 2005, 11:

ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ ԴՐԱՆ

«Ուսանողներ, եթե ձեր արժեքները տեղում են, դուք չեք վարանի մասնակցել ընտրական դասի, որը կարող է զարդարել ձեր կյանքը ի նպաստ ուսուցման, որը կարող է ամուր պահել դրա հիմքը: Երբ անդամագրվում եք, հաճախեք, սովորեք և ուսումնասիրեք: Համոզեք ձեր ընկերներին անել նույնը: Դուք երբեք չեք զղջա, սա ես խոստանում եմ ձեզ»:

President Boyd K. Packer, President of the Quorum of the Twelve Apostles, "Agency and Control," *Ensign*, May 1983, 67.

ՀՐԱՎԻՐԵՔ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՁԵՐ ԿՅԱՆՔ

«Ես երախտապարտ եմ Եկեղեցու սեմինարիայի համակարգի համար և Եկեղեցու ինստիտուտի ծրագրի համար: Ես ուզում եմ հորդորել այստեղ գտնվող ավագ դպրոցի յուրաքանչյուր աշակերտի օգտվել սեմինարիայի ծրագրից: Ձեր կյանքը մեծապես կօրհնվի, եթե դուք անեք դա»:

President Gordon B. Hinckley (1910–2008), "Excerpts from Recent Addresses of President Gordon B. Hinckley," *Ensign*, Dec. 1995, 67.

ԼԻՆԵԼ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ԵՐՋԱՆԱՎԱՐՏ

«Կանոնավոր կերպով հաճախեք սեմինարիա և դարձեք սեմինարիայի շրջանավարտ: Սեմինարիայի ուսուցումը ամենակարևոր հոգևոր փորձառություններից մեկն է, որ երիտասարդ տղամարդը [և կինը] կարող է ունենալ»:

President Ezra Taft Benson (1899–1994), "To the 'Youth of the Noble Birthright,'" *Ensign*, May 1986, 44; "To the Young Women of the Church," *Ensign*, Nov. 1986, 82.

ՍԵՄԻՆԱՐԻԱՆ
Էկվադորի ջունգլիներում

Հեռավոր ջունգլիում սեմինարիան մեծ նշանակություն ունի այս երիտասարդների համար:

Ջոշուա Ջ. Փերքի
Եկեղեցու ամսագրեր

Քուիտոի արևելքում՝ Էկվադոր, հրաբուխներնից ու Անդես լեռներից հետո տեղանքը կտրուկ իջնում է Ամազոնի ջունգլիներ: Այնտեղ դուք կգտնեք խիտ անտառներ, առատ գետեր, կապիկներ և նույնիսկ վարդագույն դելֆիններ:

Դուք նաև կգտնեք մի քաղաք, որը կոչվում է Պուերտո Ֆրանցիսկո դե Օրելլանա: Դա շատ հեռու է Էկվադորում գրեթե ամեն ինչից: Տասնհինգ տարի առաջ շատ քիչ թվով մարդ կար այդ տարածքում: Սակայն նավթի հայտնաբերման արդյունքում այդ տարածք եկան արդյունաբերություն, աշխատանք փնտրող մարդիկ և Եկեղոցու անդամներ:

Սեմինարիա փոքր ճյուղում

Երիտասարդներից ոմանք, ինչպես Օսկար Ռ., արդեն անդամներ էին, երբ ճյուղ կազմվեց, սակայն մեծամասնությունը ավելի ուշ նորադարձներ են: Եվ կրակ է վառվում նրանց սրտերում: «Մենք ուժեղ ենք», - ասում է Օսկարը:

2010թ. սեպտեմբերին, իր ստեղծումից ընդամենը մեկ տարի անց, ճյուղը սկսեց իրականացնել սեմինարիայի ծրագիր: «Երբ մենք նոր էինք սկսել հավաքվել մի քանի տարի առաջ, - ասում է Օսկարը, - շատ քիչ էինք: Ես միակ երիտասարդն էի: Բայց մենք շարունակեցինք աճել: Շուտով մենք ունեցանք 6, ապա 10, իսկ հիմա նույնիսկ ավելի շատ երիտասարդներ»:

Քանի որ որոշ պատանիներ դպրոց էին հաճախում առավոտյան, ուրիշները՝ կեսօրին, նրանք կազմակերպեցին սեմինարիայի երկու դասարան—, մեկը՝ առավոտյան 8.00-ից մինչև 9.00-ը, մյուսը՝ կեսօրին՝ 4.30-ից մինչև 5.30:

Միգուցե շատ պատանիներ չլինեն ծրագրում, սակայն այն պատանիների համար, ովքեր հաճախում են, սեմինարիան փոխում է կյանքը:

Ինչու՞ հաճախել

«Սեմինարիան հրաշալի վայր է ինձ համար», - ասում է Լուիս Վ.՝ նորադարձներից մեկը: «Այն օգնում է ինձ պատրաստվել լինելու լավ միսիոներ: Ես հանդիպել եմ շատ դժվարությունների և փորձությունների, ինչ միացել եմ Եկեղեցուն, բայց ես կարողացել եմ ինձ ամուր պահել, քանի որ գիտեմ, որ անում եմ այն, ինչը ճիշտ է»:

Եվ միայն Լուիսը չէ, որ այդպես է զգում: «Ես շատ քիչ ժամանակ է, որ Եկեղեցու անդամ եմ, - ասում է Արիանա Ջ., - սակայն ես հաճախում եմ սեմինարիա սկսած իմ մկրտվելուց: Ես ուրախ եմ, որ հաճախում եմ, քանի որ սովորում եմ շատ ճիշտ բաներ Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին, և այդ ամենը լցնում է իմ սիրտը հույսով, իսկ միտքս՝ հասկացողությամբ»:

Սեմինարիան ամրացնում է երիտասարդներին, ինչպես այս երիտասարդներին էկվադորում, որոնցից շատերը վերջերս են միացել Եկեղեցուն:

Սեմինարիա հաճախելը օգնել է Արիանային հաստատվել ավետարանում: «Ինձ համար օրհնություն է այդ դասերին մասնակցելը», - ասում է Արիանան: «Դրանք ամրացնում են իմ հոգին և օգնում են ինձ պատրաստվել, որպեսզի մի օր ես լինեմ լավ կին, մայր, Եկեղեցու ղեկավար և, իհարկե, լիաժամկետ միսիոներ»:

Արիանայի եղբայրը՝ Ջերարդոն, նույնն է զգում: «Ես շնորհակալ եմ,

քանի որ սեմինարիան իմ կյանքի կարևոր մասն է դարձել», - ասում է նա: «Այն պատրաստում է ինձ միսիայում ծառայելուն: Այնտեղ ես սովորել եմ փրկության ծրագրի մասին, որ Աստված պատրաստել է ինձ համար: Յուրաքանչյուր դաս, որին ես հաճախում եմ, տալիս է ինձ հույս, որ ես կարող եմ ժառանգել սելեստիալ թագավորությունը և տալիս է ինձ վստահություն, որ ես ընդունել եմ Հիսուս Քրիստոսի ավետարանը»:

Ջերարդոն երբեմն բավականաչափ հոգնած է լինում դասերի ժամանակ: Նա պետք է նախ իր փոքր եղբորը տանի դպրոց և հետո արագ վերադառնա տուն, վերցնի քրոջը, որպեսզի նրանք կարողանան գնալ սեմինարիա: Սակայն նրան դա չի մտահոգում:

«Այս ամենը շատ նոր է ինձ համար, սակայն ես լի եմ ուրախությամբ», - ասում է Ջերարդոն: «Ես գիտեմ, որ ես ճիշտ ճանապարհի վրա եմ, որն ինձ հնարավորություն կտա կրկին տեսնելու իմ Երկնային Հորը: Սուրբ Հոգին տալիս է ինձ այս վստահությունը: Ես միայն պետք է ջանք գործադրեմ և հաստատակամ լինեմ մինչև վերջ»:

Կարիք չկա անհանգստանալու

Վոլտեր Ա.-ի համար սեմինարիան սկզբում մի փոքր վախեցնող էր: «Ես շատ անհանգիստ էի առաջին անգամ», - ասում է նա: «Սակայն երբ մտա դասարան, յուրահատուկ զգացում ունեցա, որովհետև սեր զգացի, որը զգում ենք, երբ ուսումնասիրում ենք սուրբ գրությունները: Եվ եհեռանալիս ես զգացի ինձ ուժեղացած՝ երջանկությամբ իմ սրտում այն բանի համար, ինչ սովորել էի: Մեծագույն օրհնություններից մեկը, որ Երկնային Հայրն ունի մեզ համար, դա սեմինարիան է»:

«Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին փոխել է իմ կյանքը», - ասում է Աբել Ա., ով նույնպես պատրաստվում է միսիա գնալ: «Ես սովորում եմ մարգարեների ուսմունքները: Ես սիրում եմ Ջոզեֆ Սմիթին: Նա քաջությամբ իրականացրեց ճշմարիտ Եկեղեցու Վերականգնումը, չնայած բոլոր խնդիրներին, որոնց առաջ կանգնեց դրա արդյունքում: Ես ուզում եմ լինել նրա նման քաջ»:

Շատ պատանիներ պետք է զորաբերություններ անեն սեմինարիա հաճախելու համար: Դա միշտ չէ, որ հեշտ է, սակայն Էկվադորի Պուերտո Ֆրանցիսկո դե Օրելլանայի պատանիների համար դա արժանի ջանք է:

«Երբ ես մտածում եմ առաջ գնալու մասին, ինչպես ասում են սուրբ գրությունները, - բացատրում է Աբելը, - ես մտածում եմ, որ դա նշանակում է որոշել մեր կյանքի առաջնահերթությունները: Սեմինարիան սրանցից մեկն է: Ճիշտ ինչպես այն փոխել է իմ կյանքը, այն կարող է նույնն անել այլ պատանիների համար»:

Նույնիսկ Էկվադորի ջունգլիների խորքերում, Հիսուս Քրիստոսի Եկեղեցին և երիտասարդների համար սեմինարիայի ծրագիրը փոխում և հարստացնում են նրանց կյանքը, ովքեր թույլ են տալիս, որ դրանք մտնեն իրենց կյանքը: ■

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՋՈՇՈՒԱ Ջ. ՓԵՐՈՒԻ ԿՈՐՈՒՄԻ

Ի՞ՆՉ Է ԳԱԼԻՍ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻՑ ՀԵՏՈ

Սեմինարիան ավարտելը ձեր կրոնական ուսումնասիրությունների վերջը չէ: Մի հրաշալի բան դեռևս սպասում է ձեզ:

Դեյվիդ Ա. Էդվարդս
Եկեղեցու ամսագրեր

Սեմինարիայում դուք ուսումնասիրում եք սուրբ գրությունները և, հավանաբար, հաճախ հանդիպում եք ձեր տարիքի մարդկանց հետ: Ձեզ ջերմությամբ դիմավորում են այնտեղ, և դուք կարող եք զգալ Հոգին: Եվ երբ դուք ավարտում եք սեմինարիան, արդյո՞ք այս փորձառություններն ավարտվում են: Միանգամայն՝ ոչ:

Եկեղեցու ինստիտուտի ծրագիրը հաջորդ քայլն է, և այնձեզ դուր կգա: Անկախ այն բանից, գնում եք քոլեջ, թե ոչ, դուք կարող եք շարունակել սովորել ավետարանի մասին, պատրաստվել միսիայի և տաճարային ամուսնությանը և կիսվել փորձառություններով ձեր տարիքի այլ մարդկանց հետ:

Ահա որոշ պատասխաններ ինստիտուտի վերաբերյալ հիմնական հարցերին: Դուք կարող եք ավելին գտնել institute.lds.org կայք-էջում:

Ի՞նչ է ինստիտուտը:

Ինստիտուտը բաղկացած է ավետարանի ուսուցման, ներառյալ՝ սուրբ գրությունների դասարաններից, մարգարեների ուսմունքների, և միսիայի կամ տաճարային ամուսնությանը պատրաստվելու դասարաններից: Որոշ ինստիտուտներում դուք կարող եք ընտրություն կատարել մի քանի դասարաններից:

Ո՞վ կարող է հաճախել:

Բոլոր երիտասարդ ամուրիները խիստ քաջալերվում են հաճախել ինստիտուտի դասերին: 18-ից 30 տարեկան ցանկացած ամուսնացած կամ ամուրի կարող է հաճախել:

Որտե՞ղ ես կարող եմ գտնել ինստիտուտ:

Որոշ տարածքներ ունեն ինստիտուտի շենքեր քոլեջների և համալսարանների հարևանությամբ: Այլ տարածքներում դասերն անց են կացվում Եկեղեցու շենքերում կամ այլ վայրերում: Հարցրեք ձեր եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին ձեր տարածքում ինստիտուտի ծրագրի մասին տեղեկանալու համար կամ այցելեք institute.lds.org կայք-էջը՝ գտնելու համար ձեզ մոտ գտնվող ինստիտուտը:

Ինչո՞ւ ես պետք է մասնակցեմ ինստիտուտի դասերին:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Ինստիտուտին մասնակցելը դարձրեք առաջնահերթություն: . . . Մտածեք այդ մասին: Դուք ընկերներ ձեռք կբերեք, Հոգին կզգաք և ձեր հավատքը կամրանա: Ես ձեզ խոստանում եմ, որ մասնակցելով ինստիտուտին և ջանասիրաբար ուսումնասիրելով սուրբ գրությունները, դուք ավելի մեծ զորություն կունենաք հաղթահարելու գայթակղությունը և ստանալու Սուրբ Հոգու առաջնորդությունը ձեր բոլոր գործերում» (institute.lds.org, ապրիլի 21, 2009): ■

ՓԱՍՏԵՐ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԱՍԻՆ

Ուսանողների թիվը. 350000-ից ավելի

Վայրերի թիվը. 2500-ից ավելի

Առկա դասընթացների թիվը. 15 հիմնական, գումարած մի քանի այլ հարմարեցված դասընթացներ

Առաջին ինստիտուտը. Մոսկվա, Այդահո, ԱՄՆ (1926)

Առաջին ինստիտուտը ԱՄՆ-ից և Կանադայից դուրս. Մեքսիկա (1959)

Ինստիտուտի նպատակը. Օգնել երիտասարդ չափահասներին հասկանալ Հիսուս Քրիստոսի ուսմունքները և Քավությունը և ապավինել դրանց, արժանի լինել տաճարի օրհնություններին և պատրաստել իրենց, իրենց ընտանիքներին և մյուսներին իրենց Երկնային Հոր հետ հավերժական կյանքին:

ՆԱԽՈՒՍԱՐԴՈՒՄՆԵՐԸ՝ MEDIA SERVICES ԿՈՂՄԻՑ

Բ Տիմոթեոս 3.16-17

Պողոս Առաքյալը ուսուցանել է, թե ինչպես են սուրբ գրությունները օրհնում մեր կյանքը:

Ամեն գիրք

«Երբ մենք ուզում ենք խոսել Աստծո հետ, մենք աղոթում ենք: Եվ երբ մենք ուզում ենք, որ Նա խոսի մեզ հետ, մենք ուսումնասիրում ենք սուրբ գրությունները. քանզի Նրա խոսքերը ասվել են Նրա մարգարեների միջոցով: Նա այնուհետև կուսուցանի մեզ, մինչ մենք լսենք Սուրբ Հոգու հուշումներին:

Եթե դուք վերջին ժամանակներում չեք լսել ձեզ հետ խոսող Նրա ձայնը, վերադարձեք սուրբ գրություններին նոր աչքերով և նոր ականջներով: Նրանք մեր հոգևոր հենարանն են»:

Elder Robert D. Hales of the Quorum of the Twelve Apostles, "Holy Scriptures: The Power of God unto Our Salvation," *Liahona*, Nov. 2006, 26–27.

Ուղղել

Աստվածաշնչում օգտագործված հունական բնագիր բառը տառացիորեն նշանակում է «կրկին ուղիղ դարձնել»: Ուստի, սուրբ գրությունները օգնում են մեզ մնալ ուղիղ գծի վրա և հետևել նեղ և անձուկ ճանապարհին (տես 2 Նեփի 9.41):

16 Է։ *Ամեն Գիրք աստուածաշունչ են
*եւ օգտակար՝, վարդապետութեան,
եւ յանդիմանութեան, եւ ուղղելու,
եւ արդարութեան խրատելու համար.
17 Որ Աստուծոյ մարդը կատարեալ լինի
*ամեն բարի գործերի համար պատ-
բաստուած։

Հանդիմանել

Հանդիմանել. նկատողություն անել, հանդիմանել, կշտամբել կամ ուղղել, սովորաբար լավ ձևով:

Բարի գործեր

Ի՞նչ բարի գործեր են սուրբ գրությունները ձեզ պատրաստում անել: Ահա մի քանի ավելի ակնհայտ օրինակներ: Կարո՞ղ եք բերել ավելի շատ օրինակներ: Ձեր օրագրում գրեք այդ մասին:

- Ծառայել որպես լիաժամկետ միսիոներ
- Կատարել Եկեղեցու կոչումները (ինչպես օրինակ քվորումի և դասարանի նախագահություններ)
- Ուսուցանել ավետարանը
- Վկայություն բերել
- Կիսվել ավետարանով
- Պատասխանել Եկեղեցու վերաբերյալ ընկերների հարցերին

Պատրաստված

Պատրաստված. կրթված, պաշար ունեցող:

Վարդապետություն

«Ճշմարիտ վարդապետությունը, երբ ընկալվում է, փոխում է վերաբերմունքը և վարքը: Ավետարանի վարդապետությունների ուսումնասիրությունը ավելի արագ կլավացնի վարքը, քան վարքի ուսումնասիրությունը»:

Նախագահ Բոյդ Ք. Փաքեր, Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ, «Մի վախեցիր», *Լիահոնա*, Մայիս 2004, 79:

Խմբագիրների կողմից. Այս էջը միտված չէ մանրակրկիտ բացատրելու ընտրված սուրբ գրության հատվածը, այն հանդիսանում է պարզապես մեկնարկ ձեր անձնական ուսումնասիրության համար:

ՓՈԼ ՄԱՆՆԻ ԴԱՎԻԹ © 2002 IRI

Մի խափանվեք

Խուսափեք ապագայի մեծ խնդիրներից, ուղղելով փոքր խնդիրներն այժմ:

Ադամ Ս. Օլսոն
Եկեղեցու ամսագրեր

Անդրեյը փոքրուց շատ էր սիրում օդանավեր: Սակայն, մինչ կան շատերը, որ երազում են թռիչքի մասին, Անդրեյի գլուխը ամպերի մեջ չէ. Նրա հետաքրքրվում է սողնակներով ու նիգերով: Ռումինացի այս 16 ամյա պատանին սովորում է, որ դառնա օդանավի մեխանիկ:

Ռումինիայում պատանիները կարող են հաճախել ավագ դպրոց՝ քոլեջին կամ ուսումնարանին նախապատրաստվելու համար: Քանի որ Անդրեյը սիրում էր ինքնաթիռներ, ավիացիայի ուսումնարան հաճախելու նրա որոշումը հեշտությամբ կայացվեց:

Օդանավի մեխանիկները միայն անսարք օդանավներ չեն նորոգում: Ամենակարևոր բաներից մեկը, որ նրանք անում են, օդանավերի ստուգումն ու պարբերաբար նորոգումներ կատարելն է: Նրանք կանոնավոր կերպով ստուգում են ամեն ինչ օդանավում, սկսած պտուտակներից մինչև վայրէջքի կցորդիչը և դրանց միջև եղած ցանկացած մաս:

«Կարող է դժվար լինել գտնել այն չնչին խնդիրը, որը կարող է օդանավի խափանման պատճառ հանդիսանալ», - ասում է Անդրեյը: «Սակայն այն գտնելը ավելի հեշտ է, քան թե փորձելը կրկին վերակառուցել ամբողջ օդանավը»:

Կանոնավոր նորոգումների գրաֆիկ ունենալը և այն բաց թողնելուց խուսափելը կարևոր են և օդանավերի, և Եկեղեցու անդամների համար, որպեսզի նկատենք և ուղղենք խնդիրները, մինչև դրանք դառնում են մեխանիկորեն կամ հոգևոր առումով կյանքի համար վտանգավոր:

Հոգևոր պարբերաբար նորոգումները

Անդրեյն ապրում է Բուխարեստում, մոտ երկու միլիոնանոց քաղաքում: Ինչևիցե, Եկեղեցին շատ երիտասարդ է Ռումինիայում, և Բուխարեստում անդամների թիվը բավական է միայն երկու ճյուղերի համար: Անդրեյն ու նրա ընտանիքը հեռու են ապրում իրենց ճյուղի մյուս անդամներից: Անդրեյը զգում է աշխարհի հրապուրանքը իր ողջ շրջապատում՝ դպրոցում և իր ընկերների մեջ: Նա գիտի, թե որքան հեշտ կլինի խափանվելը, ինչ վերաբերվում է հոգևորին, եթե նա կանոնավոր կերպով չհետևի հոգևոր պարբերական նորոգմանը:

Կյանքը կարող է հախուռն լինել: Դպրոցի պարապմունքների, ֆուտբոլի և համակարգչի վրա ծախսած ժամանակի հետ մեկտեղ Անդրեյը ժամանակ է տրամադրում աղոթքին, ծոմին, սուրբ գրությունների ուսումնասիրությանը և որպես քահանա իր պարտականությունների կատարմանը: Նա նաև հետևում է, որ «գնա» սեմինարիա, ինչը հեռավորության պատճառով նա անում է առցանց:

Այդ բաները անելը կանոնավոր հոգևոր նորոգումների մաս են կազմում և օգնում են նկատել և ուղղել թուլությունները, մինչ դրանք կդառնան հոգևոր առումով

ՀՈԳԵՎՈՐ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

«Մենք պետք է վարենք կանոնավոր հոգևոր ստուգումներ մեր հանդեպ, որպեսզի պարզենք, թե որտեղ մենք կարիք ունենք զարգանալու:

Սովորաբար մենք գիտակցում ենք այս փոքր թերությունները Սուրբ Հոգու օգնությամբ: . . . Մենք պետք է ուշադիր լսենք, թե ինչ են մեզ հուշում Հոգին, Եկեղեցու ղեկավարները, սիրելի մարդիկ, աշխատակիցները և ընկերները»:

Elder Marcos A. Aidukaitis of the Seventy, "Honesty in the Small Things," *Ensign,* Sept. 2003, 30.

ՕԴԱՆԱՎԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ISTOCKPHOTO © ՔՐԻՍՏՈՖԵՐ ՕԼՍԵՆԻ. ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ԱԴԱՄ Ս. ՕԼՍՈՆԻ ԿՈՂՄԻՑ:

կյանքին սպառնացող վտանգներ:

«Կան բաներ, որոնք դուք պարզապես պետք է կանոնավոր կերպով կատարեք, սովորություն դարձնելով», - ասում է նա: «Դուք չեք կարող թույլ տալ, որ կյանքն իրենը թելադրի»:

Հոգևոր խափանումներ

Անդրեյը սովորել է, որ եթե մենք կանոնավոր կերպով չենք կատարում հոգևոր նորոգումներ, այնպիսի ներգործությունները, ինչպիսիք են ջղայնության զգացումը կամ հասակակիցների ազդեցությունը, կարող են հաղթահարել գայթակղություններին դիմադրելու մեր կարողությանը:

Ճիշտ ինչպես օդանավը առանց աշխատեցնելու կորցնում է բարձրությունը, երբ մենք մեղք ենք գործում, մենք կորցնում ենք հոգևոր ուժը և բարձրությունը՝ հեռացնելով ինքներս մեզ երկնքից և շուտով կամ ավելի ուշ առաջնորդվում ենք դեպի հոգևոր խափանում:

Թեև Փրկչի Քավության շնորհիվ վթարից հետո մեզ նորից կարող են հավաքել, շատ ավելի լավ կլինի, եթե մենք վստահենք Նրա զորությանը՝ լուծելու համար խնդիրը, երբ այն դեռ փոքր է և քանի դեռ հոգևոր վթար չի ստեղծել:

Շրջանցելու վտանգը

Օդանավի մեխանիկական պարբերաբար նորոգումները շրջանցելու միտքը երբեք չի այցելել Անդրեյին: Շրջանցելը տարբերակ չէ: «Օրենքներ կան դրա

վերաբերյալ», -ասում է նա: Բայց եթե նա *շրջանցի* նորոգումներ կատարելը մեկ անգամ, նա ընդունում է, որ «երևի ոչինչ չի պատահի»:

Հավանաբար շրջանցելու հետ կապված ամենամեծ խնդիրն այն չէ, որ օդանավը անմիջապես կխափանվի, այլ որ այն չի խափանվի անմիջապես: «Եթե ոչ մի վատ բան չպատահի, երբ ես շրջանցեմ այսօր, ես ավելի հեշտությամբ կգայթակղվեմ շրջանցել վաղը», - ասում է նա:

Երբ պարբերական նորոգումները հաճախակի են շրջանցվում, օդանավի կամ մեր վրա գործադրված ներգործություններն ու լարումները վաղ թե ուշ ինչ-որ վթարի պատճառ են դառնում: «Ի վերջո մենք վթարի կենթարկվենք», - ասում է նա:

Ահա թե ինչու է Աստված մեզ տվել օրենքներ կանոնավոր կերպով հոգևոր նորոգումներ կատարելու մասին ևս: «*Հաճախ* հավաքվեք [եկեղեցում] միասին» (3 Նեփի 18.22, շեշտադրումն ավելացված է): *Միշտ* աղոթեք (տես 3 Նեփի 18.19): Ուսումնասիրեք սուրբ գրությունները *ջանասիրաբար* (տես 3 Նեփի 23.1-5): «Թող առաքինությունը զարդարի քո մտքերն *անդադար*» (ՎԵՈՒ 121.45, շեշտադրումն ավելացված է): *Կանոնավոր կերպով* այցելեք տաճար:[1]

Այդ օրենքները պահելը և կանոնավոր կերպով նորոգումներ կատարելը կօգնի մեզ շարունակել թռչել ճիշտ ուղղությամբ:

«Օդանավը ստեղծված է, որ բարձրանա վերև և հեռանա երկրից», - ասում է Անդրեյը: «Դա այն է, ինչ Երկնային Հայրն ուզում է մեզ համար: Կանոնավոր նորոգումներով մենք ապահով կհասնենք այնտեղ, որտեղ ուզում ենք գնալ՝ հետ երկինք»: ■

ՀՂՈՒՄ

1. Տես Թոմաս Ս. Մոնսոն, «Սուրբ Տաճարը՝- փարոս աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2011, 92:



ՀՈԳԵՎՈՐ ՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Օդանավերի մեխանիկները հաճախ հարցերի ցուցակ են ունենում, որը նրանք պետք է ստուգեն կանոնավոր կերպով: Եկեղեցու ղեկավարները խորհուրդ են տվել վարել մեր սեփական կանոնավոր հոգևոր ստուգումները:[1] Ահա որոշ հարցեր, որոնք կարող են օգնել ձեզ ժամանակ առ ժամանակ ստուգել ձեր հոգևոր առողջությունը: Եթե դուք մտահոգություններ ունեք ձեր պատասխաններից որևէ մեկի հետ կապված, խոսեք ձեր ծնողների կամ եպիսկոպոսի/ճյուղի նախագահի հետ:

- ☐ Արդյո՞ք ես աղոթում եմ կանոնավոր կերպով և անկեղծորեն:
- ☐ Արդյո՞ք ես վայելում եմ Աստծո խոսքը սուրբ գրությունների և ապրող մարգարեների ուսմունքների շնորհիվ:
- ☐ Ես պահո՞ւմ եմ Կիրակի օրը սուրբ և հաճախում Եկեղեցու ժողովներին կանոնավորապես:
- ☐ Արդյո՞ք ես ծոմ եմ պահում և պատրաստակամ վճարում իմ տասանորդներն ու նվիրատվությունները:
- ☐ Ես ցանկանո՞ւմ եմ ներել ուրիշներին:
- ☐ Արդյո՞ք ես կանոնավոր կերպով ճանապարհներ եմ գտնում ուրիշներին ծառայելու համար:
- ☐ Ես հիշո՞ւմ եմ Փրկչին բոլոր ժամանակներում և հետևում Նրա օրինակին:
- ☐ Ես պահո՞ւմ եմ իմ մտքերն ու լեզուն մաքուր:
- ☐ Ես ազնի՞վ եմ բոլոր բաներում:
- ☐ Ես պահո՞ւմ եմ Իմաստության խոսքը:

ՀՂՈՒՄ

1. Տես Joseph B. Wirthlin, "True to the Truth," *Ensign,* May 1997, 17:

«Փորձեցէք ձեր անձերը, թէ արդեօք հաւատքո՞ւմն էք» (Բ Կորնթացիս ԺԳ.5):

ԹԵՎԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԱՂԱՍ Ս. ՕԼՍՈՆԻ ԿՈՂՄԻՑ; ՎԱՇԱՆԿԻՐ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՋՈՆ ԼԵՅՈԹԻ ԿՈՂՄԻՑ

ՏԱՐԿԵԼ ԲՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Թույլ տվեք սեմինարիային վերափոխել ձեզ։

(Տես 1 Նեփի 19.23։)

Ալ. 1561 © Եկեղեցին Յիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Հանգանակությունն։ Հանրագիտարանը, Եկեղեցին Յիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Հանգանակությունն։ Հանրագիտարանը, Հանրագիտարանը։ Հանրագիտարանը։ Հանրագիտարանը։

Խոսելու ժամանակը

«Ես կպատվեմ իմ ծնողներին և կանեմ իմ մասը՝ իմ ընտանիքն ամրացնելու համար» (Ավետարանի իմ չափանիշները):

Հիլարի Վոթկինս Լեմոն

Հիմնված է իրական պատմության վրա

«Դե, բոլորդ եկեք, խոսելու ժամանկն է», - կանչեց մայրիկը:

Ջոսին ամբողջ օրը սպասում էր խոսելու ժամանակին: Ամեն երեկո Ջոսին և նրա երկու փոքր եղբայրները՝ Բենը և Վեսը, հավաքվում էին հյուրասենյակում մայրիկի և հայրիկի հետ և զրուցում այն ամենի մասին, ինչ կատարվում էր իրենց կյանքում:

Այսօր հայրիկն ասաց, որ կօգնի Ջոսիին պարապել կարդալ առավոտյան հայտարարությունները: Առավոտյան հայտարարությունները կարդալը հատուկ պատիվ էր Ջոսիի դպրոցում: Վաղը Ջոսին պետք է նվագեր իր սիրված երգի մի մասը և դպրոցի բարձրախոսներով և միկրոֆոնով հայտարարեր օրվա միջոցառումների և նախաճաշի մասին:

Ջոսին վազեց հյուրասենյակ, ոգևորված, որ պետք է պարապեր իր տեքստը:

«Ահա մեր հռչակավոր հայտարարողը», - ասաց հայրիկը, երբ Ջոսին ցատկեց բազմոցին և նստեց նրա կողքին: «Ինչպե՞ս ես զգում վաղվա համար»:

«Ես ուրախ եմ, բայց մի փոքր հուզված: Ես վախենում եմ ինչ-որ բան շփոթել ամբողջ դպրոցի առաջ», - ասաց Ջոսին:

«Ահա, թե ինչու ենք մենք պարապում», - ասաց հայրիկը: «Դե սկսիր և կարդա քո տեքստը, իսկ ես կլսեմ, թե որ մասերում պետք է աշխատել ավելի լավացնել»:

«Շնորհակալություն, հայրիկ», - ասաց Ջոսին:

Նա և հայրիկը կարդացին այնքան անգամ, որ Ջոսին կորցրեց հաշիվը: Այնուհետև Ջոսին կանգնեց և կարդաց իր տեքստը վերջին անգամ ամբողջ ընտանիքի համար: Մայրիկը և հայրիկը ուրախ գովեցին նրան: Բենը ձեռքով բարձր գնահատական տվեց, իսկ Վեսը ժպտաց և ծափ տվեց:

Ջոսին երջանիկ և վստահ գնաց քնելու:

Հաջորդ առավոտ ամեն-ինչ հարթ անցավ: Թեև հուզված էր, Ջոսին ժպտաց, երբ լսեց իր երաժշտությունը դպրոցի բարձրախոսներով: Նա ուրախ էր, որ պարապել էր տեքստը հայրիկի հետ, և նա կարդաց այն դանդաղ և հստակ, առանց սխալների:

«Դու հիանալի գործ արեցիր», - ասաց տնօրենի օգնական՝ պարոն Բլեյքը:

Դպրոցական օրվա ավարտից հետո Ջոսին կանգնած էր ավտոբուսի համար հերթում: Տարիքով ավելի մեծ մի տղա շրջվեց և հարցրեց. «Դո՞ւ ես այն աղջիկը, որ այսօր կարդաց հայտարարությունները»:

Ջոսին ժպտաց: «Այո», - ասաց նա:

«Ինչո՞ւ էիր դու ընտրել այդ երգը», - հարցրեց տղան: «Դա հիմար երգ էր: Դու իրականում փչացրեցիր առավոտյան

հայտարարությունները»: Ապա նա վիրավորական անունով կոչեց նրան և ծիծաղեց իր ընկերների հետ:

Ջոսին միայնակ նստեց ավտոբուսի առաջին նստատեղին: Նրա սիրտը խառնում էր:

Երբ Ջոսին հասավ տուն, մայրիկը խաղ էր անում Վեսի հետ:

«Մայրիկ, ես գիտեմ, հիմա խոսելու ժամը չէ, բայց կարո՞ղ ենք մենք խոսել հենց հիմա», - ասաց նա:

«Իհարկե, Ջոսի», - ասաց մայրիկը: «Ի՞նչ է պատահել: Ինչ-որ բան սխա՞լ գնաց առավոտյան հայտարարությունների ժամանակ»:

«Ոչ, - ասաց Ջոսին: - Ամեն ինչ զերազանց էր: Գոնե, ես այդպես էի կարծում, մինչև որ մի տղա չասաց ինձ, որ ես հիմար երգ էի ընտրել: Նա նաև վիրավորեց ինձ»:

Մայրիկը ձեռքով թփթփացրեց հատակին՝ ցույց տալով իր կողքը: Ջոսին եկավ և նստեց: Մայրիկը գրկեց նրան: Ջոսին և մայրիկը խոսեցին ամենի մասին, ինչ պատահել էր այդ օրը, ներառյալ պարոն Բլեյքի գովեստի խոսքերի մասին:

«Ես զղջում եմ, որ տղան և նրա ընկերները կոպիտ էին քեզ հետ, - ասաց մայրիկը: - Բայց երևում է, որ մյուս մարդիկ, որոնց դու հարգում ես, ինչպես պարոն Բլեյքը, շատ գոհ էին քո հայտարարություններից: Հայրիկը և ես այնքան հպարտ ենք քեզնով: Դու շատ աշխատեցիր և դա վարձատրվեց»:

Ջոսին նորից գրկեց մայրիկին: «Շնորհակալություն, մայրիկ, - ասաց նա: - Ես ինձ այժմ ավելի լավ եմ զգում»: Ջոսին ուրախ էր, որ ցանկացած ժամ կարող էր լինել խոսելու ժամ: ■

«Ընտանիքի անդամների միջև չկա ավելի կարևոր բան, քան բաց և ազնիվ հաղորդակցումը»:

Elder M. Russell Ballard of the Quorum of the Twelve Apostles, "Like a Flame Unquenchable," *Liahona,* July 1999, 103.

ՆԿԱՐԵՐԸ: ՋԱՐԵՆ ԲԵՔՍԹԵՆԻ ԿՈՐՄԻՑ

ԽՈՍԵԼ ՄԻԱՍԻՆ

Սիա մի քանի առաջարկություններ ձեր ընտանիքի «խոսելու ժամի» համար.

- Խնդրեք ձեր ծնողներին ամեն օր մի քանի րոպե հատկացնել միասին խոսելու համար: Դա կարող է լինել ճաշի ժամին կամ օրվա ընթացքում որևէ այլ ժամանակ:
- Հետևեք, որպեսզի բոլորը հերթով խոսեն և լսեն: Բաց մի թողեք որևէ մեկին:
- Հարգեք ձեր ընտանիքի անդամների կարծիքները: Հետևեք, որպեսզի յուրաքանչյուրը զգա, որ այն, ինչ նա ասում է, կարևոր է:

ԶՐՈՒՅՑ ԽՐԱԽՈՒՍՈՂ ԽԱՂԵՐ

Եթե խոսելու ժամի վերաբերյալ մտքերի կարիք ունեք, փորձեք այս խաղերը.

Լոբով տոպրակի նետում. Եթե ձեր ընտանիքը մեծ է կամ հերթով խոսելը դժվար, օգտագործեք լոբով լցված տոպրակը, որոշելու համար, թե ում հերթն է խոսելու: Նրանից հետո, երբ այն անձը, ում մոտ գտնվում է լոբով տոպրակը, ավարտում է իր ասելիքը, նետեք տոպրակը ընտանիքի մեկ այլ անդամի, փոխանցելով նրան խոսելու իրավունքը:

Հարցազրույց վարող. Բաժանվեք երկու հոգուց բաղկացած խմբերի և հերթով կատարեք հարցազրույց վարողի դերը: Ձեր զուգընկերոջ համար մի քանի հարց մտածեք, ապա նրան հարցեր տվեք: Ձեր հարցազրույցների համար կարող եք անգամ օգտագործել իրական միկրոֆոն կամ ձայնագրիչ:

Ի՞նչ դուք կանեիք. Հերթով ձեր ընտանիքին տարբեր հարցեր տվեք, որոնք սկսվում են «Ի՞նչ դուք կանեիք . . . » խոսքերով: Որոշ օրինակներ են. «Ի՞նչ դուք կանեիք, եթե մոլորվեիք» և «Ի՞նչ դուք կանեիք, եթե կարողանայիք գնալ աշխարհի ցանկացած վայր»:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԾՆՈՂՆԵՐԻՆ. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽՈՍԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Թեև ընտանիքով խոսելը հետաքրքիր է, կարևոր է նաև, որ ծնողները և երեխաները ժամանակ հատկացնեն առանձին խոսելուն: Օրվա ընթացքում օգտվեք այն պահերից, երբ կարող եք անհատապես խոսել երեխայի հետ: Ամեն անգամ երեխաներից որևէ մեկին, հետո մյուսին, խնդրեք օգնել ձեզ տան գործերով, գնումներ կատարելիս կամ մի քանի րոպե զրուցեք նրա հետ ձեր սենյակում: Միայն մի քանի կարճ րոպեներ կարող են վերածվել կարևոր զրույցների:

Նա կոտրեց ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱՆՔՆԵՐԸ

Երեց Պատրիկ Քիրոն
Յոթանասունից

«Նրանք ունեն հավերժական կյանք Քրիստոսի միջոցով, որը ջարդել է մահվան կապանքները» (Մոսիա 15.23):

Մի երեկո, երբ մեր երեխաները դեռ փոքր էին, մենք անց էինք կացնում ընտանեկան սուրբ գրությունների երեկո: Մենք կարդացինք Փրկչի մասին և խոսեցինք, թե ինչու Նա երբեք սխալներ չէր գործում:

Ավելի ուշ կինս պառկացնում էր մեր երեք տարեկան դստերը՝ Սյուզիին անկողին: Սյուզին նայեց իր մորը և ասաց. «Մայրիկ, Հիսուսը գործել է մի սխալ»:

«Ի՞նչ ի նկատի ունես», - հարցրեց նրա մայրը:

«Նա կոտրել է մի բան», - ասաց Սյուզին:

Մի փոքր շփոթված, նրա մայրը հարցրեց. «Ի՞նչ է Նա կոտրել»:

«Հիսուսը կոտրել է մահվան կապանքները», - պատասխանեց Սյուզին:

Կինս հասկացավ, որ ինքը և Սյուզին բազմաթիվ անգամ երգել էին Երեխաների խմբի «Ոսկե գարնանը» երգը և Սյուզին սովորել էր խոսքերը. «Ոսկե գարնանը, Հիսուս Քրիստոսը արթնացավ և թողեց գերեզմանը, որտեղ պառկած էր, մահվան կապանքները նա կոտրեց»:[1] Սյուզիի մայրը բացատրեց, որ մահվան կապանքները կոտրելը նշանակում է, որ Հիսուսը հարություն առավ, որպեսզի մենք բոլորս կարողանանք կրկին ապրել մահանալուց հետո:

Այդ զրույցը ինձ և կնոջս տվեց բազմաթիվ հնարավորություններ սովորեցնելու մեր դուստրերին՝ Լիզիին, Սյուզիին և Էմմային, այն մասին, թե ինչ է իրականում Քավությունը մեզ համար: Սյուզին իրավացի էր. Հիսուսը կոտրեց մահվան կապանքները: Սակայն դա սխալ չէր: Դա մեծագույն պարգև էր, որ Նա կարող էր տալ մեզ: (Տես Վարդապետություն և Ուխտեր 14.7:)

Փրկիչը մահացավ և հարություն առավ, որպեսզի մենք կարողանանք կրկին ապրել մեր Երկնային Հոր և մեր ընտանիքների հետ՝ համաձայն մեր արդարակեցության: Եթե մենք արժանի ենք, մենք մի օր կարող ենք վայելել անմահության օրհնությունները և հավերժական կյանքը: Ես երախտապարտ եմ, որ Հիսուսը կոտրեց ինչ-որ բան՝ մահվան կապանքները: ■

ՀՂՈՒՄ

1. "On a Golden Springtime," *Children's Songbook,* 88.

ԱՋՈՒՄ: ԴԱՎԹԵՐԸ՝ ԴԻԼԼԵՆ ՄԱՐԹԻ ԿՈՒՄԱԾ

Դուք կարող եք օգտագործել այս դասը և վարժությունը՝ ավելին սովորելով Երեխաների Խմբի այս ամսվա թեմայի մասին:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ

ինձ սովորեցնում է ընտրել ճիշտը

Թանների համար, Զատիկը այս տարի նույնը չի լինելու: Նրա պապիկը մահացել էր, և Թանները տխուր էր, որ երբեք այլևս չէր կարող անցկացնել այդ հատուկ ժամանակը նրա հետ:

Սակայն Երեխաների խմբում, Թաններին հիշեցվեց, որ Զատիկը տոնելու պատճառն այն է, որ Հիսուսն ապրում է: Երբ Նա հարություն առավ, Նրա հոգին ընդմիշտ միավորվեց Նրա մարմնի հետ, որը երբեք այլևս մահ չի տեսնի: Թանները իմացավ, որ Հիսուսի հարության շնորհիվ բոլորը մի օր հարություն կառնեն, նաև՝ նրա պապիկը:

Զատկի երգը երջանկությամբ լցրեց Թաններին. «Հիսուսն հարյավ, Հիսուսն՝ մեր ընկերը: Ուրախ են մեր սրտերը, կրկին ապրում է Նա»:[1]

Թաններն ուզում էր այս բարի լուրը կիսել բոլորի հետ: Նա որոշեց Զատկից առաջ իր հարևանների դռան առաջ դնել զարնան ծաղկեփնջեր և Հիսուսի Հարության մասին սուրբ գրություններ: Նա պատկերացնում էր այն ժպիտները, որոնք կհայտնվեին նրանց դեմքերին, երբ Զատկի առավոտ նրանք գտնեին նրա նվերները: ■

ՀՂՈՒՄ

1. "Jesus Has Risen," *Children's Songbook,* 70.

Երգեր և սուրբ գրություններ

- Հովհաննես 13.15
- Ձեր ընտրությամբ մի երգ Հիսուս Քրիստոսի մասին
- Առաջարկվող երգեր *Երեխաների երգարանից.* "Jesus Has Risen" (70), "Did Jesus Really Live Again?" (64), "Նա զոհվեց, որ մենք կրկին ապրենք", *Ընկեր,* Ապրիլ 2005, Ը13, "Ովսաննա", *Ընկեր,* Ապրիլ 2003, 8-9,

ՀԱՅԵՐԵՆ ԱՎԱՆԴԱՅԻՆ ԵՎ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲՈՂՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ: ՏՍԿՎԱԾՈՒՄ: ՓՈՒ ՍՈՆԻ © 1999 IRI; ՍՅՈՆՍ, ՔՐԻՍՏՈՍԸ ԵՎ ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ ԵՐԵԽՍՆԵՐԸ, ՌԵՆ ՖԱՐՈՆ © 1995; ՀԱՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԻ ԱՆՐԵՆՈՆ © IRI; ԱՅՍՏԵՂՈՒՄ Է ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏՆՎԱԾ ՀԻՄՈՎ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՐ: ԱՌՆՈՒՄ ՀԱՅՏԵՐԳ © 1951 IRI; ԱԶԱՏ ՀԱՅԵՐԸ ԵՎ ՀՈՏԵՐԸ, ՀԱՄԻ ԱՆՐԵՆՈՆ © IRI; ՄԻԱՆԱ ԲԵՐԵՑԵ ԳԻԴԵՈՆԻՆԵՐԸ, ՋԱՄԻ Լ. ՔԱՖ © 1999, ԱՍՊԱՍԱՎՈՐՆ ՄՈԳԵԼՈՒՄ Է, ՈՐ ԵՎ ԳՆԱՑԵՔ ԵՎ ԲԱՐԻՆԻ ԱՅԳԵՐԻՆ, ՀԱՄԻ ԱՆՐԵՆՈՆ © IRI

Ըմ վարժություն

Որտե՞ղ աշխարհում:

Նրանից հետո, երբ Հիսուս Քրիստոսը հարություն առավ, Նա այցելեց մարդկանց ոչ միայն Երուսաղեմում, այլ նաև արդար մարդկանց Ամերիկաներում: Ընտանիքով միասին մի գիծ քաշեք յուրաքանչյուր նկարից դեպի երկիրը (Երուսաղեմը կամ Ամերիկաները), որտեղ Նա այցելել է: Հերթով կարդացեք սուրբ գրությունները՝ ավելի շատ սովորելով այն մասին, ինչ պատկերված է նկարների վրա:

Հիսուսն օրհնում է երեխաներին
3 Նեփի 17.11–25

Հիսուսը հայտնվում է Մարիամ Մագդաղենացուն
Հովհաննես 20.14-18

Հիսուսն ուսուցանում է Ամերիկաներում
3 Նեփի 11.8–11

Հիսուսը բարձրանում է երկինք
Գործք 1.9-11

Հիսուսը հայտնվում է արդար մարդկանց
3 Նեփի 11.1–8

Հիսուսը ցույց է տալիս Իր վերքերը Իր Առաքյալներին
Ղուկաս 24.36-40

Հիսուսը խնդրում է Նեփիացիների գրառումները
3 Նեփի 23.7-13

Հիսուսը հայտնվում է Իր Առաքյալներին
Մատթեոս 28.16-20

Միայն դու

Դուք կարող եք պատրաստել Զատկի ձեր կապոցները, ինչպես Թանները: Օգտագործեք սպիտակ կամ գունավոր թուղթ և հետևեք ստորև նշված քայլերին: Լցրեք կոնը փոքր ծաղիկներով կամ հյուրասիրությամբ և անակընկալ մատուցեք ձեր ընկերոջը կամ ընտանիքի անդամին:



Փորձում եմ լինել Հիսուսի նման

Պարզեցված

Վճռական ♩ = 104–116

Խոսք և երաժշտություն՝ Ջենիս Քափ Փերի

1. Փոր - ձում եմ լի - նել Հի - սուսի նման, Հե - տե - վում եմ
(2. Փոր) - ձում եմ սի - րել մեր - ձա - վորիս, Ծա - ռա - յել ըն -

ես Նը - րան: Փոր - ձում եմ գոր - ծե - լով
կեր - նե - լիս: Սպա - սում եմ այն ու - րախ

և խոս - քե - լով սի - րել, ինչ - պես Նա: Իսկ
օր - վան, երբ Նա կը - վե - ռա - դառ - նա: Փոր -

©1980 by Janice Kapp Perry. Այս երգը կարող է բազմացվել միայն առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար: Այս ծանուցումը պետք է ներառվի յուրաքանչյուր օրինակի մեջ:

ՆԿԱՐՈՒՄԸ՝ ՖԻԼԻՍ ԱԶԻԶ ԿՈՂՄԻՑ


երբ ես փորձ-վում եմ սը - խալ ընտ-րու - թյամբ, Լը-սում եմ ցա -
ձում եմ հի - շել միշտ դա - սե - ը Նը - ը: Եվ այդ պա - հին
ծը ու բա-ռակ շը - շըն - ջող մի ձայն. «Սի - ռեք մի - մյանց, ինչ - պես
Սուրբ Հո - գին իմ մըտ-քում կը - շը - շըն - ջա.
Նա է սի - ռում: Բա - ի ե - ղեք ձեր բո - լոր գոր-ծե -
ռում: Սի - ռող ե-ղեք ձեր գոր - ծում և ձեր մըտ - քում. Սա
1.
2.
է Նա մեզ ու - սու - ցա - նում»: 2. Փոր - նում»:

Քույրեր անունով և հավատքով

Հիթեր Ռիգլի
Եկեղեցու ամսագրեր

Մարիա և Դիանա Դ. միայն քույրեր չեն, նրանք նաև լավ ընկերներ են: Դիանան 10 տարեկան է, իսկ Մարիան դարձել է 12 անցած օգոստոսին: Նրանք ապրում են Ռումինիայում, որտեղ կան Եկեղեցու մոտ 3000 անդամներ: Նրանք Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց հավատքը ամուր են պահում, գնալով եկեղեցի, կարդալով սուրբ գրությունները և աղոթելով:

«Եկեղեցում ես սովորել եմ հավատք ունենալ Աստծո հանդեպ», - ասում է Մարիան: Մի օր նա քննություն ուներ և օգնության համար աղոթեց Երկնային Հորը Հիսուս Քրիստոսի անունով: Երբ նա լավ գնահատական ստացավ, զգաց, որ Երկնային Հայրն օգնել էր իրեն:

Դիանան ասում է, որ Մորմոնի Գիրքն օգնում է իրեն հավատք ունենալ: «Ամեն օր, երբ ես կարդում եմ Մորմոնի Գիրքը, ես լավ օր եմ ունենում», - ասում է նա: Սուրբ գրությունների նա սիրված պատմությունը Ջոզեֆ Սմիթի մասին է: «Նա աղոթեց, և Աստվածն ու Հիսուս Քրիստոսը օգնեցին իրեն», - ասում է նա: ■

ՇՈԿՈԼԱԴ
Երկու քույրերի սիրված անուշեղենը շոկոլադն է: Մարիան սիրում է բրաունի, իսկ Դիանան՝ շոկոլադե թխվածք:

ՔՈՒՅՐԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԿՈՂՄ Ս. ՕԼՍՈՆԻ ԿՈՂՄԻՑ; ԹԽՎԱԾՔԻ ԵՎ ԲՐԱՈՒՆԻՆԻ ՆԿԱՐԸՆԵՐԸ՝ ԹՈՆՅԱ Ս. ՇԱՅԼԻՆԻ ԿՈՂՄԻՑ

ՍԻՐՎԱԾ ԵՐԳ

Մարիան և Դիանան երկուսն էլ դաշնամուր են նվագում: Մարիայի սիրված երգը «Սիրեք միմյանց»-ն է: Այն մարդկանց սիրելու Հիսուսի պատվիրանի մասին է: Դիանան կարող է այն կատարյալ նվագել, սակայն ամենադժվարը վերջին մասն է, ինչպես ասում է նա:

ՈՒԶՈՒՄ ԵՄ ՏԵՍՆԵԼ ՏԱՃԱՐԸ

Մարիան և Դիանան երկուսն էլ ուզում են ամուսնանալ տաճարում: Նրանք ապրում են Կիև Ուկրաինա Տաճարի տարածքում:

Երբ Դիանան մեծանա, նա կգնա Կիև Ուկրաինա տաճար մահացածների համար մկրտություններ կատարելու: Մարիան այժմ բավական մեծ է և կարող է գնալ: Տաճարը գտնվում է մոտ 805 կմ հեռու:

ԸՆՏԱՆԻՔԸ ԱՌԱՋԻՆ ՏԵՂՈՒՄ

Մարիան և Դիանան սիրում են իրենց ծնողներին: «Մայրիկը օգնում է մեզ մեզ ավելի լավ զգալ, երբ մենք հիվանդ ենք», - ասում է Մարիան: «Հայրիկը մեզ դպրոց է տանում», - ասում է Դիանան:

ՀԻՄՆԵՐ

Դիանայի սիրված օրհներգն է «Հեռու, հեռու, Հուդային դաշտերում», որը պատմում է Հիսուս Քրիստոսի ծննդի մասին: Ռումինիայի անդամները օգտագործում են Եկեղեցու հիմների կանաչ գիրքը: «Իմնուրի» ռումիներեն նշանակում է «օրհներգ»:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը կիսվում է այս թեմայի շուրջ որոշ մտքերով:

Ի՞նչ ես կարող եմ անել, որպեսզի հետևեմ ինձ համար ԵՐԿՆԱՅԻՆ ՀՈՐ ծրագրին:

Սովորեք երջանկության մեծ ծրագրի մասին, ուսումնասիրելով սուրբ գրությունները:

Լսեք ներկա և անցյալ մարգարեների ձայնին:

Հնազանդվեք ձեր ներքին զգացումներին, որոնք գալիս են Սուրբ Հոգու հուշումների միջոցով:

Երբ անհրաժեշտ է, խորհուրդ և առաջնորդություն փնտրեք ծնողներից և քահանայության ձեր ղեկավարներից:

From "The Joy of Living the Great Plan of Happiness," Ensign, *Nov. 1996, 75.*

ՆԿԱՐՆԵՐԸ ԲԵՌՆ ԹԻՄՐԻ ԿՈՂՄԻՑ

ԱՎԵՏԱՐԱՆԻ ԻՄ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ես կհետևեմ Երկնային Հոր կողմից ինձ համար նախատեսված ծրագրին:

Ես կհիշեմ իմ մկրտության ուխտը և կլսեմ Սուրբ Հոգուն:

Ես կընտրեմ ճիշտը: Ես գիտեմ, որ կարող եմ ապաշխարել,
երբ սխալ գործեմ:

Ես ազնիվ կլինեմ Երկնային Հոր, մյուսների և ինքս ինձ հետ:

Ես ակնածանքով կօգտագործեմ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի
անունները: Ես չեմ հայհոյի կամ օգտագործի անպատշաճ բառեր:

Կիրակի օրը ես կանեմ այն բաները, որոնք կօգնեն ինձ մոտ
զգալ Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:

Ես կպատվեմ իմ ծնողներին և կանեմ, ինչ ինձանից կախված է,
զորացնելու իմ ընտանիքը:

Ես սուրբ և մաքուր կպահեմ իմ միտքն ու մարմինը և չեմ
օգտագործի բաներ, որոնք վնասակար են ինձ համար:

Ես համեստ կհագնվեմ հարգանք ցուցաբերելով
Երկնային Հոր և իմ նկատմամբ:

Ես կկարդամ և կդիտեմ միայն այն բաները, որոնք
հաճելի են Երկնային Հորը:

Ես կլսեմ միայն այնպիսի երաժշտություն, որը հաճելի է Երկնային Հորը:

Ես կձգտեմ լավ ընկերներ ունենալ և բարությամբ կվերաբերվեմ ուրիշներին:

Այժմ ես կապրեմ արժանի տաճար գնալու համար և կանեմ ինչ ինձանից կախ-
ված է, հավերժական ընտանիք ունենալու համար:

ԵՍ ԱՍՏԾՈ ԶԱՎԱԿՆ ԵՄ

Ես գիտեմ, որ Երկնային Հայրը սիրում է ինձ, իսկ ես սիրում եմ Նրան:
Ես կարող եմ աղոթել Երկնային Հորը ցանկացած
պահի, ցանկացած վայրում:
Ես աշխատում եմ հիշել և հետևել Հիսուս Քրիստոսին:

Տեսնել Զատկի ուրախությունը

Հիմնված է իրական պատմության վրա

ՆԱՄՈՒՇԱՐ: ՋԵՆ ՀԵՆՄԻՐ ԿՈՎՈՒՏ

4.
Ինչո՞ւ նրանք այդքան էլ ուրախ չեն Զատկի համար:
Զատիկը տխուր օր է: Դա Հիսուսի մահվան հետ է կապված:
5.
Դուք հիշո՞ւմ եք, ինչ պատահեց Զատկի կիրակի օրը:
6.
Ես գիտեմ: Հիսուսը կրկին ապրեց:
Եվ մենք նույնպես կարող ենք կրկին ապրել:
7.
Ճիշտ է: Զատիկը ուրախ տոն է, քանի որ մենք տոնում ենք Հիսուսի Հարությունը:
8.
Ես սիրում են Զատիկը:
Ես նույնպես:

Զատկի ոտնահետքերը

Հիսուս Քրիստոսը կարևոր աշխատանք է կատարել որոշ վայրերում նրանից առաջ, երբ խաչվեց և հարություն առավ: Հետևեք ոտնահետքերին, որպեսզի պարզեք, թե ուր Նա գնաց և ինչ արեց:





ՆԿԱՐՆԵՐԸ՝ ԱԴԱՄ ԿՈՖՈՐԻ ԿՈՂՄԻՑ

Այցելեք news.lds.org կայքէջը Եկեղեցու նորություններին ու իրադարձություններին ծանոթանալու համար:

Ղեկավարների համաշխարհային ուսուցումը ուղի է հարթում իսկական աճի համար

Հիթեր Վիթլ Ռիգլի
Եկեղեցու նորությունները և իրադարձությունները

2012թ. փետրվարի 11-ին կայացած Ղեկավարների համաշխարհային ուսուցման ժողովին Եկեղեցու ղեկավարները բացատրեցին «իսկական աճի» կարևորությունը և թե ինչպես հասնել դրան:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը՝ Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդականը, և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամները, Յոթանասունի Նախագահությունը և Եկեղեցու օժանդակ կազմակերպությունների նախագահությունները մասնակցեցին աշխարհով մեկ Եկեղեցու ղեկավարների ուսուցմանը:

«Եկեղեցու տեսանկյունից *աճը* կարող է սահմանվել որպես «նոր անդամներ»: . . . *Իսկական աճը,* այնուամենայնիվ, սահմանվում է որպես «ակտիվ անդամների քանակի աճ»», - բացատրեց Նախագահ Ուխդորֆը:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը ավելացրեց. «Աճ է տեղի ունենում, երբ անձնական, հարատև դարձի գալը առ ավետարան արտահայտվում է յուրաքանչյուր անհատի և ընտանիքի հավատարմության աճով»:

Ըստ Նախագահ Ուխդորֆի, հավատարմության այդ աճը ներառում է բաներ, որոնք չեն կարող չափվել, ինչպես օրինակ ամենօրյա աղոթքը, սուրբ գրությունների ուսումնասիրությունը, ընտանեկան երեկոն, սերը տան մեջ և Քավության հետ կապված անձնական փորձառություններ:

«Շատ հաճախ մենք աղավաղում ենք Հիսուս Քրիստոսի ավետարանի գեղեցկությունն ու պարզությունը բծախնդիր ակնկալիքներով», - ասաց նա: «Այնուամենայնիվ, երբ մենք կենտրոնանում ենք ավետարանի «ինչու» հարցի վրա, շփոթության մեծ մասը հեռանում է»:

Հեռարձակումը հիմնականում կենտրոնացված էր հիմնական վարդապետությունների ու սկզբունքների վրա, որոնք պատասխաններ են ապահովում «ինչու» հարցերին:

«Պատշաճորեն տրված «ինչու» հարցերը կտանեն մեզ «ով», «ինչ», «երբ», «որտեղ», «ինչի համար» և «ինչպես» պատշաճ որոշումների» - ասաց Նախագահ Ուխդորֆը:

Ամուսնությունն ու ընտանիքը և Ծրագիրը

«Եկեղեցին կազմված է ընտանիքներից», - ասաց Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Բոյդ Ք. Փաքերը: «Ծխերն ու ցցերը էական չեն: Երբ մենք խոսում ենք ընտանիքների մասին, այդ ժամանակ մենք տեսնում ենք իսկական աճ Եկեղեցում»:

Նա նշեց, որ յուրաքանչյուր ամուսին ու հայր պետք է քահանայության պաշտոնատար անձ լինի իր տանը՝ արդարությամբ նախագահելով իր ընտանիքում: Նմանապես, նա ասաց, որ քահանայության ղեկավարները պետք է ղեկավարեն արժանիորեն քահանայության տարբեր պաշտոններում, ամեն քահանայություն կրող ունի ճիշտ այնքան քահանայություն, որքան իր կողքինը (տես ՎևՈՒ 1.20):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնը շեշտել է, որ ամուսիններն ու կանայք, հայրերն ու մայրերը պետք է կառուցեն սիրո, ապաշխարության և աղոթքի հարաբերություններ ընտանիքը հաջողությամբ պաշտպանելու համար, որն «ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում Իր զավակների հավերժական ճակատագրի համար» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Լիահոնա* և *Ensign,* նոյեմբեր 2010, 129):

«Սուրբ գրություններում երեք անգամ նախազգուշացվում է, որ Տիրոջ վերադարձի ժամանակ երկիրը ամբողջությամբ կոչնչացվի, եթե որոշ պայմաններ առկա չլինեն», - ասաց նա: «Յուրաքանչյուր դեպքում այդ նախազգուշացումը վերաբերվում է մարդկային ընտանիքին առանց տաճարի կնքման արարողությունների առկայության: Առանց վեհացման այս արարողությունների Աստծո փառքը չի իրականացվի»:

Վերջնական նպատակին՝ Աստծո բոլոր զավակների հավերժական կյանքին ու վեհացմանը հասնելու համար պահանջվում է, որ իսկական աճ տեղի ունենա մեր տներում, ծխերում և ճյուղերում և ամբողջ Եկեղեցում:

Ավետարանի կիրառումը

Իրական աճն ու փոփոխությունը գալիս են ամենօրյա կյանքում ավետարանը կիրառելու արդյունքում: Հարց ու պատասխանի ընթացքում Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Լ. Թոմ Փերին և Դ. Թոդ Քրիստոֆերսոնը բացատրեցին, որ ավետարանի ամբողջական կիրառումը նշանակու, է տաճարային ուխտեր կնքելն ու պահելը: Երեց Քրիստոֆերսոնն ասաց, որ ուխտերին հնազանդ լինելը կարող է փոխել բնական մարդուն, ժամանակի ընթացքում դարձնելով նրան Սուրբ:

Ուրիշներին օգնության հասնելը ավետարանը կիրառելու մեկ այլ կարևոր մաս է: Անդամները պարտավոր են որպես անհատներ և Եկեղեցի օգնության հասնել և փրկել նրանց, ովքեր նյութական և հոգևոր կարիքներ ունեն, ինչպես ասացին ղեկավարները:

Մենք չպետք է հապաղենք ձեռք մեկնել այլ հավատքներին պատկանող և ծառայություն մատուցող կազմակերպություններին աղքատների ու կարիքավորների համար հոգալու նպատակով, ասաց Երեց Քրիստոֆերսոնը: Քահանայության ղեկավարները պետք է առաջնորդեն այս ջանքերը, սակայն անդամներն ու միսիոներները պետք է նույնպես օգնեն կատարել այդ դերը:

Քննարկման ընթացքում հատուկ շեշտվեց ընտանիքներին ծառայելու, Մելքիսեդեկյան քահանայության կրողներին ամրացնելու և երիտասարդների հավատքն ու վկայությունը ամրացնելու կարևորությունը: Քննարկմանը մասնակցեցին նաև Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բալլարդը և Երեց Նիլ Լ. Անդերսենը, ինչպես նաև Յոթանասունի Նախագահությունից Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդը,

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը խոսում է քննարկման ժամանակ, որը տեղի ունեցավ 2012թ. փետրվարի Ղեկավարների համաշխարհային ուսուցման ժողովին:

Փետրվարի Համաշխարհային ուսուցման ժողովին Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆն ասաց. «Առաջին բանը, որ մենք պետք է անենք, դա հասկանալն է: Երկրորդը, մեր հասկացածը գործի դնելն է: . . . Քիչ օգուտ կա Աստծո խոսքը լսելուց, եթե մենք մեր լսածը չենք իրականացնում մեր կյանքում»:

Նա հրավիրեց Եկեղեցու ղեկավարներին հեռարձակումից հետո և իրենց կոչումներում ծառայության ողջ ընթացքում անել երեք բան, որպեսզի առավելագույնը կարողանան սովորել Եկեղեցու ղեկավարների ուսուցումից.

1. Անհատապես և Եկեղեցու խորհուրդներով աղոթքով խորհեք ձեր ստացած ուսուցման շուրջ և գտեք ձեր ծառայության և սպասավորման «ինչու»-ն:
2. Խորհելուց և քննարկելուց հետո սահմանեք որոշակի գործողություններ, որոնք դուք կպարտավորվեք կատարել: Գործողությունները պետք է հարմարեցվեն յուրաքանչյուր կազմակերպության, ծխի, ցցի, ընտանիքի կամ անհատի պայմաններին ու կարիքներին:
3. Այս պարտավորությունները ստանձնելուց հետո, ձեր բոլոր խորհուրդների ժողովների ժամանակ հետևեք դրանց կատարմանը՝ ձեր պարտականությունների և կոչումների շրջանակներում:

Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ Էլեյն Ս. Դալտոնը և Երեխաների Խմբի գերագույն նախագահ Ռոզմարի Մ. Վիքսոմը:

Երեց Ռասբենդն ասաց, որ յուրաքանչյուր ղեկավար պետք է ներգրավված լինի անդամներին լիարժեք ակտիվության վերադարձնելու գործում, իսկ Երեց Անդերսենը նշեց, որ երիտասարդները պետք է ավելի շատ ներգրավված լինի մյուս երիտասարդներին վերաակտիվացնելու և ամրացնելու գործում:

Հասնել իրական աճի

Իրական աճ տեղի է ունենաում այնդեպքում, երբ մենք կիրառում ենք ավետարանի սկզբունքները մեր ամենօրյա կյանքում, նշեց Նախագահ Ուխդորֆը:

«Երբ դուք խորհեք այս թեմաների շուրջ, որպես անհատներ և որպես խորհրդականներ ինքներդ ձեզ տվեք ձեր պարտականություններում ձեր ծառայությանը վերաբերվող «ինչու» և «ուստի, ինչ» հարցերը»:

Սովորեք ավելին

Անհատները կարող են դիտել, ունկնդրել, տպագրել և ներբեռնել հեռարձակման նյութերը տասնյակ լեզուներով՝ այցելելով lds.org/study/other-addresses կայքէջի **Worldwide Leadership Training** կապուղին: ■

Պահանջվում են հոդվածներ

Լիահոնան ցանկանում կարդալ ձեր Սուրբ Ծննդյան ձեր ավանդույթների մասին:

- Ինչպե՞ս է ձեր ընտանիքը տոնում տարվա այս ժամանակը:
- Ի՞նչ ավանդույթներ են ընդունված ձեր մշակույթում:
- Ի՞նչ ավանդույթներ եք դուք ստեղծել, որոնք ձեզ և ձեր ընտանիքին մոտեցնում են Փրկչին:
- Հատկապես ավանդությունների հետ կապված Սուրբ Ծննդյան հիշարժան ի՞նչ փորձառություններ կարող եք կիսել մեզ հետ:

Խնդրում ենք, ուղարկեք ձեր հուշերը և մտքերը *Լիահոնա* ամսագրին մինչև 2012թ. հունիսի 1-ը՝ liahona@ldschurch.org հասցեով: ■

BibleVideos.LDS.org կայքէջը նվեր է աշխարհին

2011թ. Առաջին Նախագահության Սուրբ Ծննդյան հավաքի ժամանակ Եկեղեցու ղեկավարները ներկայացրեցին Հիսուս Քրիստոսի կյանքը Աստվածաշնչյան տեսաերիզների կայքէջը՝ «նվեր» աշխարհին:

BibleVideos.lds.org կայքէջում տեղադրվում են կարճ տեսաֆիլմեր են, որոնք ներկայացնում են տեսարաններ Քրիստոսի կյանքից՝սկսած հրեշտակից, որը կանխագուշակում է Քրիստոսի ծնունդը, մինչև Փրկչի Հարությունը:

Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը, հավաքի ժամանակ հայտարարեց կայքէջի մասին:

«Ինչպես սուրբ գրությունները, որոնց հավատարմորեն հետևում են այս կարճամետրաժ ֆիլմերը, դրանք կարող են ձեզ լուռ թվալ», - ասաց նա: «Ձեր հավատքն ու Սուրբ Հոգին կստեղծեն այն զգացումը, որին արժանի են այս աշխարհը փոխող իրադարձությունները»:

Տեսագրումների նյութը ապահովում է Եկեղեցու նորաստեղծ ՎՕՍ Մոշն Փիքչրս Ստուդիո Սաութ Քամփուսը Գոշենում, Յուտա,, որտեղ Նոր Կտակարանի սուրբ գրությունների գրադարանի նախագծի նկարահանումը սկսել էր 2011թ. օգոստոսին:

Ծրագրի շրջանակներում կպատրաստվեն ավելի քան 100 կարճ տեսագրություններ, որոնք կնկարագրեն Քրիստոսի կյանքը՝ վերցված անմիջապես Թագավոր Հակոբոսի Աստվածաշնչի տարբերակի տեքստից:

Կայքէջը ունի օգտագործման համար բավականին հեշտ կառուցվածք և մատչելի է անգլերենով (BibleVideos.lds.org), իսպաներենով (videosdelabiblia.org) և պորտուգալերենով (videosdabiblia.org): Առկա է նաև iPad app, որն առաջարկում է Աստվածաշնչի պատմություններին ծանոթանալու տեսողական, ձայնային և հպումային նոր եղանակ: ■

Ի վերջո, մոտավորապես 100 տեսագրություններ, որոնք ներկայացնում են Քրիստոսի կյանքի Նոր Կտակարանի տեսարանները, մատչելի կլինեն Հիսուս Քրիստոսի կյանքը աստվածաշնչյան տեսագրությունների կայքէջում:

Երեց Քրիստոֆերսոնը և Երեց Ջենսենը ուսուցանում են անդամներին Արգենտինայում

2011 թ. նոյեմբերի 12-ին, շաբաթ օրը, Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը և Յոթանասունի Նախագահությունից Երեց Ջեյ Ե. Ջենսենը իրենց խոսքով դիմեցին Սալտայի՝Արգենտինա, պատանիներին, երիտասարդ չափահասներին, քահանայության ղեկավարներին, միսիոներներին և անդամներին:

Նաև ներկա էին Երեց Մերվին Բ. Արնոլդը՝ Հարավային Ամերիկայի Հարավային Տարածաշրջանի Նախագահը, նրա կինը՝ Դևոնան, և Տարածաշրջանի Յոթանասունական՝ Երեց Ռուբեն Սփիթեյլը: Ներկա էին նաև Երեց Քրիստոֆերսոնի կինը՝ Քեթին և Երեց Ջենսենի կինը՝ Լոնան:

Հավաքին մասնակցում էին մոտ 1300 երիտասարդներ և ծնողներ: Ելույթ ունեցան և Երեց Քրիստոֆերսոնը, և Երեց Ջենսենը: Եվս 10000 անդամներ 70 ցցի կենտրոններում Արգենտինայով մեկ դիտեցին հեռարձակումը:

Երեց Ջենսենը, ով վերջերս ծառայել էր որպես Հարավային Ամերիկայի Հարավային Տարածաշրջանի Նախագահ, ասաց. «Եթե դուք իմ ասածներից ոչինչ չհիշեք, ես կկամենայի, որ դուք հիշեիք մի արտահայտություն մարգարեի՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի ելույթից, ում մասին ես վկայում եմ, որ Աստծո ճշմարիտ մարգարեն է: Արտահայտությունը հետևյալն է. «Որոշումները վճռում են ճակատագիրը:»»

«Մենք ունենք կամքի ազատություն՝ որոշումներ կայացնելու ունակություն և արտոնություն», - ասաց Երեց Ջենսենը, և այդ որոշումներով մենք ընտրում ենք մեր ճակատագրերը:

Նա պատմեց իր ընկերներից մեկի մասին, ով մի գիշեր ալկոհոլի ազդեցության տակ մեքենա վարեց և արդյունքում երկու մարդ սպանեց: Նա դրան հակադրեց ամուսնությունը հետաձգելու իր ու իր կնոջ ընտրությունը, որ նա կարողանար միսիա ծառայել որպես երիտասարդ տղամարդ:

«Երբ ես վերադարձա, մենք ամուսնացանք տաճարում: Մենք ուխտեր կապեցինք, որոնք մենք նորացնում ենք ամեն շաբաթ մեր ողջ կյանքի ընթացքում: Մենք որոշում կայացրեցինք, որը վճռեց մեր ճակատագիրը», - ասաց նա:

Քույր Քրիստոֆերսոնը շարունակեց, կիսվելով ուխտերը պահելու վերաբերյալ իր վկայությամբ, և Երեց Քրիստոֆերսոնը փակեց ժողովը:

«Միակ բաները, ինչի կարիքը դուք իրոք ունեք, սերն ու հավատքն է», - ասաց Նախագահ Քրիստոֆերսոնը: «Հավատքն է, որ օգնում է մեզ մեր ամուսնությունում, ընտանիքում, մասնագիտությունում [և] աշխատանքում»:

Նա նշեց, որ պատվիրանները ուղղություն են տալիս մեր կյանքին և օգնում են մեզ հասնել նրան, ինչն իսկապես կարևոր է:

Նա այնուհետև խորհուրդ տվեց և երիտասարդներին, և նրանց ծնողներին խոստանալ հետևել *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկում գտնվող խորհուրդներին:

ՋԵՆՍԵՆՆԵՐ ՈՒՐԵՑ

Երեց Քրիստոֆերսոնը և Երեց Ջենսենը իրենց խոսքով դիմեցին Արգենտինա Ռեզիստենսիա Միսիայի միսիոներներին 2011թ. նոյեմբերի սկզբին:

«Սա մեծապես կամրացնի ձեր երեխաներին, նույնիսկ երբ նրանք իրենց միայնակ գտնեն, իմանալով, որ իրենց ծնողները ապրում են այս նույն սկզբունքներով», - ասաց նա:

Երեց Քրիստոֆերսոնը եզրափակեց, Արգենտինայի անդամների հանդեպ սեր արտահայտելով, որտեղ նա միսիա էր ծառայել մոտ հինգ տասնամյակ առաջ:

Սալտայում Երեց Քրիստոֆերսոնը և Երեց Ջենսենը նաև հանդիպեցին տեղի միսիոներների և երիտասարդ ամուրիների հետ, ում նրանք հայտնեցին Եղբայրների սերը:

Մեր ժամանակների Առաքյալների ծառայության մասին ավելին կարդալու համար այցելեք Մարգարեներն ու Առաքյալները խոսում են այսօր վեբսայտը LDS.org կայքէջում: ■

Քուեթզալթենանգո Գվատեմալա տաճարը, որը նվիրագործվեց 2011թ. դեկտեմբերի 11-ին, Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի կողմից, Եկեղեցու 136-րդ տաճարն է:

Քվեթզալթենանգո Գվատեմալա տաճարի նվիրագործումը

Քվեթզալթենանգո Գվատեմալա տաճարը նվիրագործվեց 2011թ. դեկտեմբերի 11-ին, կիրակի օրը, երեք նիստերով, Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի կողմից: Նվիրագործման նիստերը հեռարձակվեցին տաճարի շրջանի Եկեղեցու անդամների համար:

«Ինչ գեղեցիկ տաճար է սա», - ասաց Նախագահ Ուխդորֆը շաբաթ օրվա մշակութային տոնակատարությանը, որի ժամանակտարածքի երիտասարդները ներկայացրեցին պարի, երգի իրենց կատարումները և տարածքի պատմության և մշակույթի ցուցահանդես: «Այն փայլում է զարդի պես, և այն այս երկրի այս տարածաշրջանի զարդն է»:

Քուեթզալթենանգո Գվատեմալա Տաճարը Եկեղեցու 136-րդ տաճարն է աշխարհում և հինգերորդը Կենտրոնական Ամերիկայում: Այս տաճարը կծառայի մոտ 60000 Վերջին Օրերի Սրբերի:

Եկեղեցին գցում է Բրազիլիայում յոթերորդ տաճարի հիմքը

2011թ. նոյեմբերի 15-ին, Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը նախագահեց Բրազիլիայում Եկեղեցու յոթերորդ տաճարի՝ Ֆորթալեզա Բրազիլիա տաճարի շինարարության բացման արարողությունը:

«Այս տաճարը կլինի հույսի, լույսի և առ Աստված հավատքի աղբյուր բոլոր նրանց համար, ովքեր գալիս ու քայլում են այստեղ և այս տարածքում», - ասաց Երեց Բեդնարը: «Այս քաղաքը միշտ ավելի լավը կլինի և կտարբերվի մյուսներից, քանի որ այստեղ տաճար է կառուցվելու»:

Տաճարը կկառուցվի Ավենիդա Սանտոս Դումոնթում՝ Ֆորտալեզա Սիարա Բրազիլիայում: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հայտարարեց Ֆորտալեզա Բրազիլիա Տաճարի կառուցման մասին 2009թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի ժամանակ: ■

Պուերտո Ռիկոյում կայացած համերգը գրավում է հազարավորների

2011թ. դեկտեմբերի 18-ին Պուերտո Ռիկոյի հինգ ցցերի անդամներ մասնակցեցին Սուրբ Ծննդյան համերգին, որը տեղի ունեցավ Կագուաս քաղաքի Պասեո դե լաս Արտեսում: Եկեղեցու մոտավորապես 85 անդամներ ելույթ ունեցան և մոտ 2500 հանդիսատես մասնակցեց:

Երիտասարդ չափահասների նոր կենտրոնը թվով երրորդն է Աֆրիկայում

2011թ. նոյեմբերի 4-ին Հարավային Աֆրիկայի Սովետո Սաութ ցիցը անցկացրեց իր առաջին միջոցառումը նոր շենքում, որը պետք է օգտագործվի բացառապես որպես երիտասարդ չափահասների կենտրոն:

Եվրոպայում կան ավելի քան 140 կենտրոններ, մի քանի կենտրոններ ցրված են Միացյալ Նահանգներով մեկ: Սովետոյի կենտրոնը Աֆրիկայում երրորդն է: Մնացածները գտնվում են Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում և Զիմբաբվեյում:

Յուրահատուկ մոտեցումը հարցեր է հուշում

Նիժնի Նովգորոդում՝ Ռուսաստան, 2011թ. հոկտեմբերի 9-ի միսիոներական միջոցառումը սկսվեց «Հարցեր Աստծուն» թղթագլանով:

Մի քանի ժամերի ընթացքում ավելի քան 150 մարդ կանգ առան ծանրաբեռնված փողոցում դրված երկու սեղանների մոտ, վերցրեցին գրիչներն ու գրեցին իրենց հարցերը: Ընդհանուր առմամբ 84 հարց գրվեց թղթագլանի վրա: Շատ մարդիկ ցանկություն հայտնեցին պատասխան ստանալ ներկա գտնվող միսիոներներից:

Այս և այլ պատմությունների մասին ավելին կարդալու համար, այցելեք news.lds.org կայքէջը: ■

Անհրաժեշտ կողմնացույց

Լիահոնան այս կյանքի իմ փարոսն է: Դրա հետ ես երբեք չեմ կորչի: Ես կարծում եմ, որ յուրաքանչյուր անձ, ով կարդում է Եկեղեցու ամսագրերը, կարող է գտնել հենց այն, ինչի կարիքը նա ունի: Ես Երեխաների Խմբի Նախագահն եմ, և ես տեսնում եմ, որ երեխաները սիրում են ամսագրում կարդալ իրենց նման երեխաների պատմությունները: *Լիահոնան* շատ անհրաժեշտ կողմնացույց է մեր կյանքում. այն օգնում է մեզ խուսափել Սատանայի ծուղակներից:

Յանինա Իվանովնա
Դավիդենկո, Ուկրաինա

Փորձառությունները հանգստություն են հաղորդում

Լիահոնան ինձ շատ է օգնել իր ուղերձների և հոդվածների միջոցով: Մեր անհանգիստ կյանքում ես հաճախ կանգ եմ առնում օրվա ընթացքում և ամսագրից կարդում եմ մի հոդված, որը պատմում է մյուս անդամների կյանքի փորձառությունների մասին: Այս հոդվածները միշտ օգնում են ինձ գտնել որոշ հոգևոր հանգստություն և նորացնում են իմ ընտանիքի հետ միասին Աստծո և Հիսուս Քրիստոսի ներկայություն վերադառնալու իմ ցանկությունը:



Խոահո Կարլոս, Բրազիլիա

Խնդրում ենք ուղարկել ձեր կարծիքները և առաջարկությունները հետևյալ հասցեով. liahona@ldschurch.org. Խմբագրման արդյունքում նյութերի ծավալը կարող է կրճատվել և բովանդակությունը պարզեցվել: ■

ՄՏՔԵՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԻ ՀԱՄԱՐ

Այս համարը պարունակում է հոդվածներ և միջոցառումներ, որոնք կարող են օգտագործվել ընտանեկան երեկոյի համար: Սիա երկու օրինակ:

«Սեմինարիայի օրհնությունները», էջ 20. Նախորոք կարդացեք հոդվածը և որոշեք, թե ինչպես լավագույնս կարելի է կիրառել ուղերձը ձեր ընտանիքում: Եթե դուք սեմինարիայի տարիքի դեռահաս երեխաներ ունեք, սկսեք նրանց հարցնելով, թե ինչու է սեմինարիան կարևոր նրանց համար: Այնուհետև կարդացեք «Ստանալով խոստացված օրհնությունները» բաժինը: Քաջալերեք փոքր երեխաներին պատրաստվել սեմինարիա հաճախելուն, երբ մեծանան: Եթե դուք չունեք սեմինարիայի տարիքի պատանիներ, դուք կարող եք կարդալ հոդվածը և այնուհետև քննարկել սեմինարիայի կարևորությունը այսօրվա երիտասարդության համար:

«Բոլորը ճանաչում են Բլեքին», էջ 42: Որպես բացող օրհներգ կարող եք երգել «Գործիր շիտակ» (*Hymns*, no. 237): Կարդացեք կամ պատմեք Բլեքի պատմությունը: Խնդրեք ընտանիքի անդամներին կիսվել իրենց փորձառությամբ, երբ նրանք պետք է դժվար ընտրություն կատարեին տարբեր ճանապարհների միջև, և թե ինչ հետևանքներ ունեցան իրենց որոշման արդյունքում: Ավարտեք, կարդալով մի հատված Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի ելույթից: ■

Պարզ, հանդարտ ու անմոռանալի

Դա մի անմոռանալի ընտանեկան տնային երեկո էր մեր երկու փոքրիկ դուստրերի՝ 6 տարեկան Անժելիկայի և 4 տարեկան Բեթանիի հետ: Իմ ամուսինն ու ես ընկանք մեր աթոռների վրա՝ հոգնած և չիմանալով, թե որտեղից սկսենք: Ուստի, մեր աղջիկները օգտվեցին ընտանեկան երեկոն վարելու հնարավորությունից և մեզ յուրաքանչյուրիս հանձնարարություններ տվեցին: Իմ ամուսինը պետք է վարեր երեկոն, Բեթանին՝ վարեր երաժշտությունը, ես՝ կազմակերպեի խաղը, իսկ Անժելիկան՝ դաս մատուցեր:

Բեթանին ընտրեց «Ուզում եմ տեսնել տաճարը» (*Children's Songbook*, 95) օրհներգը, և մենք միասին երգեցինք այն: Հայրիկն ասաց բացիչ աղոթքը: Այնուհետև Անժելիկան վերցրեց ամենաթարմ *Լիահոնան* և ընտրեց մի հոդված երեխաների բաժնից: Նա դպրոցում կարդալ է սովորում, ուստի նա մեզ համար կարդաց հոդվածը: Մեր տանը հանդարտ զգացողություն էր տիրում: Հոգին վկայեց, որ այն, ինչ նա կարդում էր, ճիշտ էր:

Մենք ինչ-որ խաղեր խաղացինք միասին, և ես ասացի փակիչ աղոթքը: Մինչ ես աղոթում էի, ես անդադար շնորհակալություն էի հայտնում Երկնային Հորը Իր Հոգու և սիրո համար, և նաև այս փոքրիկ հոգիներով մեր տունը օրհնելու համար: Իմ ամուսինն ու ես գիտենք, որ մեր պարտավորությունն է հոգալ նրանց համար և սովորեցնել նրանց ավետարանը: Ընտանեկան տնային երեկո անցկացնելը այդ պարտավորության մի մասն է կազմում: ■

Սիլվի Պուսսեն, Ռեյունիոն

Եպիսկոպոս
Ռիչարդ Ս. Էդգլի
Նախագահող Եպիսկոպոսության
Առաջին Խորհրդական

ՀՈՒՅՍ ՔԱՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ես հանդիպել եմ մարդկանց, ովքեր կորցրել էին իրենց հույսը: Ապաշխարությունը, նրանց կարծիքով, նրանց չէր հասնի, իսկ ներումը անհնար էր թվում նրանց: Նման մարդիկ չեն հասկանում Քավության մաքրող զորությունը: Կամ, եթե հասկանում են, չեն անձնականացնում Գեթսեմանում և խաչի վրա Հիսուս Քրիստոսի տառապանքների նշանակությունը: Բոլորիս համար մեր կյանքը մաքրելու հույսը կորցնելը նշանակում է մերժել մեզ համար Նրա տառապանքների խորությունը, զորությունը և աստիճանը:

Հույսը պետք է հիմնվի ոչ միայն գիտելիքի և վկայության, այլ նաև Քավության անձնականացման վրա:

Մի քանի տարի առաջ ես մի հանձնարարություն ունեի: Ես պետք է հարցազրույց անցկացնեի 21-ամյա մի տղամարդու հետ՝ պարզելու համար միսիայում ծառայելու նրա արժանավորությունը: Բարձրագույն Իշխանությունները սովորաբար հարցազրույց չեն անցկացնում ապագա միսիոներների հետ: Այնպես որ, դա անսովոր էր: Կարդալով տեղեկությունը, որը պետք է իմանայի հարցազրույցը անցկացնելու համար, սիրտս ցավեց: Այդ տղան կատարել էր լուրջ մեղսագործությունները: Ես զարմանում էի, թե ինչու ինձ խնդրեցին այցելել մեկին, որը նման անցյալ ուներ, իմանալով, որ, ամենայն հավանականությամբ, ես չէի երաշխավորի նրան միսիոներական աշխատանքի համար:

Համաժողովի շաբաթ օրվա երեկոյան նիստից հետո, ես վերադարձա նախագահի գրասենյակ հարցազրույցի համար: Երբ ես սպասում էի, մի գեղեցիկ երիտասարդ հիանալի արտաքինով ներս մտավ: Ես մտածում էի, թե ինչպես ներողություն խնդրեմ, քանի որ ակհայտ էր, որ այդ երիտասարդը ցանկանում էր խոսել ինձ հետ, իսկ ես հանդիպում ունեի այն տղայի հետ, որը մեծ խնդիրներ ուներ: Նա էր այդ երիտասարդը, որին ես սպասում էի:

Գրասենյակում, որտեղ միայն մենք էինք, ես միայն մեկ հարց տվեցի. «Ինչո՞ւ եմ ես հարցազրույց անցկացնում քեզ հետ»:

Նա պատմեց իր անցյալը: Երբ վերջացրեց, սկսեց բացատրել, թե ինչպիսի քայլերի և անձնական տառապանքների միջով է անցել: Նա խոսեց Քավության և Քավության անսահման զորության մասին: Նա բերեց իր վկայությունը և արտահայտեց իր սերը Փրկչի հանդեպ: Այնուհետև նա ասաց. «Ես հավատում եմ, որ Փրկչի անձնական տառապանքները Գեթսեմանում և Նրա զոհաբերությունը խաչի վրա բավական են, որպեսզի փրկեն ինձ նման մարդուն»:

Հուզված նրա խոնարհությամբ և հոգու ազդեցության ներքո, ես ասացի. «Ես պատրաստվում եմ երաշխավորել քեզ որպես Հիսուս Քրիստոսի ներկայացուցիչ»: Ապա ես ասացի. «Ես միայն մեկ բան եմ խնդրելու քեզ: Ես ուզում եմ, որ դու լինես ողջ Եկեղեցու լավագույն միսիոները: Միայն դա»:

Երեք կամ չորս ամիս անց Քույր Էդգլին և ես ելույթ էինք ունենում միսիոներների ուսուցման կենտրոնում: Հավաքի վերջում ես հանդիպեցի միսիոներների հետ, որտեղ տեսա ծանոթ դեմքով մի երիտասարդի:

Նա հարցրեց. «Դուք հիշո՞ւմ եք ինձ»:

Մի փոքր ամաչելով, ես ասացի. «Կներեք: Ես գիտեմ, որ պետք է ճանաչեմ, սակայն չեմ հիշում»:

Նա ասաց. «Թույլ տվեք ասել, թե ով եմ ես: Ես լավագույն միսիոներն եմ միսիոներների ուսուցման կենտրոնում»: Եվ ես հավատացի նրան:

Այդ երիտասարդ տղամարդու հույսը հիմնված էր ոչ միայն Քավության գիտելիքի և վկայության վրա, այլ նաև այդ պարգևը անձնականացնելու հնարավորության վրա: Նա հասկացել էր, որ դա նրա համար էր՝ անձնապես: Նա գիտեր, թե ինչպիսին է Քավության զորությունը և դրա տված հույսը, երբ ամեն-ինչ, կարծես, կորցված է կամ անհույս: ■

Բրիգամ Յանգ Համալսարանում 2008թ. նոյեմբերի 4-ին տրված ելույթից: Անգլերեն լեզվով ամբողջական տեքստը կարող եք գտնել speeches.byu.edu կայքում:

Այս տարի *Լիահոնա* ամսագրի շատ համարներ կպարունակեն Մորմոնի Գրքի կերպարների հավաքածուներ: Որպեսզի կարողանաք դրանք հեշտությամբ օգտագործել, կտրատեք և սոսնձեք կամ կպչուն ժապավեն օգտագործեք ստվարաթղթի, թղթե փոքր տոպրակների կամ փայտիկների վրա դրանք կպցնելու համար: Ամեն հավաքածուն պահեք առանձին ծրարի կամ տոպրակի մեջ, որի մեջ դրեք նաև քառակուսին, որի վրա նշվում է սուրբ գրության պատմությունը, որում ընդգրկված են այդ կերպարները:





Ալմա



Ամուղեկ

Զիզրոմ

Ալմայի և Ամուղեկի միսիան Ամմոնիայում

Ալմա 8–14

ՆԿԱՐԵՐԸ: ԵԼԵՑ Մ. ԿԱՅՑԵՏՅԵՆԻ-ԿՈՂՄԻՑ

«Դուք և ես թուլության պահին կարող ենք գոչել. «Ոչ ոք չի հասկանում: Ոչ ոք չգիտի», - գրում է Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից: «Ոչ մի մարդկային արարած հավանաբար չգիտի: Սակայն Աստծո Որդին կատարելապես գիտի և հասկանում է, քանզի Նա զգացել ու տարել է մեր բեռները նախքան մեր իսկ տանելը: Եվ քանի որ Նա վճարել է կատարյալ գինը և տարել է այդ բեռը, Նա ունի կատարյալ կարեկցանք և կարող է մեկնել մեզ Իր ողորմած ձեռքը մեր կյանքի բազմաթիվ իրադրություններում: Նա կարող է հասնել, դիպչել, պաշտպանել, բառացիորեն վազել դեպի մեզ և ամրացնել մեզ»: Տես Քավությունը և մահկանացու ճամփորդությունը, էջ 12:

ARMENIAN

4 021048420 1 0